Hnowt'iwnk' hayreneac'i gawarin

ašxatowt'iwn Aristakês Vardapeti Sedrakean, miabanic' srboy êjmiacni

Sedrakean, Aristakes

urn:nbn:de:hbz:5:1-9845

Gaussen 3.557

Ф 3557

ՀՆՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ի ԳԱՀԱՌԻՆ

Երնջակոյ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԵԴՐԱԿԵԱՆ

ՄԻԱԲԱՆԻՑ ՍՐԲ ՈՅԷՋՄԻԱԾՆԻ



Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԻԱ—1872

3557

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՆՑ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հայրենեաց հնութիւնքն այսօրուան օրս հայրենասէր որդւոց մեծագոյն մասին անձկակարօտ հետաքրքրութիւնն զարթուցած են։ Եւ յիրաւի ի՞նչ կայ երկրի վերայ հասկացող սրտի համար առաւել փարելի և նուիրական քան հայրենիք, և ի՞նչ կարող է նորա դաժան վիրաց ու բազմադարեան մղկտացուցիչ խոցերու հանդէպ աւելի զգալի թռիլ, եթէ ոչ սիրո՞ւն հայրենեաց պանծալի կամ ողբալի հնութեանց նշխարեալ մնացորդք։ Մեր հայրենիքն վշտակոծ հայաստանն լինելով, թէպէտ և մերթ ընդ մերթ յերևան կհանէ իւր ծոցէն այնպիսի յիշատակարաններ՝ որոց վերայ դրոշմած կտեսնենք իւր արիասիրտ որդւոց կորովաբազուկ քաջագործութիւնները,

դիւցազնական սխրագործութիւնները, Հայրենասիրական և ազատասիրական անձնանուիրութիւնները, փութաջան և մեծագործ աշխարհշինութիւնները, և Առաքելական Ս. Եկեղեցւոյ կարգաց և կրօնի անաղօտ և անսայթաք պահպանութիւնը. սակայն շատ անգամ այն է՝ որ հնախոյզ աչքերն արտասուք քամելով պիտի նշմարեն այն գեղջունն ու քարերն՝ ոյք ներկուել ոռոգուել են բիւր անգամ Մէհրուժանեան, Վասակեան, Սարգսեան չարահոգի հայրենանենգ դաւաճանութեամբ և մատնութեամբ միլիոնաւոր ողորմելեաց թափուած արեան գետերով, այն շերիմներն, ու մահարձաններն՝ որոց մէջ կհանգչին անհեռատեսութեան և եսականութեան չար նախանձուն զոհ գնացած հայրենաշէն և աշխարհի օգտակար հոյակապ անձանց աճիւններն, այն կիսակործան շէնքերն, և դժուարանշմար աւերակներն՝ որոց տեսարք և բնակիչք, է՞ որ ի դառն գերութիւն վարեալ, է՞ որ սովու, տան-

ջանաց, և լեռնաղօղ խստամբերութեան անխայթելի կրակին մատնուած, և է որ վայրենամիտ վայրագասուն թշնամւոյ արիւնարբու սրոյն ճարակ փնացած, թողել են միայն տխուր աւերակաց կոյտներ. այն փառաւոր եկեղեցեաց կանգուն ու կործան շէնքերն ու անթիւ նշխարներն, որոց կործանումն է բերել աշխարհին հետ միասին ոչ այնքան օտար ազգաց յարձակմունքը և անդուլ արշաւանքը, որչափ ընդ ժամանակս ժամանակս համարիւն համազգի եղբարց մէջ ճարակուած և բորբոքուած նորատիրութիւնն, մոլեռանդութիւնն, ընչաքաղցութիւնն, աւելութիւնն, եսակամութիւնն, ապօրինի քենախնդրութիւնն, և այն ամենայն չարիք, զորս դիւրաւ կծքդանի ազիտութիւնն:

Նութիւնք ստորագրել և ժողովել, հնախօս պատմութեան թերութիւնն և ամբողջութիւնն նկատել ու մթութեանց վերայ լոյս սփռել ասել է. ուստի և այն ազգի հին պատմութիւնն՝ որ կարօտ է

հնութեան վկայութիւնն մօտն ունենալ՝ բայց չունի, չէ կարող այնքան յարգ և վարկ վաստակել։

Հնութեանց նշանակութիւնն ժամանակէ ի վեր յարգի եղած է մեր ուսումնական ազգայնոց մօտ. և ամանք իսկ ներկայ դարուս աշխատասէր անձինքներէն այդ օրինակ գովանի ծառայութիւնն ցոյց տուած են ազգին և ազգային գրականութեանն. իսկ Եւրոպա՝ որ մեզմէ շատ և շատ յառաջ զգացած է նոցա ծանրակշիռ յարգն և նշանաւորութիւնն, մեզմէ նմանապէս և շատ յառաջ բազմաթիւ արեւելախոյզ ուսեալ ճանապարհորդներ և հնասէր անձինք մեծագումար զոհիւք զրկած ու հաւաքած ունի արեւելից հնութիւնքն մանաւանդ մերս Հայաստանի՝ որ նորա աչքը կհամարուի, և այսօր իւր յայտ եկած ճոխ հնութեանց անսպառ գանձիւք զարմացրել է զնա։ Եյժմ յիշատակեալ օտարազգի և Հայազգի բնախոյզ, բանասէր, հնասէր, և տոհմագիր

անձանց քրտամբք մեր մայր աշխարհի շատ գաւառաց և նահանգաց հնութիւնք և ազգի ազգի տեղեկութիւնները ապահովեաց են ժամանակի կորստեան վտանգէն, բայց դեռ քանի կողմանք կան զրկուած այդ բաղդէն, որոց հետ և Նախիջևանի գաւառը, որք մինչև այսօր այցելուի մի չը հանդիպեցան, որոնք կարող լինէին մերկանալ իւրեանց ցարդ խնամօք պահած պատմական հազարաւոր հնութիւններին։

Յիշատակելոցդ վերայ իբրև շատից հնութեանց ականատես կհրաւիրեմ անձանձիր աշխատասէր համազգեացս ուշադրութիւն. իսկ ես այս աշխատութեամբն ինչպէս և վերնագիրն ցոյց կտայ, պիտի ջանամ երևան հանել միայն Ներնջակ գաւառի հնութիւններն, որ ոչ սակաւ նշանաւոր տեղ բռնած ունէր ժամանակին մեր պատմութեան մէջ։ Ցաւիմք միայն, որ չյաջողեցաւ մեզ ըստ մեր բաղձանաց կցել սորա հետ պէտք եղածին չափ տոհ-

մագրական և բանասիրական տեղեկութիւն-
ները այս գաւառի սակաւաթիւ գիւղորէ-
ից բնիկ գաղթական բնակչաց վերայ։

Ընդարձակեալ Վարդապետ Սերբուհեանց
հրամամբ Ս. Էջմիածնէ.

Յ30 Մայիսի 1870 թ.
ՅԱրարատեան։

ԵՐՆՋԱԿ ԳԱՒԱՌ.

Իւր Հայաստանի աշխարհագրական բաժանման համեմատ, Երնջակ գաւառ մեծին Հայոց հնգետասան նահանգաց տասներորդին՝ այն է Սիւնեաց տասներկու գաւառներէն մէկն է *):

Սահմանք.

Սահմանք գաւառիս են. յարևելից Ծղուկ գաւառ (Սիսիան), յարևմտից և ի հիւսիսոյ գետն Նախիջևանի, և ի հարաւոյ՝ Գողթն գաւառ:

(*) Կարապետ Վ. Շահնազարեան իններորդ ըստ կարգի կդնէ զՍիւնիս. տես Նորա լոյս ընծա. Օրպելեան Պատմ. երես 5:

Գէպ.

Այս գաւառն մի միայն գետ ունի համանուն, որ սկիզբն առնելով Ծղկեաց լեռներէն, Ջուղայի մօտ կխառնուի Երասխին։

Լեռներ.

Լեռներն են սոքա. ի սահմանակցութեան Ծղուկ գաւառի՝ Ծղկեաց բարձրաբերձ լերինքը. Շահկերտի դիմաց՝ Մեղրաքար (Բալլը-զայա) կոչեցեալն. յարևմտից նոյն աւանի՝ Երինջակաբերդ, որ նշանաւոր է պատմութեան մէջ ըստ բազմադիմի անցից. ի հարաւոյ Բռնայի, և ի սահմանակցութեան նորուն՝ Իլան-դաղը, (Օձալեռն), իսահմանակցութեան Գողթն գաւառի՝ Դարուզաղ կոչուած լեռներն։

Գետ.

Երինջակ գաւառը Նախիջևանի մասն լինելով, նորա նման իւր արգասաւոր ծոցէն յառաջ կբերէ և կպարգևէ ժիր մշակին տեսակ տեսակ առատ բարիքներ, բաց

ի քանի մի լեռնային մասերէն, որոց ցուրտ կլիմայն ներհակ է ջերմով աճեցող բերրոց։ Երկրագործութիւն տեղւոյս բաւական մշակուած լինելով կատանայ առատ և մաքուր տեսակի ցորեան, գարի, բամբակ, հաճար, քնջիթ, կտաւհատ, սեխ, ձմերուկ, վարունգ և լն. Ծառապտուղներէն կգտնուի ընտիր ծիրան, տամոն, սալոր, դեղձ, տանձ, խնձոր, ընկոյզ, սերկևիլ, կաղին, և լն. Ապրակունիսի մէջ կը նշմարուին նաև պտղատու նշենի, թզենի, և նրռենենի։ Այգիք շատ կան, միայն մշակելոյ եղանակն ամեն տեղ չգիտեն լաւապէս, մանաւանդ զինի պատրաստելն։ Հայաստանի դաշտաց և լերանց մէջ գտնուած ընտանի և վայրենի անասնոց, գազանաց, թռչնոց, և սողնոց գրեթէ տեսակներն կը գտնուին և այստեղ։

Հանք.

Այս գաւառիս մէջ մինչև ցայժմ յայտ եկած հանքերն են ոսկի, արծաթ, պղինձ, կիր, գիպս (գաճ), կայծքար, ջրաղացա-

քար, ածուխ, և զիլ. ուստի կէտնուին շատ տեղեր և տեսակ տեսակ հանքային ջրեր։

Գ-ի-գ-ք-ա-յ։

Երնջակայ մէջ գտնուած գիւղերայ.քն են. Ապրակունիս, Գռնայ, Բանանեար, Սալթաղ, Սորաշէն, Խոշկաշէն, Գեաղ, Փորադաշտ, Շ-օռութ, Խանաղա, Գ-ազանչի, Ներքին, Մէջեն և Վ-երին Ենզուբներ, Թէյվազ, Արաւիս, Միլաւ, Խաչափարախ, Գ-զլաճա, Ջ-ամալդին, Ջ-ուզայ, Արազին, և Կզնուտ։ Իբրև յիշատակութեան անարժան կթողումք մեք Արաւիս և Միլաւ փոքրիկ և աննշան գիւղերը, իսկ միւսոց վերայ կսկսեմք խօսել կարգաւ, բայց ամենէն յառաջ Ապրակունիսի մէջ գտնուած նշանաւոր մենաստանին վերայ, որ յանուն Ս. Կարապետին։

ՎԱՆՔ Ս. ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵՐՆՋԱԿՈՒ.

Հայաստանի հռչակաւոր վանքերէն մին է և այս, յանուն Ս. Կարապետի, Ապրակունիս գիւղի մէջ, Ատիրջևան քա-

զաքէն չորս ժամու ձանապարհաւ կամ չորս մղոնաւ հեռի։

Այս մենաստանի հիմնարկութեան թըւականն ազգային պատմագիրներէն չկարացաք գտնել որչափ և հետամուտ եղաք. զուցէ միայն այնպիսի ձեռագիր յիշատակարանների մէջ գտնուի, զորս մեք չկարացաք տեսնել. բայց հաւանած եմք ասել, որ այս մենաստանը պիտի շինուած լինի մեռասաներրորդ դարու վերջերը. ըստ որում պատմութեան մէջ կգտնեմք սորա նորոգուիլն չորեքտասաններրորդ դարու մէջ այսինքն յամի 1381 ընդ ձեռն Մաղաքեայ վարդապետի Գրիմեցւոյ. իսկ հընոց ամուր շինութիւնները և վանօրէից վերայ գործ դրած ճարտարապետական ընտիր և կիրթ ճաշակն ի նկատի ունելով, չէ կարելի չկարծել թէ բաւական ժամանակ անցած պիտի լինի շինութեան վերայ, որ կարօտած է նորոգութեան։ Համշեան մեծարդիւն ՝. Միքայէլի պատմութեան մէջ յամի 1330, Ունիթոռաց

ծագման պատմութեան առթիւ կյիշուի և Գրիգոր Վարդապետ ոմն Ամրակունեցի իբր համախոհ նոցին. և Ամրակունեցի բառովն պէտք է հասկանալ այս մենաստանի մէջ եղող վարդապետ. վասն զի ցարդ ևս վանքն սովորաբար "Ամրակունեաց վանք", կըկոչուի, և մէջի գտնուած կրօնաւորը կամ վարդապետը "Ամրակունեաց վարդապետ": Եթէ Ունիթորաց պատմութիւնն չլինէր, գուցէ դեռ շատ անագան յիշուէր պատմութեան մէջ այս մենաստանը, ինչպէս նաև շատերը՝ Շահխաթունեանց բազմարդիւն Յովհաննէս Եպիսկոպոսն, ինչպէս և ոմանք հաւանած են ասել իբր թէ առաջին մենաստանն Երնջակայ եղած է Երնջակ ամրոցի մօտ յանուն Ս. Գէորգայ. իսկ "Եսայի վարդապետ իսպառ լքեալ զայն՝ գայ յայս տեղի և նորոգ հիմնարկութեամբ տայ կառուցանել փառացի տաճար ի կոփածոյ քարանց յամին 1551, յանուն սրբոյն Յովհաննու Կարապետի", (տես ԸՍ-

տորագ. Կաթ. Էջմ. և հինգ գաւառացն Արարատայ. Աշխ. Յովհ. Եպիսկոպոսի Հայաստանեանց. հատ. Բ. եր. 319)։ Այս կարծիքն չէ և իմը. և ես ընդհակառակն կըպնդեմ, որ յիշատակեալ Ս. Գէորգ անուն մենաստանն (որոյ համար տե՛ս ի ներքոյ) կարող էր վանք Երնջակու համարուիլ քանի՞ որ համանուն գաւառին մէջն է, բայց ոչ աւելի հին և նշանաւոր քան այս ներկայս, որ կկոչուի յանուն Ս. Կարապետին. ընդհակառակն դեռ Ս. Գէորգ անապատի անունն պատմութեան մէջ չտեսած, և դեռ չկարդացած որ Եսայի վարդապետն է շինած վերջինս յանուն Ս. Կարապետին, կգտնեմք զայն չորեքտասաներորդ դարու մէջ նորոգուած ընդ ձեռն Մաղաքեայի Գ. Ջրիմեցւոյ, և այնուհետև իրրև ժամանակի երևելի մենաստաններէն մին երևելի անձանց բնակարան եղած. մանաւանդ որ Եսայի վարդապետէն բաւական յառաջ ծագած Լատինա-Հայ Ունիթոռաց շփոթութեանց

ժամանակը այստեղ "Ապրակունիսի մեռնաստանիս,, մէջ զօրացած և զինուորուած կռեանեմք Ալոանեցին, Տաթևացին, և այլք, և ոչ ուրիշ տեղ։ Նթէ արդարեւ յանուն Ս. Գէորգայ եղած վանքն՝ շէն էր այս միջոցներին մինչև ցՆասայի, անշուշտ պատմութեան մէջ պիտի տեսնէինք նորա առաջնորդաց կամ կրօնաւորաց անուններն և արարքն։

Յիրաւի երկրի բնիկ բնակչաց աւանդութիւնն ցարդ ևս կենդանի մնացած է, որ այս մենաստանն փոխադրուած ի Համարէ այս տեղ, բայց միևնոյն աւանդութիւնն ցոյց կտայ և առաջին տեղն՝ "Հին վանքատեղ,, կոչելով զայն՝ որ կանկանի մենաստանիս հիւսիսակողմն գլուխ քառորդ վերստ հեռի անտի փոքրիկ բլրակի մի վերայ, որոյ վերայ դեռ կան նաև նշմարելի արդարև հետք հիմանց շինուածոց. և շատ հաւանական է՝ որ ժամանակին հանդամանքը կամ դրից անյարմարութիւնն տեղափոխութեան տեղիք տուած լինին։ Ինչ-

պէս մենաստանիս գլխով անցած անցքերէն շատ քիչը հասուցել է մեզ պատմութիւնն, նմանապէս և նորա Առաջնորդաց կամ Վանահարց կամ գոնէ ի նմա բնակուած նշանաւոր անձանց սակաւուց ոմանց միայն անուններն։

Ղրեքասանեորդ դարու մէջ այսինքն յամի 1376 կերևի Առաջնորդ վանիցս Սարգիս վարդապետ ոմն. որոյ օրովն կրտսնեմք բնակուած այս մենաստանի մէջ Մալաքիա վարդապետ Վրիմեցին նորոգող վանիցն, և Յովհաննէս Որոտնեցի Պատիկ մականուանեալն, որդի Խանեայ իշխանի, աշակերտ Նայեայ վարժապետի Աչեցւոյ, որ ձգելով Տաթևի վանքն, ու հետն առնելով շատ մի կրօնաւորներ կգայ այս տեղ, և աջակցեալ Սարգիս ու Մաղաքիա վարդապետաց՝ կաշխատեն ողորմելի ժողովուրդն պաշտպանել բանսարկուի չարութեան գործիք — Լատինահայ Ունիթոռաց բորբոքած ազգաւեր հրդեհէն։ Զարմանք բան. Մ. Միքայէլ Զամչեան

ինչպէս չխղճահարի ճշմարտութեան դէմ մեղանչելով ջանալ ցոյց տալ կամ հաւատացնել որ Որոտնեցին, Տաթեւացին, Սարգիս և Մաղաքիա վարդապետք ևս համամիտ և համակամ էին Ունիթոռաց խորհրդոցն և վարդապետութեանցն. ըստ իս՝ եթէ սեաւ գոյնն ՝ռոմայ գահին կամ ՝. Միքայէլին ախորժելի գոյն մի լինէր, անկարծիք պատմութեան մէջ քսան տող, և իւրաքանչիւր տեղն ամբողջ գլուխներ պիտի կարդէր ու մրէր մածովի սև լինելն ապացուցանելոյ համար։

Մաղաքիայի վանքը նորոգելէն զկնի, Յովհան Սախիկ Որոտնեցի կնատի Առաջնորդ վանից, և ժողովելով աշակերտներ կուսուցանէ ինքնին. իսկ Սարգիս վարդապետ կկարգուի Առաջնորդ Աստապատի վանուցն, և Մաղաքիա վարդապետ Փոքրադաշտ գիւղն եղած միջոցին յանկարծամահ կմեռանի, որոյ համար Ղամչեանն կը գրէ, "Եւ համբաւ թէ Ունիթօռք դեղ եալ իցեն զնա,, (հատ. Գ. գիրք Ա.

գլ. Գ. եր. 449), իբր թէ շատ հեռի էր ի նոցունց արարչի ոճիր մի։

Յամի 1388 կը մեռանի և Յովհան Ս-բրոանեցի և կթաղուի Մաղաքիայի մօտ, որոց գերեզմանաց ուր լինելն պիտի տեսանեմք ներքևը. Որոանեցւոյ տեղն կյաջորդէ նորա աշակերտ Գրիգոր Տաթևացին, որ իւր վարդապետի շաւղացն հետևելով կժողովէ ուխտին մէջ շատ աշակերտներ և կուսուցանէ. որ և յետոյ ժամանակի վերդովմանց երեսէն Սատթէի վանքը քաշուելով կմնայ անդ երկար ժամանակ, ուր և կմեռանի; ուստի և կոչուեցաւ Տաթեւացի։

Յետ Գրիգորի Տաթևացւոյ մենաստանիս առաջնորդաց յաջորդութեան կարգը և անուանքը կծածկուին անյայտութեան մէջ մինչև ցամն 1654, յորում կերևի Նայի վարդապետ Մեղրեցի որ կնորոգէ զաւանարն, գործակցութեամբ Ղազար վարդապետի ուրումն։ Յետ Նայեայ յաջորդողների անուանքն դարձեալ անյայտ

կՇուան, կերևի միայն յամի 1738 և ազգաց-
կան ՈՒՆԶԵՆ Մկրտիչ շուշտակ Եպիս-
կոպոս, եղբայր Պ. ազարու Ջ. ահկեցւոյ։
Ապա կուգան, Կարապետ վարդապետ
Նախիջևանցի, յետ Կարապետի Մատ-
թէոս Եպիսկոպոս Նախիջևանցի, յետ
Մատթէոսի Փիլիպպոս եպիսկոպոս, յետ
նորա Կարապետ վարդապետ Բ. և յետ
նորա Երեմիա վարդապետ Մելիք-Թան-
գեանց Սիւնեցի։ Սոցա՝ յորում ամի և մին-
չեւ ցեռիբ պաշտօն վարելն, նոյնպէս ի նչ
գործ տեսնելն չկարացաք հաւաքել բաց ի
վերջնոցն, իսկ անուանքն քանի մի հին
ու նոր կոնդակներէ և նամակներէ առինք։

Երեմիա վարդապետ դեռ ի կենդանու-
թեան Կարապետի կարգուելով Պ. անա-
հայը ուխտիս, և մինչև ցամն 1865, այն է
մինչև ցմահ վարելով պաշտօն, մեծ յարգ
և վարկ կվայելէր շրջակայ ժողովրդակա-
նաց մէջ, և իւր մեծամեծ ու գովելի վաս-
տակօքն, սրտեռանդ ծառայութեամբն,
ու ազգի ազգի շինութեամբքն, շնորհակա-

ետաց արժանի է։ Եւ թէպէտ շինուածոց մէջ չի տեսանուի բնաւ կիրթ ճաշակ, բայց որ գոնէ նա իւր կարողութեան չափ ջանացել է պայծառացնել մենաստանն, քան քանդել զայն, և եղբարց ու ազգականաց տները լցնել, խանութներ բանալ ևն., ամենայն իրաւամբ պիտի գովեսաներ առնու, և առաջ է։ Այս մենաստանի դիրքը կանկանի դիւր տեղ մի, և իւր չորս կողմը նայողի աչքի առաջ կբերէ գեղեցիկ և ծիծաղկոտ տեսարան. Հողապատ պարիսպ մի բրգաւոր կպատէ զնա. արևելեան պարսպի տակէն կանկանի մեծ առու մի, ուստի կը վազէ կանցնի մռնչալով և գղգմամբ գարնան յորդ անձրևներէն երբեմն երբեմն բարձրացած հեղեղ զայրագին։

Շինութիւն տաճարին սապաշէն, կոփածոյ քարամբք և գեղեցիկ ճարտարութեամբ. կաթուղիկէ մի բարձր և վայելուչ կերպով կանգնած ի թիւծեալ աղիւսոյ, աւելի շուք կբերէ տաճարին. ունի երկու զուռն՝ արևմտեան և միւսն հարաւային.

եղերք արևմտեանին զարդարած են ազնիւ քանդակագործութեամբ. երկայնութիւն տաճարին է 23 քայլ, և լայնութիւնն 19. թաղակապ տանիք եկեղեցւոյն կամթուղիկէիւ հանդերձ հաստատուած է չորս մեծամեծ սեանց վերայ. ունի սեղան պատարագելոյ մի միայն, և երկու աւանդատուն, որոց ամեն մէկի վերայ դարձեալ մի մի վերնատուն. աջակողմեան աւանդատան կամ խորանի մէջն էր պահուած "Օրհնանքաղը", որ միևնոյն դրսի հասարակ հողն է, բայց ծածուկ լցուած այստեղ կբաժանուէր պարգևամիտ ուխտաւորաց վերայ, իբր սպեղանի զօրեղ. ճարտար խորամանկութիւնն և շահասիրութիւնն ինչքիր առնել չի ապայ: Զախակողմեան խորանն է պահարան մասանց սրբոց. այս խորանի յատակը աղիւսասալ կազմել տալու ժամանակն հանգուցեալ Ներսիա վարդապետն տեսած է դուռն մի գաղտնարանի. ուստի անցնելով մինչև բուն սեղանոյ տակն, գտած էր բաւական ձեռագիր մատեաններ, թերևս

և ուրիշ անօթեղէններ կամ զարդեր։ Իւրաքանչիւր խորանի դրան ճակատին դըրուած է մի մի փոքրիկ գեղաքանդակ խաչքար, և իւրաքանչիւրն ի պատուանդանի խաչին ունի արձանագիր,—

Հախակողմանն է այս. "Սուրբ խաչս յիշատակ է Տէր Ազարիա Եպիսկոպոսին և Ծնողաց նորին Հաւրն Ալթունդաշին, և մաւրն Փոխաթունին յիշեցէք ի Քրիստոս. թվին ՉԼԿԳ,, . իսկ աջակողմեանն է. "Ս. Խաչս բարեխօս առ Քրիստոս Մահտեսի Պերակոսի և Ծնողաց Շահունին թվին ՌՆՕԳ,, : Երկեղեցւոյ մէջն նկարուք զարդարուած է եղել, որոյ մնացորդքն սեղանոյ տանեաց և կաթուղիկէի վերայ կարտափայլեն ոչ բոլորովին անկիրթ ձաշակ. իսկ մնացեալ տեղերն ծածկած է սալիտակաւաղ : Դաց ի յիշատակեալ արձաններն, նաև տրտաքուստ երկու խաչքարանց վերայ եղեալ կայ գրութիւն. առաջին արձանագիրն է արևմտեան որմոյ ճակատին լուսամտէն բարձր հաստատուած

խաչքարի պատուանդանի վերայ այսպէս. "Նասայի և Ղազար վարդապետ շինող. թվ. ՌՃ,,. և միևնոյն խաչի թևոց մէջ տեղը այսպէս. "թվ. ՌՃԼԷ,,: Երկրորդ խաչքարն է հիւսիսային որմոյ վերայ լուսամտէն բարձր հաստատուածը, որ ունի այս "Նասայի վարդապետ շինող. թվ. ՌՃԴ,,: . . .

Ունեցած է այս տաճարն յարևմտից կուսէ գաւիթ փոքրիկ քարամբք և թերծած աղիւսով շինեալ. այժմ միայն գաւթի կամարաց հիմունքը կամ բարձքը կը նշմարուին ջրոս տեղ. երկու բարձերի վերայ հանգուցեալ Նրեմիա վարդապետն շինել տուած է կոփածոյ քարամբք փոքրիկ զանգակատուն, որ ոչ միայն թերի մնացած է իւր մահուամբն, այլ քարերի կրանիւթ լինելուն պատճառաւ այժմ կործանման վտանգի մէջ է. ի հարաւոյ կցուած է տաճարիս մատուռ մի փոքրիկ երկարաձև յանուն Ս. Ստեփաննոսի, նոյնպէս կոփածոյ քարամբք և վայելչակերտ,

յիշատակ Հ. օռուլթեցի Խոջայ Ս. յվազին.
որոյ յիշատակագիրը ի՛նչքա՛ն մատուռն կա-
մարի երկու ծայրերին գրուած է կարմիր
գեղով այսպէս.

''Ի թուոյ ազին մեր ՝ այկի,
՝ազար հարիւր վաթսուն և երեքի.
Խոջայ Ս.յվազն գովելի,
Յոյժ բարեպաշտն ցանկալի.
Տեղեաւ գոլով Հ. օռօթեցի,
Հ. ինեաց տաճարս այս նազելի.
Յանուն Ս. Ստեփաննոսի
Նախավկային մարտիրոսի.
Ուր ,յիշատակ է միշտ կենդանի,
Որով Քրիստոս պատարագի.
Տան և բաժին իւրքն լեցին,
Եւ ծնողացն Մկրտչին և Պատարին.
Եւ կողակցին Թադիկին, և
Քեռցն Աննայուն և Փառանիկուն.
Եւ Գասիրացն և իւր տան
Էրբանեակին է Մարգարիտն,
Զոր Տէր Աստուածն ամենայնի,
Զինքն ի ցաւմանց անփորձ պահի.

Երկար կենաց յայս աշխարհի,
Պայծառ փառաց ի յաւերժի.
Ամենաս ժեծին Յովհաննէսի,
Որն օգնական միշտ լինիցի.
Եւ առաջնորդ թէ միաբանք,
Եմք յԱյվազէն շնորհակալ ,, :

Այս մատեանն Ս. Սարգիսանոսի ունի իւր տանուց վերայ հաստատուած երկոյարկ զանգակատուն. առաջին յարկն քարաշէն՝ յիշատակ Նախիջևանցի Զամաքին, որոյ արձանագիրն դրուած կայ արեւմտեան հարաւոյ սեան ճակատին այսպէս. ,, Յիշատակ է զանգակատունս Նախիջուանցի Զաքարիայի որդի պարոն Զամաքին ի ՌՈՒԹ՚ՆՕՊ թուին ,, . երկրորդ յարկն կանգնեալ յաւուրս Երեմիայ վարդապետի թրծած աղիւսով՝ յիշատակ է Շուշեցի քարեպաշտօն Կարապետ աղայի Շահմուրատեան, որ և ունի յարեւմտեան որմին զանգակատան ագուցեալ փոքրիկ մարմարիոնի վերայ իւր յիշատակագիրը:

Ս. Կոստանդ.

Տաճարի արևելակողմն քարտեզի մէջ բաւական խորհրդաւոր փորուած ջրոյ աւազան մի կայ, ուր տեղ հոսել է յառաջ աղբիւր ցուրտ ջրոյ "Ս. Կաթանք", անուանով. և ինչպէս կպատմեն, ամեն կիրակնամուտ երեկոներըմոմ կը վառէին այս տեղ. աւանդութիւն բնակչացն Ս.պրակուանեաց կասէ թէ՝ այնքան յորդ ջուր կվազէր այս սուրբ Կաթանքէն, որ մինչև անգամ Պարսիկ աւազակ խուժբերէն շրջակայ Հայ գիւղերէից բնակիչաց այս մեհնատանի մէջ ամրացած ժամանակը՝ բազմաթիւ գերդաստանաց պիտոյից բաւականութիւն կտար. և ցամաքեցաւ կասեն վատաբարոյ մարդոյ մի մեղաց պատճառաւ, որ գարշ գոլ ծով անարգած էր սորա յարգը Ս. արդավառի խառնիճաղանձ բազմութեան ժամանակը:

Երբնջակու Ս. Կարապետի այս մեհնատանը առհասարակ տեղական՝ Հայ և Մահմեական բնակչաց մէջ հռչակուած է իբ-

բեռ բուժիչ խայթուածոց օձից. երբ որ մէկը հարաւ օձէն, պէտք է գիտել որ իսկոյն կբերուի այս տաճարի դուռն։ ուր օրհնութեան ասացեալ հողէն (որոյ համար յիշած եմք) քիչ մի օձահարի բերանը ձգել տալով, և քիչ մի ջրով շաղուած խայթուածի վերան կապելով կմիամտուին բոլորովին։ Այս դէպքը քանիցս անգամ կրկնուած է իմ օրովս և տեսած եմ որ ինչպէս Հայ, նոյնպէս և Մահմետական օձահարները այնուհետև որջաւի ուրախութիւն կզգան իւրեանց մէջ։ Այսպիսի փորձերով կարելի է կշռադատել թէ՝ ներքին անդորրութիւնն սրտի որջաւի ներգործութիւն կարող է ունենալ մարմնոյ վերայ։

Մասն Ա. անէջս.

Ա. Հոպարտութիւնն ասացեալ Ս. Հնչան, արծաթեայ մեծադիր ոսկեզօծ քառաթև պահարանի մէջ. այս Ս. Հնչանն ոմանք կը համարեն լինել մասն կոնքին, որի մէջ Բրիտասոս իւր աշակերտաց ոտները լուաց.

իսկ ոմանք մասն Թաշկինակի Տեառն, տեղ-
էոյս առաջնորդ Մատթէոս Եպիսկոպո-
սի, ներկայ միջոցէս յիսուն տարուց չափ
յառաջ առ ժողովուրդն ուղղած օրհնու-
թեան թղթին մէջ վերջինն կճանաչուի,
այսպէս ասելով, "Ի դրանէ Երնջակու
Ս. Կարապետի շնորհալի տաճարէն, և Ս.
Թաշկինակէն Քրիստոսի . . . . ,, և էն. իսկ
Մանուէլ Ս. Կիւմիւշխանցի կհամարէ
լինել առաջինն։ "Հայարարիկիշ,, կոչ-
ուելոյ պատճառն կմեկնէ աւանդութիւն
բնակչաց երկրիս, և կհաստատէ նոյնն լի-
նել որ ինչ "Մարդաղաւնեաց,, սուրբ
նշան կոչուելուն, հին յիշատակարաններ-
ի մէջ։ Զահկեցւոյ "Յանկալի դրախ-
տի,, 672 երեսին՝ այս սուրբ նշանի հա-
մար կպատմուի թէ՝ երբ որ Լանկթա-
մուր կգերէ Սիւնեաց երկիրը, մի ի գերե-
լոցն Եպիսկոպոս Յովհաննէս անուն այս
սուրբ Նշանն յուսան կապած կձգէ զինքն
ի գետն և "շնորհօքն սուրբ Նշանին զը-
նայլ ի վերայ ջրոյն՝ որպէս ի ցամաքի,,

գերեվար զօրքը տեսանելով կզարհուրին և կյայտնեն՝ անկ-թամուրին, որ երդմամբք կհաւատացնէ չվնասել, միայն թէ գայ և պատմէ իրան թէ ո՞ր զօրութեամբ չբոյ վերայ անվնաս կընթանայ. և եպիսկոպոսն մօտ գալով կյայտնէ թէ՝ այս Ս. Նշանի զօրութեամբ որ ինձ հետ է. թագաւորն հրաշէց վերայ զարմացած կասէ եպիսկոպոսին, ինչ որ կուզես՝ խնդրէ և տամ. և եպիսկոպոսն ցոյց տալով մօտակայ փոքրիկ մատուռն մի՝ կասէ, խնդրեմ որ որչափ գերիք ուպարունակուին այս մատրան մէջ՝ ազատ լինին. որ և իսկոյն կկատարուի. բայց մտածնելը սուրբ Նշանի զօրութեամբ ազատնոյ թև առած լուսամուտէն կթռչին կերթան, և այսպէսով կարճ միջոցի մէջ գերիքը կվերջանան, և մատուռն չի լցուի. զօրքը ապշած ներս կմտնեն, և հասու լինելով հանգամանքին, իսկոյն ահաբեկ կը թողուն կմեկնին անտի. այսպէսով սուրբ Նշանն երկու անուն ևս կառնու- "Պարդաղաւնեաց,՝ որ մարդկանց ազատնոյ թև

պարգևելով կազատէ, և "Հազարապետը-
կին", որ հազարաւորներեր կիրկէ. Նոյն
մատուռն՝ որոյ համար կպատմուի այս հը-
րաշքը, և ուր տուրք նշանն երկար ժա-
մանակ մնացած է մինչև ցիսոխատրութիւ-
նը, կոչի այժմ "Գրիգոր վանք", և է
Ասխիջևան գաւառի Ռոնջ գիւղէն
եօթն վերստ հեռի, այլ ամայի և լը-
քեալ:

Այլ Միքայէլ Չամչեան առասպելաց
կարգը դասելով այս աւանդութիւնն, կը
գրէ. "այլ այս առասպելք չունին պէտս
քննութեան. և թէ կայցէ իսաչ այնպիսի
անուամբ, մի ոմն ի գլուղաց յօրինեալ ի-
ցէ զայսպիսի անհեթեթ պատճառ, վասն յար-
մարելոյ զնշանակութիւն անուանակոչու-
թեան նորին: Եւ դարձեալ, "Ոչ ոչն է զար-
մանալին, զի Հ. Հակոբեցին իբրև ստոյգ ինչ
ի մէջ բերէ զայս. բայց թուի թէ ոչ ինքն,
և ոչ միւս պատմողն հաւատան այնմ՝
զոր գրեն", (տես Չամ. պատ. հատ. գ.
ծանօթ. Ա. գրոց էր. 881—882):

Պատմական ապացուցութեամբ ստուգ-
ուած չէ՝ թէ երբ, և ուստի բերուած է Ս.
Ղշանս, կամ երբ փոխադրուած այս մե-
նաստանը. միայն Ջահկեցին կգրէ, որ
Թադէոսի առաքելոյ Հայաստան բերած
խաչն է։ Ա. Երջին ժամանակներս Կիւմիւշ-
խանցի Տանուէլ վարդապետան, իւր Սե-
ւանայ վանուց ստորագրութեան մէջ կ՚յի-
շէ թէ՝ Թադէոս առաքեալն Կոնքի ժաո-
րէն երեք խաչ շինելով իւր ձեռամբն բե-
րած է Հայաստան, յորոց մինն այս Ն-
րընջակու Հազարապրկիչ Ս. Ղշանը, միւսն
Սեւանայ վանուցն, և երրորդն՝ Գրիգո-
րիոպոլ քաղաքին Խրիմու։ Այս Հազա-
րապրկիչ Ս. Ղշանս ոչ միայն երկրի Հայ
բնակչաց, այլ և օտարաց և նոյն իսկ Տահ-
մեռականաց ակնածելի և նուիրական է,
և ես քանիցս տեսած եմ Տահմեռական-
ներ զոհիւք եկած յերկրպագութիւն. ա-
մեն ժամանակ կան սորա Ջերմեռանդ ուխ-
տաւորները. և երբ ձախորդութիւն կամ
մօտալուտ վտանգ կամ ցաւ պատահի ժո-

զոմբրեան և երկրի, ամենքն առհասարակ Ջերմեռանդագոյն սրտիւ կողմեն դէպ ի ս.ս, և շրջելով իւրեանց մէջ թափորական հանդիսիւ՝ կհայցեն բարեխօսութիւնն յօգնութիւն: Բաց ի այս ժամանակները, Սախիջևանի բարեպաշտ ժողովրդոց վարքի սովորութիւնն է ամեն տարի Պատաշ Աբրակէին շքեղ հանդիսիւ քաղաքը տանել:

Բ. Ել Ս. Կարապետին Յովհաննու արծ. ոսկեզօծ:

Գ. Ել Յովհաննու Ոսկեբերանի արծ. ոսկեզօծ:

Դ. Խաչ արծ. մեծագիր մասամբ Ս. Կարապետին. յինշատակ տուեալն վանից Տ. ուզայեցի Յակոբ Կաթուղիկոսէն թվ. ՌՀԵ:

Ե. Խաչ արծ. չիֆթիշի, մասամբ Գեորգոսի առաքելոյն:

Զ. Խաչ արծ. չիֆթիշի. մասամբ Ս. Կարապետին և Գեորգոսի Առաքելոյն:

Է. Խաչ արծ. մասամբ Ներսեայ Փայտի:

Ը. Խաչ արծ. մասամբ Ա. Կարապետին։

Թ. Խաչ. արծ. չիՓԹիշեք երեք անյայտ մասամբք։

Ժ. Տուփք երկու՝ մին արծ. ոսկեզօծ, միւսն փայտեայ, պարունակին զնասունա արբոց, այլ չէ յայտ թէ որոց։

Զեռագիր Մատեանի Ա. անէջս.

Զիք տարակոյս որ այս մենաստանն պիտի հարուստ գրադարան ունեցած լինի, բայց դժբաղդաբար կորցրել է ամենը մեր Հայաստանի միւս վանօրէից նման, է որ հարստահարութեանց և յափշտակութեանց և է որ ապիտութեան խաւարի թանձրանալուն պատճառաւ, որով յարգ և արժէք չունենալով դիւրաւ կարող էին ոչնչանալ. այժմու ունեցածներն միայն քանի մի հատ ձեռագիր Աստուածաշունչ և Աւետարան են դիպուածով գտնուած ինչպէս յիշած եմք, որոց մէջ նքշանաւորներն են.

Ա. Աւետարան փոքրադիր ամբողջ, պատկերազարդ, ընտիր գրչագիր գրեալ ի

մաղաղաթի ի Պ. Պօլիս ի թուին Հայոց ՌԽԳ. Յնդիս դպրէ Համրեցւոյ. ունի ի վերջն յիշատակարան գրողին և սատացողացն՝ Մարինոս կուսի "Որ եառ (ասէ) զայս ոսկեզօծ սուրբ Աւետարանս յիշատակ հոգւոց մերոց և ամենայն արեւանառաւ ազգատոհմին մերոյ՝ կենդանեաց և նենջեցելոց ի դուռն մեծի անապատին Սեվանայ, որ յերկրին Գոռեղամոյ . . . . . ի թուականին Հայոց ՌՃԻԷ,,, և Մկրտիչ վարդապետի, ոյոյ յիշատակարանն է "Դարձեալ երես ի գեանի եղեալ ապաշեմ ի մաքրատիպալ աղօթից ձերոց, ով սրբազանաւանդ հանդիպողք սուրբ գեղեցկանկարք և ասատուածաբան տատեսս, յիշեցէք ի Քրիստոս զվերջին սատացող տարին զՏէր Մկրտիչ բազմաշնաւոր վարդապետն՝ որ է առաջնորդ Սբոյ Դարանաղեսոյ որ ի գաւառս Նրբինջոյ: Որ և զայս ոսկիսատիպազմ և սուրբ մատեանս ասատուածային եւ յիշատակ իսուսա: Եւ զծնող.ք նորին զտէր Մկրտիչ քահանայն, և զԼ. ատիկուան հերայ ;ս-

գին և եղբարք նորին ըստ մարմնոյ զտէր Ղ՝ազար քրանաջան վաստակաւոր Հայրապետն ամենայն Հայոց և զտէր Ենդրէաս պարզամիտ քահանայն . . . . . , . ի թուականիս Հայոց Հազար Հարիւր ինն-սուն և վեց ,, :

Բ, Ասեսարան փոքրագիր ամբողջ գեղազարդ պատկերօք ընտիր գրչագիր գրեալ ի մագաղաթի. թուականն և անուն գրչին անյայտ, ունի ի վերջն յիշատակարան ստացողին — Շ՝օռօթցի Խոջենց Մկրտչի որդի մահտասի Հայրապետին, այլ ան-թուական;

Գ, Ասեսարան փոքրագիր ամբողջ գրեալ ի թղթի, ի սկիզբն ունի նօտարագիր յիշատակարան ստացողի ի տեղիս տեղիս եղծեալ, և է այս, ,, Ուռատ ծառայ Աստուծոյ Գրիգորի . . . . . անք . . . . . զատուածատատուտ մատեանս ի . . . . արքեանցս ի . . . եկեալ ինձ և . . . . . ոց իսկ . . . . անկեալ ամենից . . . . ք . . . . մոց յիշեսջիք յարժ . . . . թս ձեր զատ-

տացող . . . . իմ . և ոչք յիշման զմեզ
. . . . զինքն իւր երկնից արքայութեանն
. . . . առնէ ամէն գրեցաւ թվ . ՊԼ՝ ,, .
ի վերջ Աւետարանին Մատթէոսի ,, Օրա-
տացաւղ սուրբ աւետարանիս զգերապա-
տիւ . . . . . զաստուածատէրն և զմարդ-
դասէրն ամենայն զարմիւք ծնողաւք և
բնաւին ազգականաւք յիշեսջիք ի Քրիս-
տոս Աստուած ի քաւութիւն ամէն ,, .
իսկ ի միւս երես թղթոյն ,, Վերջին ցա-
տացայ զաստուածախօս սուրբ Աւետա-
րանս ես Նուաստ ծառայս Աստուծոյ տի-
բացուս ելն . . . . և եղաք ի սուրբ ուխ-
տին ի վանքն Սպահունեաց ի սուրբն Եպի-
կոպոսս . . . . գրեցաւ գիրս Հայոց թվ-
վականին ՊԾՀ՝Օ՝ մարտի ԻԲ . . . . ,, . ի
վերջ Աւետարանին Յովհաննու ,, ի թվ-
վականիս Հայոց ՈՒԱ՝Ղ՝ . ի Հայրապե-
տութեան Ս . Էջմիածնի Տ . Յակոբոյ և
ի թագաւորութեան փոքրն Տ՝ահաբանին,
ես Յովհաննէս եպիսկոպոս ապաստաւոր և
վերակացու Սաղմոսավանից և Հ՝ուսաւորչի

տուրբ յանուագաւոր, տուել էր Ն.ա սրանցի մէջէն Յովասափ էրէցն վարամ. մեք այլ տեսմինք և իմացանք այս տուրբ աւետարանս որ Ասուածընկալ տուրբ Նշանիս էր ,, ևլն. ապա գայ նօտրգիր յիշատակարան թուականի և գրչի Աւետարանին ,, Փառք ամենատուրբ Երրորդութեան և մի Աստուածութեան ամէն. գրեցաւ Ս. Աւետարանս ի թվ. ՉԾՐ. ի մեծ դրպրատանս որ կոչի Գալիձոր ի վարժապետութեան մեծիս Նասրեայ, և եղբայրն Գաւթայ, ձեռամբ անիմաստ գրչի Տիրատուր Կիլիկեցւոյ ,, ևլն:

Դ. Աւետարան մեծադիր փառազարդ պատկերօք և նկարուք. ընտիր գրչագիր գրեալ ի մագաղաթի, ամբողջ մի երեան արծաթապատ, յորում և պատկեր մկրտութեանն Քրիստոսի. ի բուն սկիզբն ունի յիշատակարան Տէր Աւագայ, գնողի զայս աւետարան ի թուականին ՋՀԸ, և տուողի ի դուռն Ս. Նշանին վարամ. ի վերջն ընդ երկար յիշատակարան ստա-

ցողի նորին Վարդան կուսակրօն քահա-
նայի, « . . . . . իսկ ի թուականիս Հայոց
Հ. յամն աստուածապատիւ մեծի Կա-
թուղիկոսիս Հայոց և Հայաստակաց Հաւրս
Տեառն Պատրանդեայ, զոր Տէր Աստուած
ընդ առաջէն Հայրապետացն դասեցէ.
ընդ որս եւ Վարդան Նուաստս ծառայ
Քրիստոսի և աշակերտս սուրբ տանս և
բան շնորհացն Աստուծոյ ըստ սուրբ և
փրկակար մեծարիսս Տաճարացս Աստու-
ծոյ տանս Հայրապետական, աստուածա-
պահ դպեալս որ կոչի Հռոմկլայ . . . . . »
Ն. Աստուածաշունչ մեծագիր ամբողջ
և անարատ, գրեալ ի մագաղաթի ընտիր
գրչագրի, ոսկեներկար և փառազարդ պատ-
կերօք շքեղացեալ. ի վերջն ունի ձիգ յի-
շատակարան Թորոս Վ. ստացողի գրոյն,
« Եգեւ ոսկիզբն գրոյս և աւարտումն Կոս-
տանդնուպօլիս ձեռամբ Աստուածատուր
դպրի ի թվականութեան Հայոց ՌԻԹ. . .
ի Նեղքոյ սորին գայ և հեռեւապդ. « Ի թը-
ւին ՌՍԺԹ. ի Հայրապետութեան տեա-

ոքն Յակոբայ եղաւ սուրբ տառս ի վանս Երինջակայ ի վայելումն հեզահոգի մեծ վարժապետին Նասայեայ, զոր յայց աւուրս նոր նորոգեալ կոփածու վիմով և գեղեցկազան յօրինուածով զսուրբ եկեղեցին որ Ս. Կարապետ վերանձայնի, որ և իսկ յորդորիչ եղև սուրբ գրոյս, զի անջնջելի յիշատակ կացցէ ի սուրբ ուխտս Ապրակունեաց ,, ։

Օ. Ասուածաշունչ մեծագիր ոսկեզօծ նկարուք և փառազարդ պատկերօք ընտիր և զարմանալի գրչագիր գրեալ ի մագաղաթի ամբողջ. իսկ շատք ի պատկերացն և նկարացն մնան դեռ թերիք և շատից դեռ տեղիքն թողեալ մնան առանց ակսանելոյ. չունի յիշատակարան։

Ա. Ասուածաշունչ մեծագիր գրեալ ի մագաղաթի ընտիր գրչագիր ծաղկանկարեալ ի խոնարհութենէ ի տեղիս տեղիս եղծեալ և խրթնացեալ. ունի երկար յիշատակարան, յորում և պատմին համառօտիւ արարք և խառնվութիւնք Ղրիմաստրու

Ընթացքոյ. առացող գրոյն է Ջ՝ահկեցի Հայրապետի որդի խօջայ Խմիրզան, որ «և յիշատակ զսա անջնջելի և անուն առ սուրբն սիօն, բարձրաբերձ գահն, և յերկնաքաղաքակ աթոռն Երընջակու . . . . ի թուականութեան Հայկազանի սեռի ՌՀ՝ և ԺՈԳ՝ ամի ի ծովապար և յարքայանիստ քաղաքն Ղաստամբուլ»:

Ը. Նարեկ միջակապիր, անթերի գրեալ ի թղթի ի թուին ՌՀ՝ԾՈԼ:

Թ. Պաշատոց, զիրք ծիսակատարութեան, մեծապիր գրեալ ի մագաղաթի ընտիր գրչագիր. չունի .մեշատակարան:

Կալը-ԺԵ՝ Մէնասոփանէս.

Մենասանս ունի Հարիւր խալիֆարաչափ հող, յորմէ քառասուն խալիֆին անջրդի. նմանապէս այգի մի, ծառատունկ պարտէզք երեք, ջրատեղաց մի և ձիթահան մի:

Ամբէ-ՆԵ՝ Մէնասոփանէս.

Այս վանքի արդեանց աղբիւրներն են, երկրագործութիւնքն, յուխտաւորաց գո-

յացեալ նուէրք, ոչ արդարոյ հանդիսաւոր ուխտի արդիւնքն, և որոց սահմանց ըստ սովորութեանն ի Նախիջևան և յայլուր տանելն։

Շինուածք Մէնասրանի.

Բաան տարի յառաջ այս վանքը գրեթէ օրինաւոր սենեակներ ունեցած չէ կրօնաւորաց և հիւրոց բնակութեան համար բաց ի հարաւակողմն եղած «աստաջնորդարան» սասայեալ թաղակապ երկ յարկ տեղը, մինչև որ Երեմիա վարդապետ յաւուրս իւր կանգնել տուած է քանի մի սենեակներ։

Գ. Երեզմանատուն.

Հիւսիսակողմն պարսպի մօտ փոքրիկ բլրակի վերայ է գերեզմանատուն վանից, ուր ամփոփուած են մարմինք միաբանից տեղւոյն. նոյն կողմն դարձեալ, բայց բուն պարսպի տակ կան քանի մի գերեզմաններ, որք կկրեն խոյաձև տապանաքարեր. կերեւին սոքա բաւական հին, բայց դժուար է որոշել թէ որոյ ժամանակի, և որոց մար-

մինչև են ածիւնացեալ. մօտ օրերս դիպ-
ւածով երևեցան Հարաւային պարարին
տակ քանի մի գերեզմանք՝ որք մինչ ցայդ
անընշմարանյայտացած էին խաճատեթ կար-
կատին մէջ. ի ներքուստ ամենքն մաքուր
բուած և յարդարած փոքրիկ խրճթիկներ
էին, ուր կային միայն ոսկերոտինքն, զորս ի
նկատի առնելով, գուցէ ակամայ ճշգրտած
լինիմք Օրբելեան Պետրոսի այս
խօսքերը "Օ՜ի գոն սատ գերեզմանք Հայ-
բասեատց, որք էին պատահմամբ եկեալ
վասն ամրութեան բերդին ի ժամանակս
եպիսկոպոսացն Սիւնեաց, և անդ վախ-
ճանեալ,,. (տես Պատմ. Սիւնեաց Պ.
Օրդ. Հատ. Բ. եր. 110, ի լոյս ընծ. Պ.
Պ. Շահնազ):

Աղբակոնի կամ Աղբակոնց.

Որբ Կարապետի վանուց արևելա-
կողմն կէս վերստ հեռաւորութեամբ և
Երնջակայ գետի աջոյ թևի վերայ ընկած
գիւղ մի է: Որա անունը պատմութիւնը
կմտիշէ ԺԴ դարու անցեալց մէջ. բայց ան-

շուշտ նոյն ժամանակէն աւելի հին պիտի լինի։ Այս գիւղի հին ու նոր գիրքը և անձուկ տահմանները ի նկատի ունենալով, դիւրաւ կհասկացուի որ թէև հին, բայց ոչ երբէք բաղմաբնակ գիւղ եղած է. Վաղար Ջահկեցւոյ պատմելովն ինչպէս շրջակայ շատ գիւղերայքն, նոյնպէս և Ապրակունիս շրջանքտասանեարորդ դարու սկզբներէն խմորուել է և բաժանուել Հայրենի եկեղեցւոյ ծոցէն ջանիւք Ունիթոռաց. վերջին ժամանակները, երբ այդ Լատինահայ խումբը կքակուի, կհալածուին ու կիշանան, թողով միայն անագորոյն անխիղճ ապարանց սարսեցուցիչ յիշատակները, նոցուն քարոզութեան որդիքը—պապական եկեղեցւոյ զաւակ գըրուած քանի մի գիւղերէից բնակիչները վերջին թշուառութեան մէջ կընկնին, ըստ որում Համարիւն եղբարքը կգարշէին, և պարսիկներն իրրև անտերունջ ժողովուրդ մանաւանդ իրրև նոր դինի յեռնուած խորշելի խումբ՝ ամեն դնարաւոր

չարչարանքը, նեղութիւնները, և վշտերը անխնայ կհասցնէին, այս ամէն միջոցները կպատրաստեն ։ այսպատանեաց տանարատ եկեղեցւոյ գրկէն զատուած, և օտարացած 15—20ի չափ գիւղօրէից ողորմելի ժողովրդեանն Պարսկական կրօնն ընդունելու իբրև միակ միջոց առօրեայ անդորրութեան և խաղաղութեան, և ահա այսպէսով բոլոր կիսալատին խեղճ Հայերը կրօնի հետ միասին կկորցնեն և լեզուն և ազգութիւն յանդարձ տարաբդութիւն. որով և քսամնելի հարուած և անբուժելի վէրք ազգի. միւս գիւղորէից վերայ խօսելն առանձին առանձին տեղեաց թողլով զանք Ս. Պրակունիս։

Հ. Հակոբեան էր. 334 պապական գիւղորէից Պարսկական դէն ընդունելն գրելով կասէ. «Նմանապէս և յերկրին Սախիջևանայ Ս. Խաչամանայից գերդաստանքն բազումք դարձան ի կրօնս Պապայից, որպէս Սարիթաղ և Բռնայ», ելն. հակ Ս. Պրակունիս, Հ. Հրուանիս, Խոշկաշէնի և

Ապարաներ՝ի համար կգրէ թէ ,,սոցա մեծ մասն,,. ո՞ւր է հապա արդեօք Ապրակունիսի ի կրօնս Պարսից դարձած մեծապոյն մասն բնակչաց, և ո՞ւր պատի զուտակ մընացած փոքրամթիւ մասն, այժմ ոչ ապաշնոյն տեղն կերևի, ոչ վերջնոյն. ապաշնոյ համար հաւանական է կարծել թէ տեղափոխուած լինին ուրիշ մահմեդական գիւղեր. իսկ երկրորդի համար թէ և շատ անպատան, կրկին ընդունած լինին իւրեանց հայրենի եկեղեցին, և մուած նորա ծոցը. և այս սորա համար շատ անպատան ասացինք, որ ինչպէս կերևի՝ Ապրակունիսի այդ մնացած փոքրամթիւ Լ. տունահայոց դարձի վերայ հազիւ 180 տարի անցած լինի, դեռ մինչև ցայսօր գիւղս մէջ գերդաստան մի կայ, որոյ տոհմի ազգանունը թէ և ,,Պահակեանց,,՝ բայց սովորաբար ամենքն և ,,Գռանկեանց տուն,, կկոչեն։ Պատմեն ծերունիք բնակիչք գեղջաս՝ թէ այդ Գռանկեանց տունը պատատ մի կար՝ որ երբ եկեղեցւոյ մէջ երեք անգամ

կկրկնէին ,,Պարք սասուած որ խաչելցու-
ցին,, կզարդարեար կասէն, և կպատարագեն-
ալէս ետքը ,,Հաժարիքը,, ասելով կգաս-
նային եկեղեցւոյ մէջ դէպ յարևմուտս,
կբարկանար սատանիկ և կանէարգէր մօտը
կացողներին. բայց այսր, զիւրդ Ծերունի
քնարիչներն մինչև ցայսօր իսկ կպատմեն թէ
,,Պէրն գեղն ժամանակով Հայութիւ-
նից պրանվելոյ Գրանկութեան, յետոյ
էլ Հայութեան,,: Ա. յս գիւղն ունի եկեղե-
ցի մի յանուն Ս. Գէորգայ. մինչև ցամն
1868 անշուք և խարխուլ շէնք մի էր, այ-
ժըմ նոր ի նորոյ կենոլուպուի Հասարակ
քարամբք և տանիքն թրծած ագիւսով՝
թաղակերտ, միայն ամբողջ և անարատ
թողած են սեղանը՝ որ կամարակապ է, շի-
նուած. արդէն այս սեղանի վերայ կընշմա-
ռուի դեռ Լատինական ախորժի մնացորդ.
եթէ սորա վերայ արբաղնագործող քա-
հանային զիտենար, թէ Լատինաձև շէն-
քը, որոյ վերայ ինքն կացած է, քանի՞
ախտ և արատաւելի անցից պատճառ

եղած է, կարծեմ որ ամենայն վիր եղած ժամանակը զոզար և սարսէր։ Անկեղեցւոյս հիմունքը քանդած ժամանակը գտրա եկան հարիւրաւոր խաչքարեր, որոց ոմանց վերայ նշմարուին նաև հետք անարատ ձեռքի գրած արձանագրութեանց, անվերծանելիք. միայն մէկի վերայ նշմարուեցաւ ՝՝թվին Ը.Ա.՝՝. բաց ասած երեւեցաւ և փոքրիկ աշտանակի բարձրութեամբ մարդոյ հասակի օրինակ գիպսէ (գած՝) շինած արձան մի, որ մարմարէն ամենևին որոշել չեր լինի, և այս արձանի վերայ փորագրուած էր Տիրամօր պատկեր, Աբրահամոս ի գիրկն։

Անկեղեցւոյ հարաւակողմն երեսուն քայլ հեռաւորութեամբ առապարի մի վերայ կայ փոքրիկ խրճթանման շէնք մի, որոյ չորս կողմի հասարակ որմունքն կան երկու արշին ու կէս բարձրութեամբ. երեք խաչքարինք կային անշուք յարկիս մէջ, որոց մէկի վերայ մաշուած ու անվերծանելի տառից նշոյլներ, խաչքարանց չորս կողմը

շարուած բազմաթիւ խեցեղէն ճրագաբաններ, ասացին որ այս Սուրբ Յովհաննէսն է (շատ զօրաւոր սրբատեղ), ի պատիւ որոյ ամեն կիւրակամուտ երեկոները բարեպաշտ կանայք ճրագ կվառեն. պատմեց մեզ գիւղացի ծերունւոյ մէկը՝ թէ մեր գիւղացիներէն մինն կամեցաւ նորոգել այն սուրբ Յովհաննէսն, բայց երազ եկաւ իրան թէ ձեռ մի՛ տար. այլ ոմն ևս պատմեց, որ երեխայի մէկին 1870 ամի Փետրուարի ամսին երազով յայտնել է՝ թէ իմ մօտի թըթի ծառի տակը քանդեցէք, երեք ամսան փող կայ պահած, երկուսն հանողին լինի, իսկ մինն գործ դրուի իմ նորոգութեան համար. բայց դեռ ոչ ոք ձեռ տրուած էր թթենւոյն։ Ի հիւսիսոյ կողմանէ գիւղս առուակի աջ թեւի վերայ կայ բարձր առապար մի բլրակաձև, որոյ վերայ կանգնած են երեք մեծամեծ խաչքարինք, որոց համար ասացին լինել սահմանի որոշիչներ, ըստ որում այսպիսի խաչքարինք կան կասեն հաստատուած և քանի մի տե-

ղեր, որոց մի քանին այժմ հողով ծածկուած։ Յիշեալ խաչքարանց մէկի վերայ կնշմարուէին կոպիտ գրերի հետք, սակայն բաց ի պարզ ճեացած թուականէն որ է ՌԾԳ, այլքն առհասարակ անվերծանելի։ Ս. յս առապարի վերայ և սարտուեները սփռած են գերեզմանները այնքան հողի հետ հաւասարեալք, որ հազիւ կարծել կուան մարդոյ թէ այդ տեղերը խոր քնով ննջելու ընկողմանած են մարդիկ. այդ գերեզմանատունը շատ ընդարձակ եղած է և մեծատարած, բայց մեծագոյն մասն այժմ այգւով է բռնուած. գիւղացիք պատմեցին թէ ‘‘էս է Ֆրանկների գերեզմանատունը,,։

Ս. Պրակունիսի այժմու բնակիչք 45 տան չափ են, որոց ոմանք գաղթականք Սալմասայոյ և ուրիշ տեղեաց, կպարապին երկրագործութեան և յաջողակ են. բայց շատ սակաւ է տոցա հողը. չորս կողմն մահմեդականներ լինելով, հին ժամանակէ ի վեր շատ հարստահարած են այս գիւղն

բնակիչները, և սոցա արքունի հողերի մեծ մասն յափշտակած՝ թէպէտև այսօրուան օրս Տէրութեան շնորհիւ ապահովուած են թուրքերի բռնութիւններէն, բայց դարձեալ սարկական հոգին մէջներէն չէ վերացել. նոյն իսկ այն բոպէին թուրքերի հետ ազաչանքով և ակնածութեամբ կըշարժեն երբ հարկ կայ իւրեանց օրէնքով որոշուած իրաւունքը պաշտպանել. այս կերպ ստորութիւնը երբէք տեղէք տուած չէ իրանց զէնք բանեցնել, որով և հետևաբար մէջնելը եթէ զինաւարժ և ձիաւարժ մարդիկ չկան, իսկ աշխատութեան կողմէն բոլոր շրջակայ բնակիչներէն կըզերազանցեն. հողի սղութիւնը սոցա ուրիշ աշխատանք գտնել տուած է, ամառն քաջագօտի երիտասարդները իւրեանց արտոյրայքը փութով հնձելով կդիմեն Սիւնեաց այժմու "Սիսեան" ասացեալ երկիրը և հունձ անելով բաւական օգուտ կատանան. և այնտեղէն պրծնելով Շարուր կվազեն բրնձաքաղի. սոցա աշխա-

տու թեանց միջոցներ են նաև մի վարձով մարդ և ապրանք այս կողմն այն կողմն տանել բերել, ու միւս՝ Տփխիս երթալ և երկու երեք տարուան պանդխտութեամբ ընտանեաց ապրուստ ճարել. կգտնուին տոցա մէջ և քանի մի արհեստներ, որով՝ փոքր ի շատէ հաց կհայթայթեն զոր օրինակ քարտաշութիւն, դարբնութիւն, հիւսնութիւն, որմնադրութիւն, համեստագործութիւն, ոստայնանկութիւն, ներկարարութիւն, սափրչութիւն, նուագածութիւն (զուռնաչութիւն), թմբկահարութիւն (դափաչութիւն), բայց ամենէն շահաւէտն քարտաշութիւնն, այգեգործութիւնն ծաղկած է գաղթականների ձեռքով. այգիներ շատացած են վերջին ժամանակներս, բայց դաշտի երեսն սփռած հնձանները ի նկատի ունելով, պէտք է կարծել որ հին ժամանակները կրկնապատիկ են եղած ու մշակուած: Մաքուրբարոյականութիւն կթագաւորէ գիւղիս բոլոր դակչաց մէջ. ջերմեռանդ սրտերի մէջ դեռ

արմատ արձակած չէ սառնութիւնը և թուլութիւնը. երկիւղած են և պատկառ նախնաւանդ օրինաց սովորութեան, հաւատարիմ. և սրտացաւ սուրբ Կարապետի վանքին և ամեն ժամանակ զանազան միջոցներով իւրեանց ծառայութիւնը ցոյց կուտան։

Թռնա կամ Թռնէ.

Երբոյնչակ գեղեցոյ աջոյ եզեր վերայ ի ստորոտս Իլանտաղեոյ կանկանի այս գիւղը, երբեմն բազմամարդ Հայաբնակ և նշանաւոր աւան. Թռնա մոտած է չորեքտասաներրորդ դարու սկզբան անցից պատմութեան մէջ ազգաւէր ունիթօռաց պատճառաւ. սակայն հաւանական է կարծել որ իւր սկզբնաւորութիւնը եթէ ոչ շատ հին ժամանակաց մէջ՝ գոնէ երեք կամ չորս դար յառաջ պիտի առած լինի. ըստ որում պատմութեան մէջ առաջին անգամ յիշուած ժամանակը կերևի մեծ միաբանութեամբ հռչակաւոր մենաստան ունեցող և նշանաւոր աւան մի. այս պ-

ւանն ազգին տուաւ և կաթուղիկոս մի, Տէր Մխիթար կամ մականուամբ Մխիկ, որ յամի 1341 նստաւ յետ անկման Յակոբայ Սեցւոյ։ Այս տեղէն ծագեց և ժանտը Յովհան ցիցն ազգի, որ այնքան սարսափելի և ահռելի հարուածոց և պատուղէտ ֆնասուց ազգի և եկեղեցւոյ պատճառ եղև իւր "միաբար" (ունիթօռ) խմբոփն. մենաստանն որոյ մէջ որջացած էր Յովհան, և որ նորա ազգակործան խմբի արարմանց և խորհրդոց պատսպարանն էր, ցարդ ևս կայ սոյն աւանի մէջ փոքրիկ առապարի վերայ քարոզ քստմնելի չարութեանց և անօրէնութեանց նոցին։ Ո՛հ սիրելի ընթերցող, դեռ թողած այս մենաստանը, յառաջ բերենք այն անլուր և մոլեռանդութեան հրով բորբոքուած կորստաբեր անցից համառօտ նկարագրութիւն, որ հազարաւոր ֆնասներ ազգին և եկեղեցւոյն հասուցանելէն, աշխարհի ներքին խաղաղութիւնը խանգարելէն, հազարաւոր պարզամիտներ գայթակղելէն, անմեղ տառապեալ

ժողովրդի մէջ տուր, հեռ, և առելութիւն լցնելէն, մինչև անգամ և արիւն թափելէն յետոյ, նաև այս անդառնալի կորուստը և դարուածը տուաւ, որ տան և հինգ գիւղերը որոշելով Ռոմայ ուղղափառ գահին երկրպագուներ, ժամանակէ մի յետոյ անպաշտպան թողլով անագորոյն Պարսկի ձեռքը, որը կոտորել տուաւ իրրև անծանօթ կրօնի ծառայողներ և որը ստիպեց առ հարկի մահմեդականութեան դիմելու, որով այսօրուան օրս Ռայ մի արտասուաք և տխուր զգացմամբ պիտի նշմարէ Ռայ արիւնը դեռ կրող գծագրութիւնը հայութեան անուն էն որոշած ժաղովրդականայ վերայ (*)։

(*) Եւ յիրաւի զարմանալի բան է որ՝ ինչ մարդ ալ լինի այս գիւղերն մտնողն, ինչպէս են Գռնա, Բանանեար, Սալթաղ և այլն, բնաւ չի նշմարեր Տաճկական կամ Պարսկական գծագրութիւն, այլ ընդհակառակն դեռ անբիծիս և անայլայլակ մնացած Հայացի կերպարան, և տիպ դիմաց։

Սեցի Յակոբ Պարզուղիկոսի օրով, այս ինքն իսկզբան ԺԴ դարու մեծ անուն և համբաւ ունէր Նչեցի Նսայի վարդապետ «մեծ վարժապետ Հայոց», կոչեցեալն, և ինչպէս կգրէ Զամչեանն, «սորա եղեն բազում աշակերտք, զոր ոմանք թուեն երեք հարիւր վաթսուն երեք», (հատ. Բ. գրիչք Ն. գլ. Խ). սորա աշակերտներէն էր և Յովհան Որոնեցի «որ և կարգեցաւ առաջնորդ վանից յիւրում աւանի»։ Ա. յս միջոցներն Յովհաննէս պապի հրամանաւ կդայ Պարսկաստան Բարդուղիմէոս լատին Եպիսկոպոս, ի կարդէ քարոզեզաց, և Պարզայ քաղաքի կողմերն վանք շինելով իւր համար, կսկսի քարոզել պապականութիւն, և կգտնէ շատ աշակերտներ։ Յովհան Որոնեցի սորա համբաւը լսելով կերթայ մօտը, և մտերմանալով հետը, տարի ու կէս ժամանակի աշակերտութեամբ կսովորէ ինչպէս լատին լեզուն, նոյնպէս և նորա չարարուեստ թակարդներն ու կեղծաւորական հնարքներն. Զամչեան՝. Մի-

քայէլն, որ միշտ կաշխատէ ամեն բան ընդ-
ունվմայ, ատիկանի քմացն և ախորժին հա-
մեմատել, կ'գրէ՝ իբր թէ մեծն Դատային ին-
քըն "լուեալ զբարի համբաւնորա՝ յղեաց
պատուէր առ Յովհան Պոնեցի գնալ և
տեսանել զնա, թէ որպիսի՛ իցէ վարդա-
պետութիւն նորա,, (ինոյն հատոր. ի գիր
և ի գլուխ). իսկ Ղազար Ջահկեցի կգրէ,
"Դա մոլորական հոգին այն . . . թող-
եալ զվարժապետն իւր և զուսումնակից
եղբարս ուղղափառս, գնացեալ ի Պարա-
զայ և գտանէ մոլորեցուցիչ ոմն Բարդու-
ղիմէոս անուն,, (տես ի գիրս Ջահկեցւոյն
եր. 326)։ Այդ միջոցին ահա յղացաւ Դա-
խիջևանի բազմաթիւ գիւղորէից պարզա-
միտ բնակչաց ապագայ գառն ճակատագի-
րը, և Ազգի և Եկեղեցւոյ նիւթական և
բարոյական հարուածը, որք և ծնունդ ա-
ռին երբ Յովհան յիշատակամեռ և Բար-
դուղիմէոս ժուտ գործելով Պոնայի վանք
՝ ժողովեցին ոչ սակաւ աշակերտներ և
համամիտներ, և սկսան քարոզել հայր

Միքայէլի խոստովանած ուղղափառութիւնն. և այս առաքելական մեծ պաշտօնը յառաջ տանելու համար՝ սկսան ցրուել տարածուել ազգի մէջ, Ջանալ բառնալ՝ այստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը, և ծէսերը, իբրև մոլորութիւն և հերձուածողութիւն, իսկ նորա տեղը պաշտել պապականութիւն. և այս նպատակաւ շուտով ձեռք առին թարգմանել նաև քանի մի գրեանք, ինչպէս Աստուածաբանութեանցն, Տոլութեանցն, Ալկերաբինն, Լէն. ու նոցա վերայ դատախօսել իբրեանց աշակերտաց. և երբոր ազգի քաղաքական հանգամանաց և առհասարակ նիւթական ու բարոյական դառն վիճակի պատճառաւ սկսած գործոցն բաւական յաջողելն տեսան, Յովհան Պռնեցի ածապարեց՝ Բոլոմ երթալով ու ծառայութիւնները պատին ցոյց տալով, Դոմինիկեան միաբանող կամ միաբար կարգի անուամբը կընքել տալ և իբրեանց խումբը. այնուհետև ամէն ճիգն և հնար թափեցին վանքեր և

եկեղեցիներ կանգնել ի Դարիջևան, Ն-
ըլնջակ, Տփխիս, Խրիմ, Պարսպայ և
Սուլթանիէ, որոց շատից աւերակներն
կան և մնան դեռ յիշատակ անցելոյն. այս
ամենը չէր ինչ որ քարեխիղճ ընկերու-
թիւնը կամեցած էր, նա դեռ ուրիշ նպա-
տակ ունէր և շուտով ալ ձեռն արկեց, վերց-
նել ջնջել ոչ միայն Հայաստանեայց Եկե-
ղեցւոյ դաւանութիւնն և ծէսերն, այլ
և Հայ լեզուն և նորա տեղ գործածել
տալ պատարագի և այլ ժամերգութեանց
ժամանակ լատինականն, որպէս զի Հայ ա-
նունը միանգամայն մոռցնել տային. որով
և իբրեանց ջերմեռանդ գործունէութիւնն
ակնյայտանի փայլէր Հռովմայ գահի առաջ,
որ կախարժէր լսել ուրախութեամբ նոցա
ձեռնարկութեանց հետևանք ազգի մէջ
յարուցած երկպառակութիւնները։ Սոցա
ապրածների և քարոզածների վերայ փոքր
ի շատէ պարզ տեղեկութիւն մի ընթեր-
ցողիդ տալու համար, յառաջ կբերեմ Հ.
Միքայէլի հետևեալ խօսքերը. "Յարևան

յայնժամ երկու ոմանք իբր նախանձաւորք արքանեակք չարի, որոց մին կոչիւր Ներսէս Պաղն Եպիսկոպոս Որմեայ, և միւսն Սիմէօն ապէկ՝ Եպիսկոպոս Կարնոյ, որք միաբանեալ ընդ իւրեանս զարս քանի մի՝ շրջէին հանդերձ նոքօք այսր և անդր, և քարոզէին թէ հարկ է կրկին մկրտել և դրոշմել զամենայն հայս լատինական ծիսիւք, վերատին ձեռնադրել զքահանայս նոցա, և տալ պատարագել լատին բարբառով և արարողութեամբք, նոյնպէս փոխել և զամենայն կարգ պահոց և այլոց սովորութեանց, զի այսու կարասցեն միաբանել ընդ եկեղեցւոյն ՝ռոմայ, և ասէին ըստ գրելոյ Մխիթարայ Կաթուղիկոսի թէ ‘‘մկրտութիւնն ՝այոց է երկբայելի, և պատարագն ՝այոց ոչ է ճշմարիտ պատարագ,,. ուստի որպէս ասէ նա ինքն Մխիթար Կաթուղիկոս ‘‘ յանդգնեցան ի ծածուկ և յայտնի մոլորութիւն մուծանել յեկեղեցի. զի ինքեանք կրկին ձեռնադրեալք և կրկին մկրտեալք՝ նա և զայլս բա-

զուսմ ձգեցին առ ինքեանս և կրկին մկրտեցին և կրկին ձեռնադրեցին. զի զոմանս ի բաղանիս, զայլս ի տունս, և զայլս յանցըս ջրոց կրկին մկրտէին, և ի ծածուկ տեղիս և ի վայրս անտառաց կրկին ձեռնադրէին։ Եւ պատճառ զայս այսպէս առնելոյ ասէին նախ՝ թէ յորժամ զառաջինն մկրտեցայք՝ ոչ ճանաչէիք, ուստի և չէք գիտակ՝ թէ արդեօք քահանայն ասացեալ իցէ ,,ես մկրտեմ զքեզ յանուն ±օր և Որդւոյ և ±ոգւոյն սրբոյ,,. և գուցէ չիցէ ասացեալ վասն արբեցութեան. վասն որոյ հարկ է ձեզ կրկին մկրտիլ. . . ։ Երկրորդ զի զմեզան զոր գործեցիք, գուցէ ապաշխարութեամբ չկարացիք ջնջել, այժմ մկրտութեամբ քաւեալ սրբեսջիք, և առանց պատժոց քաւարանի կարասջիք անցանել յարքայութիւն երկնից,, ։

Այս երկպառակութեան հուրը օր քան զօր բորբոքելով ազգի դառնաղէտ վիճակի մէջ յաւել և նոր անտանելի ցաւ. մէկ կողմէն արիւնարբու թշնամեաց յարձակ-

մանց, սրածութեանց և աւերմանց մէջ պաշարուած կողբար, կհնծէր անդադար, միւս կողմէն ներքին աւերն և հարուածն էր, որ այս անխիղճ անօրէն անձանց ձեռքով սկսուած ճարակեցաւ, և այնքան սարսափելի նիւթական և բարոյական վնասներ պատճառեց, որոց լսողը կսոսկայ, մինչև որ Լևոն արքայ և Յակոբ Կաթուղիկոս շուարեցան և չգիտէին թէ ինչ հնարքով անկարգութեանց առաջը փակել կարող են*): Մեք շատ երախտապարտ եմք մեր այս ժամանակուան քանի մի ընտիր վարդապետաց Ձգանցն, որոնք երբէք չդադարեցին բանիւ և գրով դէմ դնել ծագեալ անկարգութեանցն, և քիչ ու շատ ի դերև հանել նոցա չանքերը, որովք գուցէ ամ-

(*) Եթէ Տէր յաղողէ պիտի տամ ապագիս «Ցեց.ք ազգի», անունով աշխատասիրութիւն մի, որով պիտի ջանամ ցոյց տալ ազգիս նիւթական և բարոյական վնաս տուողները իսկզբանէ հետէ մինչև ցայսօր։

բող Չ եկեղեցին որպացուէր՝ թէ որ չբենէին հոգաստարք։ Դարաւոր ժամանակ պահելով ունիմ օրք իւրեանց կենդանութիւն և զօրութիւն վերջապէս բարձան ի միջոց. բայց ի՞նչ եղեն այնքան բազմաթիւ ժողովուրդը, որք արդէն մկրտուած ու ինքուած էին յանուն Լ՝ատին.—Նոցա սակաւագոյն մասն մի դարձան վերատին իւրեանց Հայրենի եկեղեցւոյ ծոցը, ‘‘իսկ անդարձքն (ըստ Չ՝ահկեցւոյն) յեռոյ ի սուրն տաճկաց անկեալք ամենեքեան կոտորեալ փչացան, որպէս ի Սուլթանիա քաղաքն Պարսկաստանայ. կային անդ Ի՝ եկեղեցիք Հայոց, իսկ յորժամ անկան ի յախթարմայութիւն և մոռացան զուխտն աստուածեղէն, ապա յայնմ հետէ ոմանք ի սուր սուսերի մաշեցան, և ոմանք ի կրօնս Պարսից դարձան, և մի ի նոցանէ ոչ ճեաց ի կրօնս ախթարմայութեան . . . : Ամանապէս և յերկրին Ամիջուանայ ախթարմայից գեղորայքն բազումք դարձան ի կրօնս Պարսից, որպէս Սալիթաղ և Գռնայ,

որ զԱռաքինութեանց և զՈղութեանց և զԱրարատն անդ թարգմանեցին, և Կէծուկ, տոքա ամենայն։ Իսկ Ապրակունիս և Շահ-բունիս և Խոշիաշէն և Ապարաներ, որ է Եպիսկոպոսարան իբրեանց, տոցա մեծ մասն, ... (տես Դրախտ ցանկ. եր. 333-334)։ Թող արդ սիրելի՛ ընթերցող, որ հառաջմամբ սրտի կնքելով այս աղէտալի պատմութիւնը, դառնամք ի կարգ մեր բանից։

Մենասպան Վանայի.

Տխուր անցից յիշատակները ապագայից սրտից մէջ զարթեցնում է հնութեան նշխար այս մենաստան կիսաւեր. Տաճարի շէնքն քառանկիւնի, ներքին լայնութիւնն և երկայնութիւնն ութն քայլ. ամբողջ որմունքը, սիւնքն և կամարաղիկէն աղիւսակերտ. կամարաղիկէ տաճարին, որ հաստատուած է եղել երկու արևմտեան սեանց և երկու արևելեան կիսասեանց վերայ՝ կործանուած է. թողլով միայն շրջապատ որմունքն՝ մէջ եկեղեցւոյն զարդարուած է ազգի ազգի քարաքանդակ

և աղիւսակապ խորշերով կամ պատու-
հաններով. ունի երեք սեղան, մինն մեծ,
որոց վէմքարինքն կից յորմն արևելեան,
ունի հինգ դուռն, երեքն արևմտեան,
միջինն աւագ դուռն բարձր և լայն. եկե-
ղեցւոյ մէջ տեղը կանգնած կայ կոփածոյ
միապաղաղ քարէ սիւնաձև արձան. նոյն-
պիսի սիւն մի ևս արևմտեան դրան հան-
դէպ արտաքոյ։ Տաճարի մէջ կան երկու
գերեզմանք, արևմտեան մեծ դրան կից.
գերեզմանաքարերի վրայ թէև ամենևին
գիր չի նշմարուի, բայց ես հաւանած եմ
կարծել թէ տցա մինն Բարդուղիմէոս
Եպիսկոպոսին պիտի լինի, միւսն ուրիշ մէ-
կին, որք ի նշան յարգանաց և երախտա-
գիտութեան այս տեղ ամփոփուած կլինին.
հարաւային կողմէն տաճարին կցուած է
եղել թաղակապ և աղիւսակերտ փառա-
ւոր շէնք, որոց տանիքն հաստատուած են
տաճարի որմոյ և կամարակապ սեանց վը-
րայ. այս շինութեան երկարութիւնն դեռ
փոքր ինչ աւելի է քան զտաճարինն, իսկ

լայնութիւնն երկու քայլ. գուցէ սա լինի նոցա դպրոցը, ըստ որում բաց այս, միւս շինուածոց մէջ չէ կարելի դպրոցի յարմարութիւն նկատել. իսկ եկեղեցւոյ արևմտեան և հիւսիսային կողմերէն են պէսպէս կրօնաւորական մեծ և փոքր խցերի աւերակներ. և անհնար է չկարծել թէ այդ խցերի մէջ պիտի լինի գաղտնի դարան, ինչպէս տեղական բնակչաց կարծիքն ևս ցոյց կտայ:

Այս վանքը յայտնի է կողմանց բնակչաց մէջ "Կուսաբեր" անուամբ, "կուսաբեր գնացի". "կուսաբերիցն եմ գալի", կասեն սովորաբար, որ կուտայ պատմութեանը նշանակութիւն. ÷. Միքայէլ Չամչեան Առաքել պատմագրէն քաղելով սրբոց Ռիփսիմեանց մասանց լատին կրօնաւորաց ձեռքով Յերինջակ բերիլն, կասէ "հասեալ Յերինջակ գաւառ, յաւանն Աղարան կալան օթևանս առ Ունիթօռս, և անդ յերիս բաժանեալ զնըշխարս սրբուհւոյն՝ զորս ունէին առ իւր-

եանս, զերկուսան եդին ի պահեստի յայլ և այլ տեղիս,, և այլն (Հատ. Գ. գիրք Ջ. գլ. ԺԹ. եր. 570). թէպէտ և յընթացս պատմութեանն ցոյց կտրուի որ այդ այլ և այլ տեղերն մինն Ասպարանների իւր մէջն էր, և միւսն Բօլու սարի վերայ, սակայն անշուշտ և այս վանքիս մէջ պիտի պահուած լինի խիստ ծածկաբար, որուն անգիտակ են մնացել թէ Ալթուն-Ալետիք Աստապատցի, որ արքունի սպասաւորք եկած Ասպարաներ մանանց ամբողջ գտնելուն խնդիր էր, և թէ անցիցս պատմիչ Առաքել Վ. Դաւրիժեցի, յորմէ և մնացած պիտի լինի անունը «Դուսաբեր,,:

Այս վանքն շատ ուխտաւորներ ունի, և անուանի է ընդհանրապէս Հայ և Թուրք բնակչաց մէջ իրան սեպհականած հրաշիւքը. կասեն որ որչափ խելագար մարդ, կամ կատաղած անասուն բերուի սրբոյ դուռն, իսկոյն կբժշկուի. վասն որոյ և վանքիս մօտ կարելի է միշտ տեսնել

այդպիսիները։ Պ. Ի. Շ՝ոպէն, որին վի-
ճակուած էր աշխարհագիր առնել և ըս-
տորագրել այս կողմերն ևս, յիշատակե-
լով Բռնա գիւղ, կասէ, "Այս գիւղի
մէջ կգտնուին աւերակք Հռոմէական
եկեղեցւոյ, որմունքն և սիւներն ամբողջ,
իսկ կաթուղիկէն խոնարհեալ. եղած է
այստեղ և մենաստան Պապական, որոյ
հիմնարկութիւնն կհամարին հնագոյն Ն-
միածնէն" (տես Истор. памят. сост.
Арм. области И. III. եր. 323)։

Տեղական աւանդութիւնն՝ զոր մէջ է
բերել Պ. Շ՝օպէն, այն միւս եկեղեցւոյ
համար է, որ այս վանքի հարաւային ա-
րևմտակողմն կանկանի կէս վերստ հեռա-
ւորութեամբ, դաշտին մէջ. փոքրիկ եկե-
ղեցի մի եղած է այս, որոյ միայն այժմ
որմունքն կերևին կէս կանգուն գետնէն
վեր սրբատաշ կոփածոյ քարամբք և կը-
բաղանգ. սորա համար ասացին ինձ Բռ-
նեցիք, որ մեք կանուանեմք "Պ՝ատրմի
Վիլիսասը", (իսկական կամ հին եկե-

ղեցի). աւանդութիւնն, որ սորա շինութիւնն յառաջ կդնէ քան Ն.ջմիածնին, կծառայէ միայն սորա վաղաւորց հնութիւն հասկացնել, իսկ պատմութեան առաջ չունի արժէք: Այս եկեղեցւոյ և յիշատակեալ վանքի մէջ բաւականաչափ արտորայք կան, որոնք թէև միւսոց հետ խառն կհամարուին այժմ սեպհականութիւն Թուրք կալուածատիրոջ, բայց տեղական բնակչաց մէջ ցարդ ևս կկոչուին ,, Բիլիսա չամըսը ,, (եկեղեցական հող):

Լիճ Ղնասարանի Արևելեան.

Մենաստանի արևելեան պարսպի տակը կանգնաչափ կանգուն որմն կայ հարաւէն դէպի հիւսիս երկայնած, քարուկիր ամուր շինութեամբ. մէջ տեղն ունի ջրանցք, և կափարիչ վէմ մի. տեղէն՝ որոյ առաջեաւ կանգնած է այս որմն, երկու բլրակի մէջ տարածուելով, հովիտ մի կձևացնէ, խորագոյն և բարձր տեղերէն վազած ջրերն իւր մէջ ընդունելով լիճ

կկապէ. կայ և առուակ մի հանած, որ հեռու տեղէ ջուր է բերած լճիս համար անձրևաց նուազութեան ժամանակը, ու դրած է դրուած վանական պարտէզների և պիտոյից համար։

Դէրեզման.

Վանուց հարաւային կողման պարսպի տակ կբարձրանայ փոքրիկ բլրակ մի, որոյ գլխին կայ գերեզման մի, որ մաշուած և կիսաբեկ տապանաքարովն կերևի լինել հին. սորա համար տեղացւոց հարցրած ժամանակս լսեցի որ իրանք որդւոց որդի կանուանեն "քէշիշ-գապրը" (գերեզման քահանայի), և պապենական սովորութիւն կայ մէջներս որ ջերմ կամ տենդ ունեցողներն կբերենք կասեն, գերեզմանս վերայ կլուանամք, ձգելով քարի վրայ սև փող, հաւկաւիթ, և այլն, ու կողջանայ հիւանդն բոլորովին. նոյնպէս և այս վանքն եկող ՝ այ ուխտաւորներն առանց այս գերեզմանիս վերայ խունկ և

մամ վառելու չերթան։ Այս գերեզմանն
ես հաւանած եմ ասել որ Յովհան Պռ-
ռնեցւոյն պիտի լինի, ըստ որում ամենևին
դժուարին չէ կարծել որ նորա քրտամբքն
և ջանիւք Լատինացած միաբանութիւն
մի կամ ժողովուրդ կամելով աւելի մե-
ծարել՝ այստեղ առանձինն թաղած են.
տխմար ժողովուրդն ևս իւր փոքրիկ խմբի
պարագլուխը մեծարելով խնկօք և մոմե-
ղինօք սովորութիւն թողել է յետնոց, և
այդ սովորութիւնը զօրանալով հետըզ-
հետէ, այսօրուան օրս Հայ-քրիստոնէից
և Հայ-մահմետականաց կողմանցս անդի-
տութեանը և աւելորդապաշտութեանը
ակնածելի սրբավայր մի ընդունել տուած
է այն շերմին, ուր անմեղ հօտը պառակ-
տող և գիշատող գազանի մի ոսկերքն
կհանդչին։

Այս բլրոյ արևելեան հիւսիսակողմն,
փոքր մի անջատ կբարձրանայ միւս այլ
բլրակ, և սորա վերայ կան երկու գերեզ-
մաններ, իրար շատ մօտ, որոց իւրաքան-

չէր մէկի վրայ մի մի մեծ տապանաքար, գուցէ սոցա վրայ գրեր եղած են, բայց հընութեան ժանեօք փչացրած անհետ, ուստի և չէ յայտ թէ որոց են հանգստարան. իսկ այս բլրակի հիւսիսակողմը հովտաձև ընկած տափարակ գետնի վրայ կան բազմաթիւ գերեզմաններ, զորս տեղական բնակիչքն կանուանեն "Ներման գաբրըստան", (Հայոց գերեզմանք կամ գերեզմանատուն). զարմանալի էր տեսնել այնքան գերեզմանները, որոց ոմանց վերայ մաքուր տապանաքարեր, բայց շատերը հընութեան երեսէն սարսափած քիչ կմնայ որ հողի տակ ծածկուին անհետանան, ինչպէս և շատերն եղած են *):

(*) Ինչպէս այս գերեզմանատանս մէջ, նոյնպէս և Ապրակունիսի և ուրիշ գիւղորէից քիստոնեայ գերեզմանաց վրայ կտեսնուին խոյաձև արձաններ. յայտնի բան է որ խոյաձև տապանաքարը Պարսկական ախորժակն է հնարել, միայն Հայերն և, որոնք ինչպէս շատ բաներով գնա-

Այժմու բնակիչք Ռուսի յիսուն տան չափ Մահմետականք են, ամենքն ալ բնիկ տեղացիք, սերունդք նախնի Հայոց. կպարապին երկրագործութեամբ, որ նոր նոր կծաղկի մէջներըը. արհեստաւորներ չկան մէջներըը, նոր ի նորոյ սկսած, բայց շատ շատացրած ունին ծառատունկներ և պարտէզներ. այս գիւղիս բնակիչք բոլոր գաւառի մէջ յայտնի են իւրեանց դիւրաբարբարոք և կռուասէր բնաւորութեամբ, իսկ մէկ մէկու շատ պաշտպան և օգնող. միւս գիւղերէից բնակիչներըը զսուսա "տալի-քռնալի", կանուանեն և կակնածեն։

Իլան—պաղը.

Ռուսի արևելակողմն և անտի քառորդ ժամու ճանապարհ հեռի կբարձ-

ցել են նմանել իւրեանց իշխող տէրութեանն, գուցէ և այս ձև տապանաքարով՝ կամեցած են նոցա սրտերը շահել։ Հայոց խոյաձև տապանաքարերն յարևելս են ուղղած երեսները, պարսից յարևմուտս։

բանայ սրածայր լեառն Իլանտաղը (օձալեառն). գրեթէ անմատչելի է սորա գագաթը՝ որ և ունի շատ էրէներ։

Երեք անուն ունի այս լեառն, «Իլան-տաղը», «Իրան-տաղը», և «Ինան-տաղը»։

Իլան-տաղը՝ կնշանակէ օձի լեառն. աւանդութիւն կողմանց ցոյց կտայ որ հին ժամանակը շատ և բազմատեսակ օձեր կային սորա վերայ, իսկ այժմ մեծանուն ճանապարհորդն Ֆակստհաուզեն յիշատակելով այս լեառն՝ երկու ժողովրդական աւանդութիւն մէջ կբերէ, առաջինն իբր թէ օձ մի եթէ մինչև քսանհինգ ամաց հասանիլն մնաց անտես մարդկանէ, կառնու կերպարանափոխութեան զօրութիւն, ուզածի պէս ամեն կենդանւոյ կերպարանքով երևելու. որոյ համար և երիտասարդի մի պատահած աղջկայ կերպարանք առնող օձի անցքը կգրէ. երկրորդ թէ՝ մեծն Իսկէնտէր (Ալէքսանդր) իւր կանայքը բնակեցոյց այս լերան

վերայ, և տեղւոյն թովեալ օձերը կզգուշանան նոցա պահպանութեանն։

Իրան-տաղը՝ լեառն Պարսկաստանի։

Ինան տաղը, կամ այսպէս ‘‘Ինան քի տաղ տըր,,. աւանդութիւն երկրին կասէ որ՝ երբոր Նոյի տապանը ծփալով ջրոյ երեսին կգար անցնել դէպի Արարատ, հպեցաւ տրա գագաթին, վասն որոյ Նոյ ասաց, ‘‘ Հաւատա որ սա էլ լեռ է,, ։

Ռանանիար (Ապարանէր).

Ս. Պարապետի վանքի հիւսիսային արևելակողմն վերստ մի հեռաւորութեամբ կանկանի այս աւանն, երբեմն անուանի քաղաքն Հայոց։ Որա բուն անունն է ‘‘Ապարան,, կամ ‘‘Ապարաներ,,. երբ որ շնորհիւ ունիթօռաց լատինացած հայ բնակչաց տեղւոյս արտասուելի ճակատագիրն վճռեց նոցա համար մահմեդականութիւն, հեռզհետէ և անուն ‘‘Ապարաներ,, աղաւաղուելով, թլպատեցաւ յայժմու կոչուին ‘‘Ռանանիար,, ։ Մ. Միքայէլի

կարծեացը նայելով, այս քաղաքի բուն և ամենահին անունն պիտի լինի ‘‘Տիգրանակերտ,,. ըստ որում նոյն անուան վերայ ծանօթութիւն կարդելով հատ. Ա. եր. 196, կասէ. ‘‘բայց հայելով միանգամայն ի պատմութիւնս ՝այոց և այլոց ազգաց, մարթ է ասել թէ ոչ մի, այլ երկու էին Տիգրանակերտ քաղաք յայլ և այլ տեղիս շինեալ, մինն ասի լինել Ամիդ քաղաք, այն է Տիարպէքիր յաշխարհին Ադձնեաց յառաջին Տիգրանայ կանգնեալ, և միւսն երևի լինել յաշխարհին Սիւնեաց, զուցէ թէ այն ի՞ցէ Ապարան քաղաք կամ Ապարաներ, շինեալ թերևս յերկրորդ Տիգրանայ, կամ թէ զուցէ սոյն այս Ապարան քաղաք ի՞ցէ շինեալ յառաջնոյն Տիգրանայ, իսկ Ամիդ ի յերկրորդէն,,:

Առանց այս անուան ևս, Ապարաներ քաղաքը իւր ամենահին, նշանաւոր և անուանի քաղաքը լինելու հաստատութիւնն ունի պատմութեան մէջ: Արդէն փրկչական 59 թուականին կգտնեմք Ա-

պարանը հռչակաւոր, բազմամարդ և բարգաւաճ քաղաք մի, զոր Կորբուղոն Հռովմայեցի սպարապետը իւր յաղթութիւններն յառաջ տանելով՝ կպատրաստուի պաշարել առնուլ, և կյաջողէ խորհրդոյն կատարումն յօժարակամ հընազանդութեամբ քաղաքացւոց։ Քաղաքիս մէջն էր ամրացած և Տիգրան արքայ յամի 61. երբոր Պարսից Դարէհ-Ողոգէս արքայի Մանէճ զօրավարը Պարսիկ և Ասորի զօրօք յանկարծ յարձակեցաւ քաղաքի վերայ և պաշարելով զայն՝ ,,ընկաւ ներել ի մարտ պատերազմի, և զօրք նորա մեքենայիւք և սանդղովք ջանային հուպ մատչել, այլ վտանգեալ ի քաղաքացւոց՝ ոչ կարէին վճարել ինչ,,. Ղամ, պատմ. եր. 312։

Այս տեղ բերուեցան յԹ. դարուն Լատին կրօնաւորաց ձեռքով մասունք սրբոց Հռիփսիմեանց, որոց մի մասն այս տեղ գաղուածն էր, զոր գտաւ Աւետիք Ալթուն գանակոծ առնելով տեղացի

երեց մի։ Այս տեղէն էր Մխիթար Սպարապետի Ունիթեանց կարգէն, պատմիչ, որ իւր ամբողջ պատմութիւնն լցրել է մոլեռանդ կրիւք։

Այս տեղ էր և չարաճնուն Ունիթեանց եպիսկոպոսարանը ըստ պատմելոյ Ջահկեցւոյն։

Այսքան մեծաբնակ և անուանի հինգերեայ քաղաք մի այսօրուան օրս հասարակ անշան գիւղ մի է, բնակարան, հարիւր քսան տուն Մահմետականաց։ Սպարապետների երբեմնին մեծութեան, բազմամարդութեան և բարգաւաճանաց վկայք՝ դեռ ցայսօր ժամանակի կհանդիսանան նախնի Ֆայ, և Ֆայ-Լատին բնակչաց հազարաւոր գերեզմանները գիւղի հիւսիսային և հարաւային կողմերը. որոց շատը դեռ Պարսկական մոլեռանդութեան պատճառաւ ջնջուած անհետացած, հազիւ նշմարելի պարսպաց հետքը, որք դէպի գիւղն տանող արևմտեան ճանապար-

հի վրայ կառնուին երկարած *). Նմա նապէս և քանի մի տեղեր, դաշտի երեսը, մանաւանդ գիւղի հարաւակողմն տեսնուող այնքան հնձանների մնացորդքը, և այլն։

Ներկեցի Ապարանեցի.

Գիւղի մէջ փոքրիկ ապառաժաքար բլրակի մի վրայ կայ ցարդ կիսաւեր եկեղեցին, եպիսկոպոսարան Ունիթօռաց. շէնք եկեղեցւոյն մինչև կամարները քարուկիր, իսկ կամարները և տանիքը թրծած աղիւսով. թաղակապ տաճարն բաժանուած է երեք մասուռի, որոց միջինն մեծ, և հաստատուած է եղել չորս սեան վերայ. երեք մասուռն ևս ունեցած են զմբէթներ. աւագ սեղանն շրջապատող որմոյ վերայ յարևելից, ի հարաւոյ, և ի հիւսիսոյ կան քանի մի հատ խաչքարինք, որոց մի քանին խիստ ճարտարարուեստ քանդա-

(*) Գուցէ քաղաքի բերդի պարիսպն է սա։

կուած. Հիսիսակողման գեղաքանդակ խաչքարի մի վերայ խաչի վերին թևի երկու կողմն գրուած է «ԹՎ—ՁՐ», իսկ ի պատուանդանին «Քրիստոս Ասուած, յիշեա զտիկին ...». Միան եղծեալ. միւս բոլոր խաչքարանց վերայ կային արձանագրութիւնք՝ բայց եղծեալք, իսկ աւագ սեղանոյ հարաւային և հիւսիսային կամարաց որմոց մէջ կային երկու գեղարուեստ խաչքարինք, ամեն մէկն գետնէն կանգուն և կէս վեր. հարաւային խաչքարի վերայ գրուած էր «ԹՎ. ՈԾԱ. կանգնեցաւ խաչս ի բարեխօսութիւն Պատրոնաճարին. յիշեա Քրիստոս Ասուած և ողորմեա». հիւսիսային խաչքարի վերայ կիսամաշ գրովք «կանգնեցաւ խաչս բարեխ . . . . . ԹՎ ՁԾ». նոյնպէս հիւսիսային մատրան որմոյն մէջ կային երեք խաչքարինք, որոց երկուքն արձանագրած՝ բայց ճնացին անվերծանելիք։ Այս եկեղեցւոյ ներքևը եղած էր վիմափոր գաղտնի դարան, որ անյայտ էր միանգամայն

մինչև ցամն 1870, յորում պատահմամբ գիւղացի մօտաբնակ տաճկին մէկը արևելեան կողմէն տան ծածկի համար հող վերառած ժամանակը դուռն գտնելով, հանած էր՝ ինչպէս նոյն գիւղացիք կհաւատացնէին, շատ զարդեր և անօթեղէններ, թէպէտ և ես ամեն ջանք գործ դրի որ կարողանամ ձեռագիր գրեանքը ձեռք բերել եթէ եղած են յիրաւի, բայց ի զուր անցաւ։ Որովհետև այս եկեղեցւոյն տրուած չէ այս կողմերս առանձին և սեպհական նշան հրաշից, ինչպէս սուրբ Կարապետի և Գռնայի վանքերին, վասն որոյ տեղական Մահմետականաց մէջ առած է եղած սովորաբար ասել, "Հալա սուրբ Կարապետը օձի կծածն ա լաւացնում, Գռնու վանքը գժուածը, բաս տու, Ռանանեարի եկեղեցի ի՞նչ բանի ես պէտք է՝"։

Դաբան Ընթաւոք.

Ապարանների արևմտակողմն փոքրիկ բլրակի մի վերայ կայ քառանկիւնի մատրաձև շինուած մի «Դաբան—Գաբաբը», անուամբ. ըստ աւանդութեան նախապաշարեալ բնակչաց՝ այս տեղէն անցած է Ալին, որոյ կրնկի տակն ընկած քարն է, որ այժմ կը յարգուի. սակայն ինչպէս կերևի, եղած է սա ՝այոց սրբավայր, ըստ որում վերջին տարիներս Ջերմեռանդ Մահմետականին մէկը նորոգելու մտօք քանդել տուած ժամանակը, հաներ է հողի մէջէն ոչ սակաւ հին ճրագարանները, կերևի որ գիւղի քրիստոնէութենէ ի Մահմետականութիւն փոխուած ժամանակը թէև երեսի վերայ ու ամայի մընացած է եղել այս սրբավայրը, սակայն ակնածութիւնն՝ որ բնականաբար երկար ժամանակ կարող է տպաւորուել մտաց և սրտից մէջ, վերջապէս Ալոյ անուամբ գտած է իւր յարգանքը տգէտ Մահմե-

տականաց մէջ և գուցէ ջանիւք խորամանկ շահասիրութեան։

Ընակիչք գեղջս երեք մասին չափ եկք են վերջին ժամանակաց, կպարապին երկրագործութեամբ, այգեգործութեամբ, և խաշնապահութեամբ. բաց ի վեց տանէ ամենքն աղքատ. ունին մզկիթ մի հասարակ շէնք՝ գիւղի մէջ տեղը, ուր կժողովին իբրև ի կեդրոն շրջակայ Մահմետականք ալք և կանայք, Ալլոյ և նորա որդւոց մահը փառաւորապէս ոռնելու համար։ Թէ տեսնէիր դու, ընթերցող եղբայր, թէ այնտեղ, ուր երկար ժամանակ Լուսաւորչի շարշարանքը կոծնուէր, այժըմ Ալլոյ, Հասանայ, և Հիւսէյինի նահատակութիւնը կոծնուի, կշիւարէիր յիրաւի անցեալի դժնէութեան վերայ։ 1869 թուականի Մարտ ամսին մէջ պիտի կատարուէր այս հանդէսը, գնացի և ես տեսնելու. գիւղին մօտեցած ժամանակը տեսի հարիւրաչափ պատանիներ և երիտասարդներ երկար ու ձիք շարուած ձա-

նապարհի մէջ, որի ձեռքը դաշոյն, և որմնբիր, կուրծքերը սպիտակ հանդերձ փաթթած և գլուխները պատառած արով ու քարով, և արիւնով ներկած բոլոր կուրծքերը ու դէմքերը, կատաղի և վրէժխնդիր ձայնով կպոռային "Հատան, Հէ-սէյին, Ալի, ապամ վայ,, և այլն. նոցա ձայնին իբր առաւել տխրութիւն և ազդուութիւն տալու համար կընթանային հեռները թմբկահար մի և փողահար (դափի, զուռնաչի) և որոնք իբր ըստ տեղւոյն մերթ կսկսէին ձայները հանել, և մերթ լռել. մտինք գիւղը, բերին ինձ օթոց նստելու մզկթի պատին տակ, որոյ առաջ՝ հրապարակին մէջ պիտի հանդէսը կատարուէր. հետզհետէ եկին ժողովեցան այն տեղ և շրջակայ սգաւոր գիւղացիք, բերելով իւրաքանչիւր գիւղի բազմութիւն իւր հեռն պատգարակ մի զարդարուն չորս մարդոյ ուսերի վերայ բարձած, որոց մէջ բազմած էին Ալւոյ որդիքն և քոյրն, որոց հասած էր ժամանակն

ժահ և սուգ տեսանելու. Հանդէսն սկսաւ բորբոքուիլ երկար ժամանակ հրապարակին մէջ բոլորաշրջան խմբով ու օղը լցնող աղաղակներով ամենքն ևս շապկաց օձիքները արձակած, որը դաշոյնով ձակատը կձեղքէր, որը բաց կուրծքը կկոծէր. իսկ այդ միջոցներին բերներէն լսուած բառերն էին "ասոռ Աղէ, ասոռ աղուտ, Հասոռ վայ, Հէ-ոէյին վայ", և այլն. վերջապէս պատրաստուեցան երթալ ընդարձակ դաշտ մի գիւղէն դուրս, ուր պիտի ներկայացուէր և պատերազմն. Հետներն միասին գնացի և ես, առաջին անգամ այնպիսի Հանդէս տեսնելու. մօլլայի մէկը Աղի ձևացած նստաւ ձի և շրջապատուած ծառաներէն եկաւ կանգնեցաւ բազմութեան մէջ, որի առաջն բերին ոչխար մի մատաղ անելու, բայց չընդունեց, ու սկսաւ նախ խրատել ու մխիթարել ժողովուրդն. ապա երբ տեսաւ Եզտին սպառազինած, յայտնեց որ պիտի դուրս գայ թշնամւոյն դէմ. ժողովուրդն սկսաւ լալ,

բայց նա սկսաւ մխիթարել զնոսա և իւր ընտանիքն, թէ բնաւ չվախենաք. ես ունիմ օգնութիւն ի վերուսա, որով անշուշտ պիտի յաղթեմ թշնամւոյն. իսկ թէ կամք Տեառն վճռած լինի իմ մահը, այն ժամանակ միայն անհաւատն թոյլատուութեամբ երկնից կարող է ձեռն բարձրացնել իմ վերայ. բայց եթէ մեռնիմ ես, գիտացէք որ կերթամ ձեզ համար երկնքի մէջ տեղեր պատրաստելու: Այս խօսքերն ասելով կուզէր բաժանուիլ, միայն նորա Հասան որդին աղաչանքովն նորան արգելք եղաւ և ինքն գնաց. փոքրը ժամանակէ ետքը հրացանի ձայնը լսուեցաւ, և ահա Հասանն սպանուած Եզտիէն դագաղի մէջ դրած բերին բազմութեան մէջ. լաց և սուգ պաշարեց զքորան, մայրն, և ժողովուրդն. բայց թշնամւոյ վրէժն առնելու համար պատրաստուեց երթալ միւս եղբայրն, Հիւսէյինն. նոյն հանդէսն կատարուեց և Հիւսէյինի վերայ, և ողբացին նորա դին

եւ. իսկ արի եւ ահարկու Նոզտին ամեն մէկը սպանելէն յետոյ ձին կմտրակէր կգար մօտ եւ Ելուն ձայն կտար «մարդ կայ ուզարկիր, չկայ՝ դու արի կռուելու». տեսարանն այսպէս քանի քանիցս կրկնուեցաւ, եւ իւրաքանչիւր անգամին ժողովուրդն մեծակական ողբով կլցնէր վայրը. մանաւանդ երբոր կարգադիր ախունդն լալով կդիմէր հետեւողացն եւ յուսահատ կերպով կգուժէր սպանելոց մահն, եւ մօտալուտ վտանգն. վերջապէս կարգն եկաւ Ելոյ, որ բոլորն գրկախառնած մխիթարելէն յետոյ մեկնեցաւ. նոյն հրացանն Նոզտիի ծանոյց եւ նորա մահը՝ որով անտանելի եւ դառնակսկիծ սուգ պատեց ամենքը. եւ յիրաւի այնքան բարձրացաւ լացն ու կոծն, որ կարծես ներկայացուցիչ էր՝ այլ իսկական անց.ք. ի վերջոյ Նոզտին արշաւեց եկաւ մտաւ բազմութեան մէջ մերկացրած թուրը ձեռին, բռնեց Ելոյ եւ որդւոց մատաղերամ սերունդը, որպէս զի խողխողէ միանգամայն եւ ջնջէ. սակայն

հրեշտակն աներևոյթ կերպով բռնեց սուրն և զինքն հալածեց այն տեղէն անդարձ։ Ամենայն խօսակցութիւն հանդիսիս մէջ կլինէր երգով. յաւարտ այս ամենայնի, մեծ ախուռնդն ել բարձր աթոռի մի վերայ, և կարդաց օրհնութիւն ամէն կարգի մարդկան, և ցրուեցան ամենեքին։

Սալիթաղ.

Սահմանակից Ապարանների և անտի կէս վերատ հեռի կանկանի այս գիւղ, որ ունի այժմ յիսուն տուն մահմետական բնակիչ։ Այս գիւղն Ապարաներ քաղաքի մասն է եղած ի հնումն, և որովհետև շինուած է եղել ապառաժ և մեծատարած սալաքարի վերայ, ուստի և առած է անունս «Սալիթաղ», որ այժմ Սալթաղ, այն է՝ սալի վերայ շինուած թաղ. սորա բնակիչքն ևս որսացած լինելով ունիթօռաց թակարդի մէջ, նոյն ճակատագրին են հանդիպել, որ ինչ միւս գեղեր։

Այժմու բնակիչք աղքատ են և կպարապին երկրագործութեամբ, և խաշնարածութեամբ. այգեգործութիւնն նոր սկսած է մէջտեղը, բայց չէ ծաղկած. Ն՝կեղեցի գեղջս՝ որ եղած է հնումն, աւերեալ գոլով, ցոյց կայ միայն հիմանց մնացորդքը: Ռ՝իւղի հիւսիսակողմն, ճանապարհի վերայ է հին գերեզմանատունն անբաղդ ։այոց, լցուած բազմաթիւ խաչքարերով, որոց շատը գիւղի բնակչաց ձեռօք քանդուած անհետացած են նոր բացուած առուակի պատճառաւ:

Ռոլա-սար.

Սալթաղի հիւսիսակողմն և գրեթէ գիւղի կողքին կանկանի այս "Ռոլու-սար", սատեալ բլուրը կամ լեռնակը, որ երկձիւղ գագաթովը բաւական նմանութիւն ունի Մասիսին: Այս տեղ էր գաղած մասն ինչ նշխարաց սրբոց ։ռիփսիմեանց, զոր հանել տուաւ Ալթուն Աստապատցի. բայց մասանց տեղն կանգնած կայ և

ցարդ ևս կմնայ փոքրիկ մատուռ մի «Պուռանաց», անուանեալ, Հասարակ քարամբք միայն շարուած. ուր որոշ օրուան մի մէջ Նորաշէն գիւղի այերը կգան ուխտ։ Մերձակայ բնակչաց մէջ այս լեռնակն կկոչուի նաև «Հարան ու փեսայ». աւանդութիւնն կասէ որ երկու Նորապարտակ ամոլք ճանապարհ ելած ժամանակը կհանդիպին աւազակաց, որոց միտքը կըլինի Հարան փախցնել. իսկ ողորմելի ամոլքն սոցա ձեռքէն ազատուելու մտօք կելանեն սորա գագաթն թէ և, բայց երկուքն ևս քար կդառնան և կմնան այն տեղ։

Նորաշէն.

Ռուլուսարի արևելեան ստորոտի վերայ կանկանի այս գիւղը՝ բնակութեամբ վաթսունաչափ գերդաստանաց, որոց կէսը այ. անունս «Նորաշէն»՝ արդէն ցոյց կայ որ վերջին ժամանակաց է. իսկ գիւղի չորս կողմիցը տեսնուած բազմաթիւ շինութեանց աւերակները և հնակառոյց Նկե-

պեցին ցոյց կտան որ և յառաջագոյն ե-
ղած է անդէն բնակութիւն. այս պատճա-
ռաւ հարկաւ պէտք է կարծել որ սա պիտի
լինի Ջահկեցւոյ յիշատակեալ ,, Հահ-
բունիս,, գիւղը, որոց կէսն ի ժամանակին
թակարդեցան ի յաղբս Ունիթուռացն։
Ընակիչք տեղւոյս կպարապին սովորաբար
երկրագործութեամբ և սակաւուք այգե-
գործութեամբ. այժմու ՝այք տեղւոյս
գաղթականք են Պարսկաստանի բացի սա-
կաւաւոր տներէ։

ՍոՒՐՔ ԱՌՈՒՄՆՔԻՆ ՆԿԵՂԵՑՈՅ.

Հոյակապ՝ ամենաշքեղ և փառաւոր
կոփածոյ քարամբք Նկեղեցի մի՝ բաւա-
կան մեծ և ընդարձակ, ապգաշէն տանիք
Նկեղեցւոյն և փոքրիկ կաթուղիկէն շորս
մեծամեծ ամրապինա սեանց և ութն կի-
սասեանց վերայ հաստատուած են. եր-
կայնութիւն տաճարին արտաքուստ երե-
սուն քայլ, իսկ լայնութիւնն տասնեւութ,
ունի երեք սեղան, երկուքն աւագ սեղա-

նոյ յաջմէ և յահեկէ, ասանդարտանց. վերայ շինուած. ունի երկու դուռն, մի արևմտեան՝ փառաւոր՝ հոյակապ և զեղաքանդակ. սորա ճակատին հաստատուած է ամբողջ քար մի, որոյ վերայնուրբ քանդակեալ երեք խաչ քարեր. ներքոյ խաչքարին գրուած է. "Յիշատակ է դուռս մահտեսի Ամթանիսի որդի Ղազարին". յաջմէ նորին՝ "յիշատակ է խաչս մահտեսի Գրիգորին և որդւոյն Մանուկին". և յահեկէ՝ "Յիշատակ է խաչս Հայրապետի որդի Միքայէլին". դրան աջակողմեան սեան ճակատին՝ "Յիշատակ է սիւնս մահտեսի Ազարեայ և ծնողացն մահտեսի Որդիայի և Խերխաթունին". Առաջև Եկեղեցւոյս չորս փառաւոր կամարակապ սեանց վերայ հաստատուած է գաւիթ շէղ, իւրաքանչիւր սեան արտաքին ճակատին քանդակեալ մի մի պատկեր չորից Աւետարանչաց և գրուած նոցա անուններըը, իսկ հիւսիսային սեան ճակատի վերայ գրուած է "Յիշատակ է խաչս Ուհանին կողակցի

Նազլուչին,, . իսկ հարաւայնոյ վերայ ‘‘Յիշատակ է սուրբ պատկերս Մարկոսի որդի Ովանէս վարդապետին,, : Գաւթի տանիքէն բարձր Տաճարի արևմտեան պատի ճակատին լուսամուտէն վեր, ‘‘Յիշատակ է սուրբ խաչս Նյվաղի որդի Հարօնին թ. ՈՀԼ ին,, :

Հարաւային դրան ճակատի սալքարի վերայ, ‘‘Հիմնադրեցաւ սուրբ եկեղեցիս ի թվ. Հայոց ՈԽԸ ին,, . սակայն ինձ խոպոռ անհաւանելի է՝ որ այսքան վեմ և մեծածախ փառաւոր յարկ մի մօտ ժամանակի գործ լինի. գուցէ արձանագիրն վերջին ժամանակաց գործ լինելով՝ անգիտութեամբ այն թուականին տուած է շինութիւնն. մի և նոյն արձանագրին իբր շարունակութիւն՝ յետոյ ժամանակաւ դրուած է, ‘‘Ես Նորաշէնցի Մարկոս Ը. փուռնովս իմ յօժար կամաւս ծ. խալվար Նախջևանի վախիմ արիմ Ըստուածածին Եկեղեցւոյն ի թվ. ՈՀԾ ին,, . գաւթի արևմտակողմն եղած են գաւակաւն

եկեղեցական սենեակները, այժմ հաւասարուած և բնակութիւն ձգած է քահանայի համար։ Եկեղեցւոյ արևելակողմն է աղբիւրն նորին, որոյ երկու թաղակապ հոյաշէն աւազաններուն մէջ վազեր է համեղ ջուր, խողովակներով հեռուէն բերուած, իսկ այժմ միանգամայն ցամաք և խցեալ։

Սուրբ Յովհաննէս.

Այժմու ծառաստաններայց մէջ ընկած փոքրիկ վայելչաձև եկեղեցի մի եղած է, այժմ աւերակ. միայն սեղանն և տաներաց կէսն. սեղանոյ չորս կողմով պատին մէջ թողած կան եօթն պատուհաններ, և ամեն մէկի մէջ մի մի խաչքար. նայելով խաչքարներուն քանդակներին, բաւական նուրբ են, իսկ արձանագրութիւններն շատ խակ ձեռին գործ։ Արևելեան հիւսիսակողման խաչքարի մի վերայ տեսած արձանագրի թուականն միայն յանձն առինք օրինակել, որ է "Ի թ. ՉՂԴ" յաջմէ

և յահեկէ սեղանոյն եղած են պահարանք, այժմ հապիւ նշմարելիք։

Կամոր՝ Նորաշէնի.

Առաջեաւ գիւղիս Երինջակ գետի վերայ շինուած էր փառաւոր կոփածայ քարամբք կամուրջ մի գեղեցիկ, զոր յամի 1871 Օգոստոս ամսին ահեղ և կարգէ դուրս հեղեղ մի քանդելով կէսն անհետացոյց։

Ղ՝անթէ—Մ՝ազրայ.

Նորաշէն գիւղի դաշտին մէջ արևելակողմն դէպ ի Ղ՝ազանչի տանող ճանապարհի ձախ թևի վերայ կանկանի փոքրիկ հողակոյտ մի ,,Ղ՝անտի — Մ՝ազրայ,, անունով. աւանդութիւնն կասէ որ այս կարկառը Ղ՝անտի անուն աւազակի մի գերեզման է։ Ղ՝անտի իւր ահարկու սրովն ահ ու դողի մէջ պատած պաշարած է եղել բոլոր գաւառը. որչափ կաշխատին առաջն փակելու, անհնարին կլինի. ըսպա-

նութիւնն, յափշտակութիւնն օր քան զօր կատարեանայ. Շ՝ահաբաս արքայ ճարահատեալ զօրք կուզարկէ որ ըմբռնեն զինքն. բազմաթիւ արքունի հրոսակը մինչև Ծղկեաց (Սիսեանի) լեռները փախցնելով վերջապէս կբռնեն Ղ՝անտիրը ու կբերեն. Շ՝ահաբաս կհրամայէ կանգնեցնել, և ամեն մի զօրականի՝ իւր ձիոյ տոպրակով հող բերել լցնել նորա գլխին. որով կձևանայ այս փոքրիկ բլրակը ,,Ղ՝անտի—Տապրայ,,։

Խոշկաշէն.

Իլանտաղուոյ հիւսիսային արևելեան ստորոտի վերայ ձգուած է այս գիւղ, երբեմն Հայաբնակ. այս գիւղն ևս ընդունեց ունիթոռաց քարոզութիւնն. այժմու բնակիչք գեղջ՝ քառասուն տան չափ մահմեդականք են, բայց չէ յայտ թէ հին Հայերն են լատինացած, թէ յետոյ այլ և այլ տէզերէ ժողովուածներ. եկեղեցի գեղջըս, որը հնութեան երևէն, և որը մահ-

մեռելան մոլեռանդութեամբ այժմ միան-
գամայն գետնի հետ հաւասարուած ու ե-
ղած է գերեզմանի մէկի պարտեզատեղ. հի-
մունքն միայն մնան նշմարելիք. այս գիւղս
մէջ կրկնէ ազգիւր մի բարեհամ ի բաւա-
կանութիւն բնակչացն։

Երինջակ։

Երինջակ գեղոյ ձախ թեւի վերայ, և
Սարաշէն գիւղէն երկու վերստ հեռի կը
բարձրանայ միապաղաղ սեռն նման ոչ-
դակի վեր։ Հ. Մ. Զամչեան կգնէ այս լեռն
ընդ մէջ Երինջակ և Գողթն գաւառաց,
բայց միանգամայն սխալ. քան որում բուն
հանգոյն գաւառի մէջն է, և Գողթն
գաւառէն բաւական հեռի։ Այս ամ-
բոցիս գլխոմէն անցած գառնաղէտ և քրիստ-
ոնեի անցից յիշատակը մարդ կզարմ-
հուրցնէ։ Այս ինքն վաղ ժամանակէ հե-
տէ ապաստանարան պիտի եղած լինի մեր
ազգայնոց, թէ և պատմութեան մէջ ասուած

Չին անգամ նշանաւոր կիմանիցիս Յու-
սուֆ բռնաւորի պաշարումը, և Սիրա-
ստայ խոստովանող Աբգարի՝ որոյ սարքած
կրած կառամահ տանջանքը, յամի 914։
Ամէն արիւնարբու անգութ բռնաւորն շար-
թայակապ կաշկանդած ի՝ այդց թշուառ և
ողորմելի թագաւորը, և հետն առած կդի-
մէ այս բերդիս վերայ՝ ,,Դ մարդ եղեալ
խլել և յատակել զամրոցն, և զբնակիչս
նորին վարել ի գերութիւն, մանաւանդ
զոմիկնայս մեծամեծաց, յորս երեսել էին
մայրն Սմբատայ Սիրակեանց, և կին նո-
րա որ էր քոյր Գագկայ բռնաւորի, և կին
Սահակայ եղբօր նորին Սմբատայ, և այլ
և այլ ազատ կանայք, թող զբաղում որդիս
նախարարաց որք զօրեալ մեռին անդ,,
Ղամ. պատմ. Հատ. Բ. գլուք Դ. եր. 756.
բայց երբ որ կատանէ մարդասիրաշուշ բռնա-
ւորն, որ ամրոցն անձնատուր չի լինի, արքա-
յին շարաթոյն զառնութիւնն մարդն կրե-
թափէ, Սմբատ արքայի վերայ, կանդնեցը-
նել տալով զնա բեղդի մէջ զառնուածնե-

ին աչքի առաջը, ու չարաչար զանազան
բուսեղենէն և ազգի ազգի անլուր սոսկալի
և անտանելի տանջանքներէն յետոյ, խեղ-
դել հրամայելով հրապարակին մէջ. գա-
հավնք հրաման առած, թաշկինակը բռնի
վարոցներէն բերանը մղելէն, տաներկու
մարդոց վրան ընկնելէն ու հոլովելէն յե-
տոյ, չքամեցան ի բերանն "արտաքոյ
բնութեան ի սարսափելի տանջանս. զի
յերկարեալ տակաւին շնչոյ նորա՝ մատու-
ցին ի ծածուկ անդամս նորա կտտանս և
չարչարանս անողորմս և քսամեալս. ան-
հնարին և անասելիս: Եւ ապա մինչ չև
էր խապառ. հաւեալ շնչոյ նորա, խողխո-
ղեցին զնա, և հատին արով զգլուխ նորա,,
(ի նոյն պատմ.):

Ընդէն ոստիկանն Սմբատայ կեանքը
զրաւելէն յետոյ ուրշոսի և բերդի պաշա-
րումն ու պատերազմն կատարեցնէ, ա-
ռուն անհնարին կլինի, մինչև որ ամենա-
հաս և արագահաս նենգութեան ու մատ-
նութեան մեքենաները թշնամին յանկարծ

մերկազէն ի ներքս լցնել կաւոն, յաւուրսկ շաբաթու Մեր և ի սուգ անհնարին գառնութեան տարաբաղդ բնակչացն. որոց «Հաստատեալ արարեալ զմնացորդս մարդկան, զանպիտանան և զոգեզն սրոյ եառեն ճարակ, իսկ զառոյգսն և զդեղեցիկսն զերկրացին։ Այնպէս և զկանայս Մեծաւանից Հանդերձ մանկամբք նոցին,, (անդ. եր. 758)։ Ամ ուղևոր, Ամ եղբայր, ո՞չ արշաւի Հաւատ կլինէի բաղձանացս, թէ որ այս աշխարհաթափանումս տուած լինէի՝ քեզ դիտել, թէ այդ Հայն՝ ուստի գու այժմ գտակդ ծուռ գրած կկոխես կանցնես, քո անբաղդ թագաւորի, իշխանաց, և Հանրին Հայաստանեայ եղբարց արիւնով ոսոգուած է. այդ լեռան՝ որի տակովն այդպէս երգով և դնդնալով կանցնիս, բիւրաւոր արտասուք, անյոյս, և անօգնական ընտանեաց, տիկնայց, և իշխանաց մերթ տպաւորանարան է եղած, մերթ տիրանենք մատնութեան և նախանձու ձեռքով զոհ Հարան, գոնէ, այդ տեղէն անցած միջոցի,

վերէժանդիր սիրտը թող անդամ մի շարժէ, երակներդիդ մէջի արիւնը, և եթէ դուռ օրնել չկարացիր, գոնէ կարեկցութեամբ ետ պատուէ նոցա արտասուելի յիշատակը։

Երկրատատանիրդիդ դարու մէջ կծանանիպէ այս ամրոցն քանի մի առանձնաց հանանուն դաւառի՝ Երկուամ Ներսէհեան, Եղբայրք Խանայ. յետ նորա Սմբատ քաջազօր իշխանն Սիւնեաց։ Ընդ այս ամրոցիս սատրապանիրդ անանուշ ապանէշի և սատրապի նշանարելի հաստատիպոդ հիմունքը, ժամանակի անկատած ամրութիւնը կը հատուցնեն. և հարիւրաւոր զերեզմանները, որք ամրոցիս սատրապը, զէպ ի Շահ-կերա առնոգ ծանապարհի ձախ թեւի վերայ կարկառի մի գլխին կանգնեին, և որոց ամենն մէկը կպարունակէ իւր մէջ մինչև 40-50 մարմինները, անանդին կարծել կտան այս տեղ թափած հազարաւոր մարդոց արիւնը և կոտորածը. ո՞ կարող է երկուանալ թէ այս զանազան փոսերի մէջ կուտ-

տակուած դիակներըը այն զօրացն կլինին, որք ժամանակաւ ամրոցիս դէմ մարտս կրուած և Ջարդուած, կամ երկարաձիգ պաշարման միջոցն դիւրածախ ախտով մի բռնուած, առ տեղեաւն հողը մոռած են։ Այս գերեզմանների հիւսիսակողմն, փոքր ինչ հեռի, բաւական ընդարձակ բլրակի մի վերայ կան դարձեալ պարսպի կամ պատնէշի աւերակներ, որոց համար "Արաշենեցի ուզեցոյցն իմ ասաց որ "բերդը դիակների օրուսաւուն՝ ինչպէս որ մեզանում պատմական խօսք ա ասում են,,։

Ո երջին ժամանակներն այս տեղ պատսասանած էին և Պարսկի զօրքը։ Յետոյ Նոցա և Ռուսաց սակաւամեայ բռնակը, մինչև որ բոլոր երկիրն իրանց ձեռքն առին։ Երբեք անպատմ է որ ես այս ամրոցի գլուխը բարձրացայ առաջանալի նեղութեամբ, և երբեք անպատմն ես զարմանքս պատել չկարացի, տեսնելով բարձր և ապառաժ լերան մի դլխին այնքան հոյակապ և բազմաթիւ արհեստական շինքերը։

Երկու ճանապարհ կայ միայն բերդն ելանելու, մին հարաւային և միւսն հիւսիսային. հիւսիսային ճանապարհն յառաջ այնպէս պատրաստուած է եղել, որ մէկ ձիով կարելի է եղած գնալ. իսկ այժմ շինուածոց միլաւակաց և ներսն գլխէն թափած սալերովն փակուած. որոնց ամենայնիւ ոտքով գնացողին համար միւսէն դիւրին. այս ճանապարհով բարձրացած ժամանակը, կանանց երեք ամրապինդ պարիսպներ քարուկիր շինուածքով, առաջնապարիսպն բաւական կիսոյն քանդուած է, միայն պահակներին տեղերն աւելի դիմացել են. միջնապարիսպն առաջնոյն չափ վնասուած չէ. իսկ ներքնապարիսպն դեռ կանգուն մնացած ամուր և բարձր շէնք մի է. այս պարսպի քովեր կան սենեակներ, որը քարուկիր, և որը թրծած աղիւսով կանգնած շինութիւնք, մեծաւ մասամբ անվնասք, իսկ պարիսպն անցած ժամանակը, կանանց հարիւրաւոր մեծ և փոքր սենեակներ, է որ քարուկրով, և է որ աղիւսով շինուած,

բոլորն ալ ամուր և ընտիր, որոց կապակու-
սի միայն ծածկը. լերան արևմտեան հա-
րաւային ծայրի վերայ գեռ մինչև այսր
օր և մնայ ամրող չ քարաշէն գիւղաքան
մի։ Ոչ տակաւ ուշադրութեան արժանի
են և նորա չրամբարները՝ որք թաւով բնն
հատ են, ամեն մէկը վեց քայլ լայնու-
թեամբ՝ քսան չորս քայլ երկայնութեամբ
և վեց կանգուն խորութեամբ։ Այս չրամ-
բարները լեռ քարէ կտրուած, սաչուած
և քառակուսի ձևով փոսացրած աւա-
զանները են, մանր մանր ճիւղերով փո-
րուած առուակներովն բոլոր անձրևները
և հալուած ձները կժողովուին անկորուստ։
Ամրոցի խիստ վտանգաւոր պաշարման ժա-
մանակ նոցա չրամբարները զովացրել են
պաշարելոց պասուքը. նոյն իսկ ամառուան
ոօթ եղանակին ամեն մէկի մէջ ևս չուր
գտնք, բայց մեռած՝ ինչպէս են սովորա-
բար անշարժ ճահիճների չուրը. երևի
գործ ածած ժամանակը աւազով կամ ուրիշ
հնարքով մաքրել ու կենդանացրել են։

Լերան գագաթը երկու ձիւղ բաժանուած է. այցելուն մի ձիւղի տարածութիւնը և վրայի շէնքերը դիտելէն յետոյ կպարտաւորի և միւս գագաթը ելանել ահ ու դողով, որ առաջինէն շատ բարձր է. այս ձիւղի վերայ գտնուած ազիւսակերա և բաւական մեծի մասին կանգուն շէնքերը տեսանողը, առաջինի վերայ ունեցած զարմանքը կզսպէ. դէպ ի հիւսիս և արևմուտք մոխիկ առուղ լերան մերկ և միապաղաղ գագաթին վերայ կանգնած հոյակապ կամարները, ընդարձակ քառակուսի դահլիճը, և չորս կողմի վայելուչ ճարտարապետուած շէնքերը արդէն ցոյց կուան իշխանական արքունիք լինելը, որով և երևամբ մերձակայ բնակիչք "Շահ—Խոսրով,, կանուանեն։ Ի՞նչ աքանչելի և դիւթիչ տեսարան կընծայեն այս տեղէն մոխիկ առուղին, Երնջակ գաւառը, Մասիսը, Երասխը, Նախիջևան քաղաքը, և Պարսկաստանի լեռները։ Արևելեան ճանապարհն չնայելով որ արդէն դժուարա-

կոխ և տարժանեցու ցիշ է, զարձեալ նրանք պարտապով ամրացած է. սրա ներքնաբերը-ղը, որ լերան գլխին է, այնպէս ամուր և անվտանգ է, որ կարծես նոր շինուած է. յաջմէ և յահեկէ կան երկու ընտիր և գեղեցիկ սենեակներ նոյնպէս անվնասք: Ս. յա ձանապարհն կտանէ զմարդ դէպ ի Երնջակ գեղը, որ մօտ ոմն կանցանի. վերջին ուաւեր պարսպէն դուրս եկած ժամանակը լերան տարտոսի վերայ բազմաթիւ շինութիւններ — տանց և պարսպաց մնացորդներ կտեսնէ մարդ, բոլորն ևս քարաշէն. բայց դժուար է որոշել թէ ինչ նպատակի են ծառայած:

Խոնջաղբ.

Երնջակաբերդի այս հարաւային տարտոսի վերայ այժմ կայ տաճկաբնակ գիւղ մի "Խոնջ—ագա", անուն որ կերևի հիմնեալ վերջին ժամանակներս. որովհետև բերդի այնքան անդամալար պարիսպներց ժա-

մանակ չէր կարող այս տեղ բնակութիւն ունել։ Բնակիչք գեղջա ծոյլ և աղքատ մահմեդականք են 50 տան չափ. նոր նոր սկսած են ծառաստաններ և պարտէզներ մշակելու ձեռք տալ։

Ներքնջակ գեղջ.

Միշտ տակաւ բերդի հարաւակողմն և ետ ի խրբ ջրոց վերայ հեռաւորութեամբ կան և մնաց գեղ հայոց Դշմարելի տեղ-բակք քաղաքիս, որոյ անուն ով և ամբողջ գաւառը կոչուած է. տարածութիւն քաղաքիս ձգուած է կէս մի հարթեալ լեռնապաշտակի, և կէս մի լեռների վերայ, բայց ասուն, որ կոյր՝ ոգէտ, և հնութեան յարկը չնայող թուք բնակիչք Խանդա գիւղի, վերջին ժամանակներս սակաւ առ սակաւ քանդելով տեղերն ապարակներ դարձուցած են, այնպէս որ այժմ հազիւ կան և կնշմարուին ցան և ցիր մնացորդք հիմանց, բաւ կիսոյն քարու։ կիր և բաւ կի-

ապն հողանիւթ շինութեանց։ Առաջուս քաղաքաւորդության՝ լեռնադաշտակի վերայ կանկանի գերեզմանատունն, որ այնքան բազմաթիւ հին գերեզմաններովն քաղաքին երբեմն բազմամարդութիւնն կը՝ յայտնէ. հնութեան ժանրքն ծախել է գերեզմանաց բոլոր արձանագրութիւնները, պահելով միայն ինչան քրիստոնէութեան մասնատպատ խաչերը. այնքան երկար գերելով քարերի մէջ հապիւ միայն մէկի վերայ այս գրերս որոշել կարացի ,,ԹՎԻՆ ՈՒԻՐ,,։ Որչափ շատ կերբեին հանգստարանիս գերեզմաններն, գեռ երկու բաժնի չափ հերկուած հողի մէջ անյայտացած են, յիշատակեալ գիւղի մօտերանդ բնակչաց հարամիա մախանօք։ Այս քաղաքիս մէջ եղև ազգային ժողովն ։այոց, Բարդարատ մեծ իշխանի, և Սմբատայ Բագրատունեաց մեծ սպարապետի օրով յամի 841, Ովսեփի Յովհաննէս Կաթողիկոսի վերայ եղած ամբաստանութիւններն քննելու համար։

Ա. Գ-Է-ՐԳԻ.

Երբ Ջան քաղաքի Հիւսիսակողմն, բարձրը և գեղեցիկ մի գլխին կանգնի այս վանքը յանուն Ս. Գ-էորգայ. շինուն թիւնն հաստատակ, քարուկիր. կանգուն կմնան միայն ոսմանքն, ուրի սեղան մի, և գաւառն երկուս. չունէր բնաւ արձանագիր. կից աւագ մատրանս ի Հիւսիսոյ եղած է մի ս և ս ազօթատեղի փոքրիկ, այժմ և նա աւերը բոլորովին բաց ի արևելեան ոսմոյ կէսն։

Առաջի աւ մատրանն դէպ յարևմուտս, լերան զառիվայր կուրծքի վերայ կատարածուի ընդարձակ գերեզմանատուն, որոյ շերմաց գեռ շատը հերկուած հողի մէջ ծածկուած անյայտացած հերկող արօրն ելրեսէն. մնացելոց մէջը կտեսնուին քանի մի փառաւոր մահարձաններ, այլ գրութիւններն եղծուած։ Մատրան քովերը գիւղի կամ բնակութեանց հետք չգտնելով հարբ-

կաւ կկարծուի որ և այս Հանգստարանը Երնջակ քաղաքին պիտի լինի դարձեալ, ուր ամփոփուած են շատերը առանձին կըտակով և բաղձանքով մի, ապա թէ ոչ փոքրիկ մատրան մի սակաւաթիւ ծառայողներոմն չէր ձեւանայ բազմամարդ Հանգստարան. արդիւնաւոր այրն, Յովհաննէս Եպիսկոպոս Շ՝ահխաթունեանց այս տաճարիս կամ մատրանս համար կկարծէ լինել առաջին մեներատան Ս. Կարապետի Երնջակու, զոր մեք չընդունեցինք վերս։ Ս. Գէորգայ մատրան հիւսիսակողմն հարիւր քսան քայլ հեռի, արաճայր ժայռին տակ փոքրիկ քարապատ խրճթիկ մի կար, որոյ մէջ գերեզման մի՝ վրայի քարը մէջ առեղէն բեկեալ, ուստէր զանազան նկարներ և փորուածք. իսկ եզերքի մէկի վրայ այս գրերս ‘‘ԵՂԻՆ ԹՈ,, գուցէ միւսքն եղծեալք. աւանդութիւն մերձակայ բնակչաց ‘‘Ն՝ԷԳՆԱՒՈՐԻ,, կկոչէ այս շիրիմս։ Ինչպէս յիշատակեալ մատուռն Ս. Գէորգայ, նոյնպէս

և այս դամբարան ուխտաւորեալք են մօտակայ Ֆ-ու գիւղէից։

Պ-ազանչի (Տ-ահիէրտ).

Երինջակ գեան ձախակողմն բարձրաւ անդրակի մի վրայ տարածուած բաւական բնդարձակ գիւղ մի է. գեղեցիկ տեսարան կընծայեն այս գիւղին՝ զինքն շրջապատող լեռներն և բլուրներն, որոց մէջ կան՝ որ մերկ են, և կան՝ որ բուսաբեր, կան՝ որ մեծ, և կան՝ որ փոքր։ Պ-ազանչին շրջապատող լերանց մէջ նշանաւորներն են յարևմտից Երինջակաբերդ, ի հարաւոյ «Զարբա-Պ-այա» (Ոչ՝ եղրածոր վէմ), և կը կոչուի այս անուանով նորա համար՝ որ ամենատաշելի գագաթին մեղուք բուն դրած են. ի հիւսիսոյ՝ անառիկ ամրոցն Պ-ազանչեայ, որ շատ անգամ ապաստանարան է եղած ողորմելի ժողովրդեան Պարսիկ ասպատակողներէ։ Եկեղեցի, և հանդիսարան արքեպիսկոպոսանիստ՝ կորովի բազկաց Խանդամի-

բեան Յովհաննէս իշխանի և արիապիրա
ընկերաց նորին, որոց համար Զամշեանն
կգրէ ,,էին արք զօրաւորք և հաստատու-
զուակք,, Այս աւանն ի հնումն շատ մեծ
և բարգաւաճ եղած է, և շատ անգամ
պատմութեան մէջ քաղաք կկոչուի։ Այժ-
մու բնակիչք գիւղս բոլորն ալ Հայք են
հարիւր տան չափ, որոց կէսն բնիկ, և կէ-
սն գաղթականք, բնիկ բնակչաց մէջ գրե-
թէ դեռ կփայլի նախնեաց անվեհեր և քա-
ջակորով արիութիւնը, անուանի են ձիա-
վարժութեան և զինակրութեան մէջ, և
ունածելի շրջակայ բնակչաց մօտ։

Այս գիւղի բուն անունն է Շ՝ահկերա,
որ ցոյց կտայ լինել Շ՝ահի գործ կամ դաս-
տակերտ, բայց հնութիւնն ցոյց տուած չէ
որտեղ սկզբնաւորութիւնն, անուանեն Շ՝ահ-
կերա,, տեղական աւանդութիւնն կմեկնէ
,,Շ՝ահ-գիրդ,, (Շ՝ահեմուտ) ինչպէս պի-
տի տեսանեմք ստորև։ Այժմու սովորական
կոչումն ,,Զ՝ազանչի,, առնուած է ի կիրառ-
աութիւն գրացի բնակչաց մէջ՝ գիւղիս դրախ-

նի բնակչաց արհեստէն, այս ինքն պղնձագործութենէն, որ ժամանակին գլխաւոր և կիրթ պարապմունքն էր Շ՝ահկերտցւոց մեծագոյն մասին։ Այս տեղ՝ ինչպէս կերևի՝ ամենևին մուտ գործել չէ կարացած լատինահայ ունիթօռաց ճարտարահնար խորամանկութիւնն, մինչդեռ մօտակայ գիւղօրայքը շատերը գլխովին որսացուել են. Շ՝ահկերտի նշանաւոր բազմամարդութեան և ծաղկեալ դրութեան վկայք են, մինչև ցայսօր դեռ նշմարելի աւերակներն ջրանցից, այգեաց, ջրաղացից և այլն։

Պատմեցին գիւղիս ծերունի բնակիչքը, թէ ‘‘Նախնեաց մեր գիւղումն քառասուն երկու ջաղացա էլել, ու հազար հինգ հարիւր տուն բազմութիւն,, Պարսից հարստահարութիւններէն և անդադար ասպատակութեանց անթիւ հարուածներէն ստիպուած այդքան բազմութիւնը գաղթել ու փոխուել են զանազան տեղեր, ուր տեղ ապահով ապրելու յոյս ունեցած են. այժմ Շ՝ուշի քաղաքին մէջ ա-

ռանձին թաղ և առանձին եկեղեցի կայ «Պ՝ազանչեցւոց» կոչուած, որոց մէջ կան դեռ մինչև ցայսօր Խանդամիրեան մեծանուն տոհմի շառաւիղները։ Պ՝ըխաւոր պարապմունք այժմու բնակչաց գիւղիս են երկրագործութիւնն, այգեգործութիւնն, խաշնարածութիւնն, մեղուաբուծութիւնը, և շերամատածութիւնն. արհեստներն են դարբնութիւն, հիւսնութիւն, ոստայնանկութիւն, և սափրչութիւն. երկրագործութիւնն ծաղկած է փոքր իշատէ, իսկ այգեգործութիւնն՝ գաղթականաց մէջ։ Ընիկ ժողովրդականաց լեզուն Նախիջեւանի գաւառական ջարբառն է, միայն շատ բառերի մէջ կլսուին Սիւնեցի հընչմունք, և այն մօտ դրացի լինելուն պատճառաւ է երևի։

Ընդհանրական եկեղեցի։

Հ՝ահկերտի նախնի մեծութիւն, փարթամութիւն և բարեպաշտութիւն հրա-

չակի հարկանողն այս եկեղեցին է ‘‘Ը.մե-
նափրկիչ,, անուամբ, ո՞ կարող է առանց
զարմացման տեսնել այսպիսի ընդարձակ
մեծադիր, և շքեղաշէն եկեղեցի մի. շի-
նութիւն համակ սրբատաշ քարամբք
տանիք եկեղեցւոյն և փոքրիկ կաթուղի-
կէն վայելչաձև չորս փառաւոր և ամրա-
պինտ սեանց վերայ հաստատուած են
թաղակապ. ունի երեք սեղան, մինն մի-
ջինն որ և աւագ, ընդարձակ և հոյակապ,
և երկուքն աջ ու ձախ կողմերն, երկու
խորաններրի վերայ. սորա շինութեան թո-
ւականն անյայտ է. գուցէ և փակուած
լինէին ի ներքուստ, կաթուղիկէի բոլո-
րակ պատուանդանին վերայ գրուած մե-
ծատառ տողին մէջ. բայց դժբաղդաբար
խոնաւութենէ եղծուած լինելով այն ըստ
մեծի մասին, հնար չեղև գրի առնելու:
Ն.կեղեցւոյ արևմտեան դրան ճակատին
դրուած փոքրիկ խաչքարի վերայ կայ գր-
ուած ‘‘Թ. ՈՒԱ’Գ շինեցին,, սակայն այս
կամ խաչքարի շինութեան կամ տաճա-

ըի նորոգութեան թուականը պիտի լինի ըստ որում տաճարի հնութիւնը և քարերի արդէն մաշուած լինելը ցոյց կտան որ այդ թուականէն շատ յառաջ պիտի շինած լինի։ Եկեղեցւոյ պարտապատ գաւթին մէջ կան քանի մի գերեզմաններ գեղանին հետ հաւասարք, և առանց արձանագրոց. միայն մէկի վերայ այս արձանագիրն էր, Այս է պապան խօճայ Յովհաննէսին, որ փոխեցաւ առ Քրիստոս թվին ՈՌ՚ԶԸ,, գուցէ սա լինի Խանդամիրեան Յովհաննէս քաջ իշխանին գերեզմանն. որ թէև դեղակուր եղև Նախիջևանի մէջ, բայց հաւանական է կարծել որ մարմինն փոխադրուած լինի այս տեղ։ Որա մահուան թուականի և այս արձանագրի մէջ հինգ տարի զանազանիլն միայն կարծիքի տակ կթողու։

Ս. Յովհաննէս։

Գիւղի մէջ տեղը քարուկիր շինութեամբ եկեղեցի մի եղած է այժմ ֆնան

միայն հարաւային կիսագունդ որմն և դուռն իսկ այլ ամէն շինութիւն հեղեղն բաժին է եղած. որ փոքր առ փոքր իւր սովորական ճանապարհը թողլով, և ընթացքը ուղղելով այս եկեղեցւոյ վերայ, սրբել է միանգամայն, որոյ սեղանոյ տեղն այժմ ուռենիք սաղարթ արձակած են. յիշատակեալ դրան մէկ կողմի քարին վերայ միայն գտանք այս գրերս «ՊԴ», գիւղացիք պատմեցին որ երեք տարի յառաջ վայրի ոչխար մի իւր ոտքովն եկաւ պարկեց այս եկեղեցւոյ դրան առաջին իբրև մատաղ և իրանք մորթեցին ու բաժանեցին բոլորի վերայ։

Քաղքանոցքայ։

Ի՞ն շինուածոց մէջ տեղ կոփածոյ քարամբք և կրով կանգնած ամուր և նշանաւոր շէնք մի է. որոյ արևմտեան կողմի տանիքն այժմ փլած. ինչպէս այժմ երթևեկ օտարականաց, նոյնպէս և ի հը-

նուռն մեծափարթամ կարաւանի հանգստարանն կամ իջևանն է եղած։ Այս կարաւանոցի չորս կողմն սփռած են ամայի կիսափուլ աւերակներն բնակարանաց տառապակիր նախնի Շ՝ահկերացւոյ. բայց դոցա շատերն ևս հողի հետ հաւասարուելով այգիք են ձևացած։ Պարվանսարայի արևելակողմն իբրև երեսուն քայլ հեռի, կայ կանգնած վայելչաքանդակ բարձր խաչքար մի, որոյ եզերքին գրուած "Ես դրիգոր կանկնեցի խաչս զայս իմ հոգւոյս . . . թվ Շ՝" բայց թէ ինչու համար կանգնեցրել են այս տեղ այս խաչքարն չիմացուեցաւ։

Ռէրդ Ղ՝ալանեանց։

÷. Միքայէլի յիշատակած բերդն է այս՝ ի թիկանց Շ՝ահկերտի, ուր ամրացան ÷էյտար խանի հարստահարութեան երեսէն ահաբեկեալ Շ՝ահկերացիք. այս բերդն՝ յիրաւի ինչպէս կգրէ նոյն պատ-

ժիշ ‘‘ սրածայր և անմատչելի լեառն է, որոյ վերայ կանգնած ամուր դղեակն ըստ նորուն,, կայր շինեալ ի վաղ ժամանակաց . . . . և էր այն տեղի ապաւինութեան քաղաքացւոց,, Պարիսպն՝ զոր նախանձելի իշխանն Յովհաննէս կանգնել տուած է ապաստանեալ բազմութիւն ապահովելու համար, ցարդ ևս կպատէ կիսաւեր ոմովք դղեկի ստորոտը. նոյնպէս կան և աւերակք աշտարակին, որ շինած էին լերան քովն, մօտավաղ գետէն (Ն-ընջակ) անվնաս և ապահով ջուր առնելու համար։ Այս ամրոցիս վերայ Յովհաննէս իշխանն Խանդամիրեան իւր հինգ հարիւր զինակիրներովն ՝Էյտար խանին՝ Նախիջևանի— մարդախոշոշ բռնաւորի ահագին բազմութեանն և կատաղի սրրտմտութեանն երկար ժամանակ դէմ դրեց քաջաբար, առ ոչինչ համարելով նորա սպառնալիքն և ստապատիր խոստմունքն. բայց երբ որ իւր փոքրաթիւ խմբի մէջ տեսաւ մտած երկպառակութիւնն, այն

ժամանակ յուսակտուր և ճարահատ անձ-
նատուր եղև ինքնին, և Ֆէյտարի չա-
բամիտ հրաւիրանօքը Նախիջևան գնա-
լով, գեղ մահու ընդունեց և կնքեց իւր
կեանքը. նոքա հետ և այնքան ողորմելի
գերդաստաններ զոհ գնացին անօրէն
Պարսկի դառնութեանն. արտասուելի
ճշմարտութիւն է, որ բնութիւնը հայի
բազուկը անգծելի զէնք հատատեց, բայց
զայն չգործածելու համար սիրտը անկեր-
պարան հրէշ մի դրաւ—անմիաբանու-
թիւն, զայն ի ներքուստ միշտ կրծելու և
թուլացնելու համար։

Այս տեղ ցարդ ևս պանծանօք կյի-
շատակեն այս ամեն անցքերը բնակիչք
տեղւոյս, Խանդամիրեան Յովհաննէս իշ-
խանն, դժբաղդ հայ զօրագլուխն կկոչեն
"Խօջայ վանի", և այն արիասիրտ աներ-
կիւղ այրն Գրիգոր, որ յարձակելով մի-
այնակ՝ աշտարակն պաշարող Պարսկաց
վերայ հալածեր է ի բաց, ինչպէս կգրէ
Ս. Միքայէլն (հատ. գ. եր. 846) կան-

անեն մականուանմբ ։ Պարու Գ-իրգոր,, կմնան ցարդ ևս և աւերակ տեղիք երկու այդեաց և տանց Խանդամիրեան իշխանի, որոնք բնակչաց մէջ կասուին ''Խոճայ Վ-անու յիդին,, ''Խոճայ Վ-անու տնե-ը,,։

Շ-ահ—Բէկի Յոչ

Շ-արկերտի արևելակողմն է այս ձորը կպատմէ տեղական աւանդութիւնն, թէ նորա համար կոչուեցաւ ''Շ-ահ—բէկի,, որ Գ-ազանչեցի Խոջայ Գոստին Շ-ահ Աբբասին այս տեղ արքայավայել ճոխ սեղան տալով հրաման առաւ շահէն որ և իցէ շնորհ խնդրելու. և խնդրեց թէ ինձ իրաւունք տուր այս տեղ գեղ շի-նեմ, և ի պատիւ ձեր անունն դնեմ ''Շ-ահ գիրդ,, ի. և շահն հաւանելով առաջարկութեանն, կկատարէ հայցուա-ծն երևի թէ ասպատակութեանց գերու-թեանց և հարստահարութեանց պատ-

ձառաւ այս աւանն ժամանակաւ բոլորովին անմարդացել և ամայացել էր, մինչև որ Շահաբբասի հրամանաւ յիշատակեալ խօճայ Գոստին կրկին բնակութեամբ զարդարել է. ինչպէս աւանդութիւնն ցոյց կտայ. կամ գուցէ աւելի հին ժամանակի տալու փոխանակ, Շահաբբասի օրով կդնէ այսպիսի անցք մի, ապա թէ ոչ, Շահկերտ անունն շատ հին է քան զՇահաբբաս։

Կամուրջ Շահկերտի։

Գիւղի առաջեաւը, Երինջակ դետի վերայ կանգնած կոփածոյ քարամբք և թաղակապ ամուր շինուած կամուրջ մի է, յիշատակ խօջայ Պօղոսի Ղազանչեցւոյ. որոյ և յիշատակարանն կար արձանագրած ճակատին, բայց ջրոյ յարդութեան պատճառաւ չկարացի մօտենալ ու կարդալ։

ԹԷՔՅԼՈՂ

Ղաղանչուն սահմանակից և իբր չորս վերստ հեռաւորութեամբ հովտաձև դաշտակի մէջ շինուած է այս գիւղն, երբեմն, հայաբնակ. այժմ ունի իւր մէջ երեսուն տուն մահմեդական բնակիչ. հայոց տների աւերակներն և գերեզմաններն կան գիւղէ արևելակողմն. բլրակի վերայ, գերեզմաններն շատ հին են, ուստի և արձանագրութիւններն եղծուած ու մամռապատ լինելով չկարդացուեցան, միայն մեծ խաչքար մի կար կանգնած, որոյ ճակատին գրուած ‹‹ԹՎԻՍ ՌԾԳ››, և խաչի պատուանդանին ‹‹ի բարեխօսութիւն Դաւթի›› միւսներն անվերծանելիք։

ԵՐԷՂԵՑԻՆ ԹԷՔՅԼՈՂԷ

Գիւղի մէջ տեղն միջակ մեծութեամբ և բարձրութեամբ փառաւոր և գեղեցիկ

շէնք մի է, կոփածոյ քարերով կանգնած թաղակապ, չորս սներրի վերայ. տանիքն երկու տեղ փլած. ամենևին չունէր արձանագիր, ունի մի սեղան և երկու աւանդատուն. ձախակողման դասու սեան մօտը գերեզման մի կայ, որոյ կոփածոյ մահարձանը չունէր գիր։

Վ ԷՐԷՆ ԱՆԳՈՒՐ. (ՌԱՇ ԸՆԳՈՒՐ)

Թէյվազին սահմանակից՝ դարաւանդի վերայ տարածուած գիւղ մի է, բնակութիւն 40 տուն մահմետականաց. իսկ ի հնումն բազմամարդ աւան ՝այոց. որոց քարաշէն շինուածոց կան և կմնան աւերակներն. անունս ‘‘Ընզուր հայացի ‘‘Ընկզաձոր բառն է, առնուած ինչպէս այս, նոյնպէս և երկու համանուն գիւղերի ընկզենեաց բազմութենէն, որ աղաւաղուելով տաճկական շրթանց մէջ դարձել է ‘‘Ընզուր,,

ԼԵՌԵՑԻ ԳԵՂԸ

Բարաշէն վայելչակերտ, և փոքր գրութեամբ փառաւոր եկեղեցի է. շրջս կիսաստեանց վերայ թաղերով հաստատուած. ունի սեղան մի, և երկու աւանդատուն և դուռն մի արևմտեան. տանիք եկեղեցւոյն միանգամայն խոնարհած է։ Դրան արտաքին ճակատաքարի վերայ գրուած է «Հիմնարկեցաւ ի թուական ՈՒԾԿԸ՝ առաջնորդութեամբ մերս Տեառն Մատթէոսի արհի եպիսկոպոսի»։ Արևմտակողմն գիւղին է ընդարձակ գերեզմանատունն ±այոց հին ժամանակի։

ՄԷՋԻՆ ԱՆԳԼ-Ը (ՕՐԻԱՅ—ԱՆԳԼ-Ը)

Ղերնոյն սահմանակից՝ ձորակի մի մէջ կանկանի այս գիւղ, հնուն հայաբնակ, իսկ այժմ տասն տուն մահմեդա՛նաց պատսպարան. հայ շինուածոց կիսակործան աւերակներն կան միայն։

ԵՒԵՂԵՑԻ ՔԵՂՋԸ։

Գիւղի արևմտակողմն բարձրաւանդակի վերայ շինուած է այս եկեղեցի անշուք, միջակ մեծութեամբ. այժմ չորս որմունքն կան. հարաւակողմն՝ եկեղեցւոյս պարսպի տակ է գերեզմանատունն հայոց. որոց արձանագրերէն վեր առինք միայն հետևեալքս.

"Այս է Տապան Աննիկին տէրտէրի Թ. ՈՒԱ'ԽԱՀ ին.,

"Այս է Տապան Մաթոսին թուին ՈՒԱ'Ի,"

Եւ և միւս գերեզմանատուն հայոց բաւական մեծատարած, եկեղեցւոյ արևելակողմն, ճանապարհի ձախ թևի վերայ, միայն հնութեան երեսէն արձանագրերն բոլորն եղծուած։

Նէրսէն Ընկեր (Դէպ Ընկեր)

Զորի մէջ ընկած քառասուն տուն մահմեդական բնակիչ ունեցող գիւղ մի է, ի հնումն փարթամ և բազմամարդ ազան հայոց. ինչպէս ցոյց են տալիս նախկին հայակերտ կիսաւեր շինուածոց մնացորդքն, և ընդարձակ գերեզմանատունն. բոլոր շինութիւնքն փառաւոր, մեծամեծ բարձր, և քարաշէն։

Ուէրեցէ գեղջ,

Պարուկիր թաղակապ. և հոյաշէն շինութիւն է, չորս սեանց վերայ հաստատուած, այժմ տանեաց կէսն և որմոց շատ տեղերն խոնարհեալ։

Գիւղին մէջ տեղը ձգուած ճիթահանի քար մի տեսի։ որոյ տափակ երեսին վերայ գրուած էր "Այս սրանոցն Ալէքսանի որդւոյն (քանի մի գիրն անվերծա-

նելի) թվին ՌՀԾ։ Գերեզմանատունն տխուր զգացմամբ շրջելէն յետոյ հետեւեալ արձանագիրս միայն առնել հարկ համարեցի, որք են.

«Այս է տապան Նաւասարդի որդի Ասատուրին. թվին Ռ»

«Այս է տապան Ծատուրին, որ հանգեաւ առ Քրիստոս թվին ՌՂԴ»

«Թվին ՌՀԾ այս է տապան Նուաստ Խղաթին որ փոխեցաւ առ Քրիստոս»

«Այս է տապան Նուաստ Սարգսին թվին ՌՀԹԿ»

«Տապանս Վարդիկին թվ. ՌՀԾԴ»։

Այս թուականներէ վերայ ուշ դարձնելով կտեսնենք որ շատ ժամանակ չէ անցած գիւղիս հայ բնակչաց ջնջուելը, և տաճկաբնակ լինելը. բայց թէ որպիսի առթիւ և ճակատագրով, դժուարին է գիտել. գերեզմանոցի արևելակողմն ճանապարհի ներքևը երկար ու կարգաւ ձըգուած կան մնացորդք աւերակաց փոքրադիր շինութեանց, և կերևի որ եղած լի-

նին ժամանակին կրպակներ։ Կան նա և այգեաց նշմարելի ցանկեր։՝ և ամէնքն ի հարկէ ցոյց կտան գիւղի երբեմնին մեծութիւնը, փարթամութիւնը, և բնակչաց աշխատասիրութիւնն։

Հ. ԺԹ.

Հովտաձև դաշտակի մի վերայ կանկանի այս գիւղը, երբեմն նշանաւոր ծաղկեալ և փարթամ աւանն Հայոց. աւանդութիւն տեղացի ծերոցն կասէ՝ որ հընուն քառասուն չորս գլխաւոր վաճառականք կային (խոճայք) որոց տուրևառն էր Պոլսոյ և այլ նշանաւոր տեղեաց հետ։ Գիւղիս բազմաթիւ հոյակապ և մեծածախս հին շինութիւններն տեսանողն, յիրաւի կարդարացնէ աւանդութիւնն. շրջեղակառոյց եկեղեցիքն և Մենաստաններն, փառաւոր և հոյաշէն տներն, և սենեակներն (զէրզամբի) աղբիւրներն, ջրամբարներն և գիւղի հարաւակողմն ցան և ցիր սփռած պէսպէս շինուածոց մնա-

ցորդներն, կվկայեն բնակչաց երբեմնին բազմամարդութեանն, ճոխութեանն և յառաջադիմութեանն։

Այժմու բնակիչք տեղւոյս են քսան հինգ տուն հայ և եօթն տուն թուրք. որք կըպարապին երկրագործութեամբ, այգեգործութեամբ տաւարաճարութեամբ, ոմանք նա և մեղուաբուծութեամբ և շերամաճարութեամբ։

Ս։ Յակոբ Եկեղեցի.

Գիւղին մէջ տեղ փառաւոր, հրաշակերտ և հոյակապ եկեղեցի է, համակ կոփածոյ քարերով ներքուստ և արտաքուստ. երկայնութիւն շինութեանն արտաքուստ քսան ութը քայլ, և լայնութիւնն տասն ութն. սագալանջ տանիք եկեղեցւոյն և աղեւսակերտ վայելչաձև կաթուղիկէն հաստատուած են չորս մեծամեծ չքնաղաշէն սեանց վերայ, ունի ընդարձակ բեմ և սեղան, և երկու աւանդատուն. ձախակողմեան աւանդատան ձա-

կաաին բարձր դրուած մարմարեայ քա-
ռին վերայ դրուած է ‘‘թվին ՌՂԸ շի-
նեցաւ սուրբ Յակոբայ թվին ՌՃԸ
կանգնեցաւ խաչս յիշատակ Փշրկանց
խոճայ Մարգարին կողակցացն Նազլու
խանին և մարգարիտն. որդիքն Սահակն,
Օշաքարէն, Սուքիասն և միւս մերձաւորք
նոցա,, Սեղանոյ աջակողմեան կիսասեան
ճակատի փոքրիկ մարմարեայ քարին վե-
րայ բոլորակ գրեալ ‘‘Տէր Աստուած, Յի-
սուս Քրիստոս. օրհնեցաւ սուրբ սեղանս
ձեռամբ ամէն . . . . . թվ ՌՃԻԵ
յիշատակ Հ՝օռօթայ հասարակութեան,,
բաց ասոի յաջակողմեան խորանի ճակա-
տին կային և ես երկու մարմարեայ քա-
ռինք, բայց գիր չկարացինք նշմարել. ար-
ձանագիր մի և ես երկտող՝ ճնաց անվեր-
ծանելի եկեղեցւոյ հարաւային երկրորդ
սեան կամարի վերայ բարձրութեան պատ-
ճառաւ։ Կաթուղիկէի արտաքին գօտւոյ
վերայ շրջապատ տող մի գրուած էր խոշո-
րագիր այսպէս ‘‘շնորհօքն Աստուծոյ շի-

նեցաւ Կաթուղիկէս եկեղեցւոյս ի Հայ-
րապետութեան Տեառն Աղէքսանդրի և
առաջնորդութեան սուրբ Կարապետին
Սիմէօն վարդապետի. արդեամբ Հ. Օռօ-
թայ իշխանաց Սամուէլին. Այվազին,
(եղծեալ քանի մի բառն) թվ. ՌՃԾԳ,,
ունի տաճարն երեք դուռն. արևմտեանն
փառաւոր, մեծ, և գեղաքանդակ, գործ
ճարտարուեստ մատին. առաջեաւ դրանս
եղած է նոյնպէս մեծ վայելուչ գաւիթ
չորս սեանց վերայ թաղով հաստատու-
ած, որ յամի 1841 կործանուելով (ինչ-
պէս և կաթուղիկէի հիւսիսային գագա-
թը) երկրաշարժէն փլատակի տակն ա-
ռած է մօտակայ տան մի բնակիչ հինգ
անձինք. այժմ կան միայն չորս կամարի
հիմունքն. Այս գաւթիս մէջ եղած են
մինչև տասնի չափ խաչքարինք, որոց մի
քանին գեղաքանդակ, և կգտնուին այժմ
եկեղեցւոյ մէջ. երկուքի արձանագիրն
առինք ի գիր, մին այս ,,սուրբ խաչս
կանգնեցաւ ի թվիս ՋԼՈՒ հոգւոյ փըր-

կութեան Ղազարին և իւր կողակցին Դուշիկին և իւր ծնողացն Խութլի բէկին Օ՝աքարին Հուռումին Մեսիրին,, միւսն՝ ,,սուրբ խաչս յիշատակէ Ամիրին ծնողաց Մարիամին որդւոյն Ազիզ բէկն Ասպահանայ թ. ՈՀ՝Ն,, շուրջ եկեղեցեաւս է պարիսպ քարաշէն, տաճարի հարաւակողմն եղած են աղեւսակերտ թաղաշէն վայելչաձև սենեակք, որոնք այժմ աւեր են։

ՍոՒԷ ՀՆՉԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Ս. Յակոբայ յարաւակողմն է այս աւերեալ եկեղեցին որ եղած է բաւական մեծ և շքեղ. այժմ կտեսնուին միայն արևմըտեան և հարաւային որմունքն քարաշէն և չորս սներրի ու սեղանոյ հիմունքն. ունեցել է և գաւիթ փառաւոր երկու սներրի վերայ հաստատուած, որոց միոյն դեռ կէսն կանգուն միւսն մինչև հիմն խոնարհեալ. հարաւային դրան ճակատաքարի ներքին երեսի վերայ գրուած էր

''Թվկ ՈՒԿՐ սուրբ խաչս յիշատակէ Սալուր բէկին որդւոյն Հայրապետին,,

Ս. Աստուածածնէ անապատս Կոստանդ.

Գիւղի հիւսիսակողմն կէս վերստ հեռի կանկանի այս անապատս, որ միջակ մեծութեամբ, քարուկիր և կամարակապ շինուած մի է. աւանդութիւնն տեղական ծերոցն կասէ որ քառասուն կուսանք կային այս տեղ - այս անապատիս մէջն է գրուել Վարդարիտ կուսի ձեռամբ յամի ... այն աւետարանն, որ կայ Ս. Աստուածածնի գրադարանի մէջ։ Տաճարն ունի մի սեղան և երկու խորան բեմ սեղանոյն կապուած է բոլորն գեղաքանդակ խաչ քարերով։ և ամէնքն ևս ունին արձանագիր. միայն աջակողմեան ծայրի առաջին երկուքն թուական ունելով արժան համարուեցան օրինակելու. առաջինն է այս ''խաչս յիշատակ է Խաթունին թվ. ՌԾԴ,, երկրորդն ''սուրբ խաչս յիշատակ է Փր.

. . . . Մաթոսին, և մայրն Դոմանին, Մարիամին տուն սորա Օվանէսն որ փոխեցաւ առ Քրիստոս թվին ՌՃԻԳ,, Ունի տաճարս մի դուռն միայն — արևմուտեան, որոյ աջակողմն կապտագոյն խաչքարի վերայ գրուած է. ,,սուրբ խաչս կնիկ հոգւոյ փրկութեան Ղ՝ն յօրին մըգրին ՌԴ. թվին,, սորա ձախակողմն է մեծ և գեղաքանդակ խաչքար մի, որ ունի գրուածս ,,սուրբ խաչս յիշատակ է Ղ՝ր. դնս քահանայի սկիզբն և շինող սուրբ Աստուածածնիս և քեռ իւրոյ Մարիամին մաւր ուխտիս, և միւս քեռ Եղիսաբէթին։ ծնողացն Սուլթան բէկին Միհրպանին թ. ՌՃ՝ և ԺԴ, դրան. ձախակողմն կապտագոյն խաչաքարի վերայ ,,Մըքին թամ Մխթրն,, թուականն եղծեալ. սորա ձախակողմն դարձեալ գեղաքանդակ խաչքար մի, որոյ վերայ գրուած ,,սուրբ խաչս յշատակ է Յհնս քհնյի հոգաբարձու և վերատեսն նորգղ սուրբ ուխ-

տիս. և Ծնողացն Գրիգորին և Օրիկն կողակիցն Սողոմին որդ, Արգրին եղբարցն Թաթոսն Հայկ,, միւսն եղծեալ։ Դրան առաջեաւ եղած է աղիւսակերտ կամարակապ գաւիթ երեք սեանց վերայ. այժմ կործան. գաւթի հարաւային սեան տակն է գերեզման խոջայ Խառուսին, որ խեղդամահ եղած է անապատիս կրօնաւորելոյ անարգանաց վրէժն առնելու համար*) Մենաստանիս չորս կողմն եղած

(*) Աւանդութիւն բնակչացն կասէ որ տեղւոյս 1500 տուն բնակիչներէն երեք հարիւրն մահմետական էին. դոցա մոլեայն կախարդական բժժանօք յինքն ձգելով անապատիս կրօնաւորեալ կուսաններէն երկու դեռափթիթ չքնաղ աղջիկներ, երկու տարւոյ չափ գաղտաբար կպահէ զիրենք իւր տան մէջ. յայտնի լինելէն յետոյ խոճայ Խառուսն գիւղի միւս խոճաների հետ վրէժխնդրութեան հնար մտածելով, գիշերուան մի մէջ տաճկաց մզկիթն այնպէս կործանել և յատակել կտայ, որ նշանն անգամ չերևի. ձայնն Նախիջեւանի Զանդ Քեարիմ խանին հասնելով կհրա-

են քարաշէն սենեակներ մանաւանդ հարաւակողմն, որն բնակարան կրօնաւորելոցն և որն զանազան պիտոյից համար, հարաւային պարսպի տակն է և այդին վանուց, որ մինչև հիմայ ևս ‘‘անապատի բաղ,, կասուի. որոյ մէջն է ընկուզենի մի ‘‘մարգարտի ծառ,, կոչեցեալ յանուն կուսի ուրուն հիւսիսային պարսպի տակն է գերեզմանոցն կուսանաց ուր կան յիսնաչափ գերեզմանք, որոց երկուքի արձանագրերն գրի առի, որք են ‘‘Այս է տապան Փանիկէի դուստր Ընուամէին փոխեցաւ առ Քրիստոս թվ. ՌՃ՚ԾՐ,, ‘‘Այս է տապան Պետրոսի դուստր Կռաթին փոխեցաւ առ Քրիստոս թ. ՌՃ՚Ծ։

մայէ խեղդել Խառումը։ Գիւղի հիւսիսակողմն կան ցարդ ևս խոճայ Խառումի աւերակ տներն. իսկ ստորերկրեայ կամարակապ ‘‘զերզամբին,, դեռ անվնաս։

Ս. Լուսաւորչի վանք։

Կուսանաց անապատի արևելակողմն կէս վերստ հեռաւորութեամբ շինուած է այս մենաստանն կոփածոյ քարամբք, հոյակապ, և վայելչակերտ, միջակ դրութեամբ, լայնութիւնն ի ներքուստ ինն քայլ, և երկայնութիւնն տասն և վեց. ունի փոքրիկ աղեսակերտ կաթուղիկէ, որ սագաշէն տանեօքն միասին հաստատուած է երկու կամարակապ սեանց վերայ. ունի սեղան մի և երկու խորան, (աջակողմեանի վերայ վերնատուն) առաջեաւ տաճարին է գաւիթ վայելուչ չորս սեանց վերայ հաստատուած, որոյ ներքին կողմն գեղեցիկ նկարներով և երանգներով զարդարած է եղած, այժմ նշմարելի մնացորդքն կմնան. կաթուղիկէի արտաքին շրջապատի վերայ կայ գրուած "Շնորհօք ամենազօրին Աստուծոյ շինեցաւ կաթուղիկէ եկեղեցւոյս աշխատութեամբ Գրիգոր Վարդապետին տրօք և

ողորմութեամբ Հ. օրհնութիւն ժողովրդեամբ-
բն օգնականութեամբ մահդասի Յովսէ-
փի որդի Նազարէթին և կողակից Մարիա-
մին ի թագաւորութեան Հայ-Սուան
Իւսէյնի ի հայրապետութեան Տեառն
Ղէորգանդրի և յառաջնորդութեան
սուրբ Կարապետին Սիմէօն Վարդապե-
տին և գեօղիս Մէլիք Փարսադանին և
վանից միաբանիս Տէր Մարկոս Տէր Մի-
քայէլ և Տէր Յովսէփ ''Թվ. ՌՄԾԼ,,
Հրջապատ մենաստանիս ձգուած է քա-
ղաքաշէն պարիսպ ամուր, ի տեղիս տեղիս
քայքայեալ գաւթի առաջն արևմտակող-
մըն եղած են երկու փոքրիկ բայց գեղե-
ցիկ սենեակներ, այժմ կիսաւեր. հիւսի-
սակողմն գաւթի պարսպին մէջ կայ պա-
հարանակերպ խորշ մի, ուր կան քանի
մի խաչքարինք և ունին յիշատակագրու-
թիւններ, բայց դժուարին եղև կարդալն
միմիայն քար մի հանուած է ատի և կը-
զանուի եկեղեցւոյ մէջ, որոյ վերայ կար-
դացի ''Մուլք վանիցն ծա խալվար,, գաւ-

թի մէջն, ինչպէս ասացի կան երկու եպիսկոպոսաց շիրիմներ, միայն աղիւսների դարսուելուն պատճառաւ չտեսի։ Տաճարի հարաւակողմն է աղբիւրն վանից որ ունի աւազան կոփածոյ քարերով, և այժըմ ցամաք է ու աւեր. աստի հանած են մարմարեայ քար մի, որոյ վերայ գրուած է "Երդի թուականիս ՌՃԴ, մեք Հ. Օ. ռօթեցի Փշրկանց Խոճա Սահակս և Հ. Աքարեայս բերաք աղբիւր ի գեօղս Յիշատակ մեզ և ծնողացն Մհդասի Մարգարին և Նազլու-Խանին և կողակցացն մերոց Մարեամանցն և մեր որդւոցն Թումասին ի ժամանակս Հայրապետութեան Տեառն Յակոբայ և Թագաւորութեան փոքր Հ. ահաբասին. Յիշողք Յիշեալ լիջիք,, մի և նոյնն գրուած էր պարսկերէն լեզուաւ Հայերենէն վեր. արտաքոյ պարսպին արևմտակողմն և հարաւակողմն ազգի ազգի շինուածոց կիսակործան մնացորդներն կան. իսկ հիւսիսակողմն պարսպին կից, է կրապատ քարա-

շէն ջրամբար մի, ուր տեղ ջրերը ժողովելով գործ դրած են վանուց ջրաղացը շարժելու համար. այս ջրամբարէն փոքր ինչ հեռի է գերեզմանատունն, ուր կան երեք փառաւոր շիրիմք. առաջեաւ մենաստանին կանկանի առու ձորակաձև, ուստի կվազեն սովորաբար հեղեղացած անձրևաջրերը։ Տաճարի դիմացը կանգնող ու մոխիկ տուող աչքին կներկայանայ ամէն կողմէն չքնաղ և զուարճալի տեսարան. Յայտնի չէ թէ երբ ամայացած է այս մենաստանն, միայն ցաւալի է որ դեռ նոյն վիճակի մէջ է, կալուածոց շատերը թէև անտէրութեան պատճառաւ ընկած է թուրքերի ձեռք, բայց գործունեայ ձեռքով շուտով կհաւաքուին, ըստ որում օտարանալը շատ ժամանակ չէ։

Ս. Սրբոյն

Հ՝օռութէն հինգ վերստ հեռաւորութեամբ դէպ ի հարաւ լերան մի գլխին շինուած է այս մատուռն յանուն Ս.

Ստեփաննոսի, շէնքն հասարակ քարով և հողով. իսկ տանիքն թրծած աղիւսով թաղ առած. ունի և սեղան մի փոքրիկ. բեմի առաջին կանգնած նրբաքանդակ խաչքար մի կայ, եզերքն արձանագրուած «սուրբ խաչս կանգնեցաւ՝ հոգւոյ փրկութեան Ամիթարիս. Սաւլանի Նեկահ հարիաւ Ուս», խաչի պատուանդանին «Ամուսածատուրի Ղնահորին Սիրամարգին Մելքիսեթին Տատում Ղազարին Գուլումին ի թվիս ՅԼԵ» Մատրան առաջին գաւթի ձևով երկ յարկ երկու սենեակ կային քարաշէն, կիսաւեր։

Ս. Եղիա Մարգարէ

Գիւղի հարաւակողմն, բլրակի մի վերայ կայ աւերակ փոքրիկ մատրան յանուն Եղիա Մարգարէի։

Ուղիղ գիւղ

Գիւղին մէջ երեք տեղ խողովակներով բերուած է ջուր. երկուքն այժմ ո-

չնչացած հաղիւ նշաններն թողած են. իսկ մինն, որ ‘‘սուրբ նշանի,, մօտն է հարաւակողմն, կոփածոյ վէմ քարերով և գեղեցկաշէն աղբիւր մի է, բայց այժմ խցեալ ունի երկու մեծ աւազան։ արևմտակողման աւազանի մէջ մարմարեայ մեծ քարի վերայ Պարսկերէն և Հայերէն գրերով վերոտողած է միևնոյն արձանագիրն ինչ որ Ս. Լուսաւորիչ վանքի աղբիւրի քարին վերայ ‘‘Երդի թուականիս ՈՒԾ-ԺԴ։ և ին։

Լեռ Շ՝ օ—ռ—ին.

Գիւղ հիւսիսակողմն վերստ ու կէս հեռաւորութեամբ մեծ և ընդարձակ լիճ մի եղած է, որ բնակիչներն սովորաբար կանուանեն ‘‘Գրիս—այաղը,, (քառասնոտանեան) այս լիճն հեղեղների և անձրևաջրոց բերած հողովն և խճովն այժմ միանգամայն լցուած հաւասարուած է թմբերին. բայց դեռ մինչև ցայսօր ամբողջ կանգնած կայ սրբատաշ քարուկիր

շինութեամբ հարաւային որմն լճին. ջրանցքն այնքան լայն շինուած է, որ մարդ մի կարող է քիչ մի կորացած մանել ներս։ Շինողք լճիս դարձեալ փշրկանց բազմամամբ ցեղի շառաւիղքն են, հարազատքն Սահակ, և Օ՝աքար, վերոյիշատակեալ աղբիւրների բերողները, որոց և յիշատակն մարմարեայ քարի վերայ գրուած, կայ ագուցած նոյն հարաւային որմոյն մէջ։

Գ՝էրզէղմանատուն Շ՝օրոխայ.

Ընդարձակ գերեզմանատուն մի է, շքեղ և բազմաթիւ մահարձանօքն այցելուի զարմանքն շարժողն. ուր կան բաւական հին շերիմներ, բայց ամենէն աւելի աչքի զարկողներն և նշանաւորներն Փշրկանց մեծանուն ցեղի գերդաստանաց գերեզմաններն են. որոց միայն չորսը գրի առնուլ հարկ համարեցինք. և սոքա են.

"Այս է տապան Գ՝ազարի որդի Գ՝իւան բէկի աղա Մուրատին որ փոխեցաւ

առ քրիստոս թվին հայոց ՈԳՐ,,

,,Այս է տապան Փշրուկ հազարապետի աղա Մուրատին որ փոխեցաւ առ քրիստոս արքայն թվին հայոց ՈՌՐ,,

,,Այս է տապան Փշրուկի որդի Խոջայ Սահակին, որ փոխեցաւ առ քրիստոս արքայն թվին հայոց ՈՌԽԸ ին,,

,,Այս է տապան Սարումի որդի աւագերէց տէր Օհանին որ փոխեցաւ առ քրիստոս ի թվին հայոց ՈՌԾ ին,,

Գերեզմանատան չորս կողմը պատած է եղեր պարիսպ քարաշէն, որ այժմ թողած է միայն հիմունքը. գերեզմանատան հարաւակողմն, սորա և գիւղի մէջն է ,,բազարի մէյտան,, ասացեալ տեղին, ուր ձգուած են եղել բազմամարդ աւանիս վաճառաշահ կրպակները. այս հրապարակի մէջ կանգնած կայ խաչքար մի որոյ եզերքն տողեալ ,,սուրբ խաչս կանգնեցաւ հոգոյ փրկութեան Վ՝արտին,, և խաչի քառաթևի վերայ ,,թվ — իս ՈՐ — ԺԲ,,

Գիւղի արևմտակողմն՝ ձորակի վերայ ձգուած կան երեք քարաշէն ամուր կամուրջներ, երեքն ևս կիսաւեր։

Փորպաշտ.

Շ՝օռութի արևմտակողմն գարաւանդի մի վերայ ձգուած գիւղ է այս, այժմ բընակութիւն քառասնաչափ աղքատ Հայ գերդաստանաց։ Ընուն «Փորպաշտ», ըստ ոմանց է «Փարպաշտ», և յառաջ եկած իբր թէ փարայ և դաշտ բառերէն. ըստ որում գիւղին մօտ դաշտի մի մէջ կգտնուին փարայի այն է դրամի ձև ունեցող շատ քարեր։ Այս տեղ մեռաւ դեղակուր, Մաղաքիա վարդապետ Գրիմեցի։ ՟. Միքայէլ Ղամշեան սխալմամբ այս գիւղն կկարծէ լինել ի Գուգարս, այնքան դոնէ ուշ չդարձնելով, որ իւր պատմած անց.քերը Երինջակի մէջն են պատահած և ոչ ի Գուգարս։

Ա. Գ-Է՞ՐԳ ԷԿԵՂԵՑԻ.

Փոքրիկ, հասարակ քարերով շինուած. փայտաձաձք անշուք եկեղեցի մի է, գիւղի մէջ տեղն։

Ա. ՆՈՂԷ.

Յանուն Պարգարէին փոքրիկ ժառուռ մի, գիւղի արևմտակողմն բարձրացած լեռնակի գլխին, այժմ աւերակ. հին փոքրաքաշտը այժմու գիւղէն կէս վերստ հեռաւորութեամբ կանկանի հիւսիսակողմն, զառ ի վայր լեռնոտի վերայ. պահելով մինչև այսօր իւր կիսակործան աւերակներն քարաշէն. որոց մէջն է և կիսաւեր եկեղեցի մի քարուղիր և կամարակապ շինութեամբ, որոյ համար բնակչաց ասանդութիւնն կասէ ‘‘Գրանկր եկեղեցի,, և հարցրած ժամանակս պատմեցին թէ ‘‘պապենեկան լսած ենք, որ գիւղի կէսն

Գրանկացած ժամանակը էս եկեղեցին շինել են իրանց համար,, ցոյց կտային մեզ ի հեռուստ նաև ձորակի մի մէջ գտնուած գերեզմանատուն մի ընդարձակ, հանդէպ յիշատակեալ եկեղեցւոյս, և կասէին թէ ,,կէսն Գրանկի ա կէսն հայի,, թէպէտ ցանկալի էր ձորը իջնել և կարդալ արձանագրերը շիրմաց, բայց եղանակի վատութեանը պատճառաւ չկարելով, ուրիշ հնասէր անձին խուզարկութեանն կթողում։

Այդ կիսաւեր եկեղեցւոյ աւերակաց մէջ ուշի ուշով հետազօտ լինելով, միայն մէկ խաչքար գտի կիսամաշ, որոյ վերայ այս քանս երևեցաւ ,,Թ. Ա՝Ն.Օ՝. սուրբ խաչս յիշատակ է (հ) Արուանին Պ՝ազարին,,

Պ՝ան՝ Ս. Սարգիսանոցէ.

Պիւղէն չորս վերստ հեռաւորութեամբ դէպի հիւսիսակողմն, ձորակի մի ձախակողմն բարձրաւանդակի վերայ շինուած է

այս մենաստան յանուն Ս. Ստեփաննոսի. Տաճարն հասարակ քարամբք փոքրիկ անշուք և փայտաձաձք շինուլթիւն է. ունի սեղան մի և դուռն մի. շորս կողմն ձգուած է պարիսպ քարաշէն, բարձր և ամուր. արևմտակողմն պարսպի տակ ձըգուած էր խաչքար մի, որ ունէր այս հետագայ խօսքերը "ի հայրապետութեան Եղիազարու և մեր Եպիսկոպոս Մարկոս Վարդապետին Եւ Մուղդուսի Դանիէլս ձեռամբ իմով շինեցի զայս պարիսպս և զայս յիշատակին և իմ ծնողացն զհայրն իմ Ս հակն և զմայրն իմ Խուսանիկարն և վանից միաբանքն ամենեցուն բերան մի աղաղմի ասէ ի թվ. ՌՃՂՌ ին,, վանքի պարսպին տակ փոքր ինչ ցած կայ աղբիւր մի բարեհամ "նահատակի աղիւր,, ասացեալ. այս տեղ են և երկու գերեզմանք, գուցէ մինը Մաղաքիա Վրիմցւոյն լինի և միւսն Յովհան Որոտնեցւոյն, որ ըստ ցուցանելոյ պատմութեանն թաղեցաւ. առաջնոյն մօտ։ Ծերունի բնակչաց

աւանդութիւն այս մենաստանիս համար կասէ որ շատ հին է, և այս տեղ կնատէր վիճակի առաջնորդը. երբ որ (կասեն) Գրանկութիւնն Գռնա յառաջ եկաւ, Յովհան Որոտնեցին այս տեղէն գնաց Ապրակունիս, և տուրբ Կարապետի վանքը շինելով կանգնեց նրանց հակառակ։

Այս մենաստանն ունի յիսուն խալվարաչափ գետին, սեպհականութիւն. բայց անհոգ և անխնամ մնալով թուրք բէկի ձեռքն է ընկած գաղտաբար։ Մինչ տարի յառաջ տուրբ Աջմիածնի Սիւնհոդոսի հրամանաւ և թոյլտուութեամբ վանուցըս սեպհականութիւն համարուած լերան մի միջէն մերձաւոր տեղեաց բնակիչներէն երկուքը սկսան պեղել ու պղինձ հանել, բայց առ հարկի աղքատութեանն անկարող գտնուեցան շարունակելու։

Գէտաղ.

Իլանդաղուոյ արևելեան հիւսիսակողմն սեպացեալ լերան ստորոտին շինուած է

այս գիւղը. բնակութիւն քսան տուն բընիկ և գաղթական հայ ժողովրդականաց. որոնք կպարապին երկրագործութեամբ, այգեգործութեամբ, տաւարատածութեամբ, և մեղուաբուծութեամբ։ Բայց մտիկ տուած գիւղիս փառաւոր և վայելչակերտ եկեղեցւոյն, կիսաւեր բերդին, գիւղը շրջապատող պարսպին և դէպի արևելք ու արևմուտք սփռած տարածուած շինութեանց աւերակներին, հարկաւ պէտք է մակաբերել սորա երբեմնին մեծութիւն, բազմամարդութիւնն և ճոխութիւնն։ Բնիկ բնակիչք տեղւոյս պատմեցին որ ,,մենք մեր պապերից լսած ենք՝ որ էս գիւղումն եօթ հարիւր տուն ա էլած. և բոլորն էլ սովդաքեար մարդիկ, նրանց սովդէն էլել ա Ղ.ստամբօլի ու մեծ մեծ տեղերի հետ. երբոր Նադիր Շահի ժամանակը թալան տալը եսիր տանելը խստուեց թողացին գնացին ուրիշ դհովամա շատը Ազմիր գնաց, ու ընտեղ էլ մնացին,,։

Օդ և ջուր տեղւոյս շատ առող ջարար է. բնութեան տեսարանը քաղցրախորժ և զուարճալի։

Ընուն «Գեաղ» կամ «Գաղ» տեղական բնակչաց ասելովն յառաջ է եկած իբր թէ Ս. Հռիփսիմեանց մասանց և այս տեղ բերուելովն ու գաղուելովն։

Ս. Գրիգոր Էկեղեցի.

Մեծադիր, հոյակապ և փառաւոր եկեղեցի. անջնջելի վկայ տեղւոյս նախնի բնակչաց փարթամութեանն և բարեպաշտութեանն. սագաշէն տանիքն և կիսաւեր կաթուղիկէն հաստատուած են շուրջս մեծամեծ ամրակուռ սեանց վերայ *) շինութիւն տաճարին համակ ներքուստ և արտաքուստ կոփածոյ քարամբք. միայն

(*) Ինչպէս կաթուղիկէն նոյնպէս և տաճարի հարաւային որմն փլատուած են 1841 թուականի երկրաշարժէն։

տանեաց ներքին երեսն թրծաց աղիւսով. ունի սեղան մի մեծ, և խորան երկու. ունի և տանեաց մէջ դժուարամուտ պահարաններ և դարաններ, ուր մանել հընար է միայն տաճարի հիւսիսակողմն և նորան կից շինուած սենեկաց միջոցն բայց անծանօթ մարդ ամենևին չէ կարող առանց թելի կամ առաջնորդի այդ բազմապատոյտ ալուեստահնար անցքէն դուրս գալ։ Ունի այս եկեղեցի դուռն մի արևմտեան, որոյ ճակատին դրուած խաչքարի վերայ գրուած է "Այս քարս յիշատակ է Տ֊հպսի Սայիբին, կողակցին, թոռան, դստեր Աւդալի և Տ֊արիամայ թվ. ՌՃՆ" Դրան աջակողմն գեղաքանդակ փոքրիկ խաչքարին վերայ գրուած է "սուրբ խաչս յիշատակ է հոգւոյ փրկութեան Օ֊հրապին և կողակցին Դիւլխաթունին ամէն. թ. ՌՁՕ" դրան ձախակողմն գրտնուած փոքրիկ խաչքարի վերայ "սուրբ խաչս կալ օգնական հոգւոյ փրկութեան տէր Բարդուղիմէոսի որդի Ներսէսի թվ.

Ն՝,, տարև քան այս խաչ, է միւս ևս փոքրիկ՝ նուրբ փորագրուած խաչքարմի, որոյ վերայ վերատողած էր ,,նուրբ խաչս յիշատակ է Փախլաթին, Տաղմիշին. խաչնուէկէ Մկրտչին բէկ թ. Ռ՝Կ,, Ընդարձակ Տաճարիս եղած է գաւիթ փառաւոր, վայելչաձև, աղիւսակերտ տանեօք, որոյ երկու քարաշէն սներն կմնան միայն. հարաւակողմն և հիւսիսակողմն են կիսաւեր սենեակները, ուր բնակուել են ինչպէս կերևի կրօնաւորներ. հարաւակողմն եղածներն թրծաց աղիւսով են շինուած թաղակապ։

Ս. Յովհաննէս.

Գիւղի արևմտակողմն ճանապարհի վերայ փոքրիկ մատուռ մի քարաշէն, ամբողջ և անվնաս։

Նահապետ.

Ս. Յովհաննէսի արևմտակողմն Ալանդաղուոյ տակ շինուած է այս եկեղեցի փոք-

րիկ, հողաշէն և փայտաձաձք. դժուար է որոշել թէ ինչու համար "Նահատակ" անունս առած է այս եկեղեցի, որոյ ուխտաւորներն միշտ անպակաս են. եկեղեցւոյ տակէն կըղխէ աղբիւր մի յորդ. որոյ ջուրն փոքր մի գաղձ լինելով, ընդունուած է այս կողմերի բնակչաց մէջ հանքային առողջարար ջրոյ տեղ:

Անապատ.

Նահատակի արևմտակողմն Իլանդաղուոյ ստորոտին փոքրիկ բլրակի մի վերայ կան նշմարելի մնացորդք հիման փոքրիկ մատրան, և մէջտեղն կիսամաշ խաչքար մի. բնակիչք այս մատուռն "անապատ" կանուանեն. և գուցէ ժամանակին, անապատաստէր անձին ձգնարանն եղած է. սորա մօտն է բարեհամ աղբիւր մի, ուռենեօք զարդարուած որոյ ջուրն ժամանակաւ խողովակներով տարուած է գիւղերկիւղալի ժամանակներն, բնակչաց գիւ-

զիս՝ Իլանդաղլուոյ գլխին ամրացած միջոցը, այս աղբիւրներն եղած է նոցա պասուքը զովացնողն. այսպիսի աղբիւր մի ևս, որ սորա հիւսիսակողմն է, դարձեալ խողովակներով տարուած է գիւղն։

Ա. Եղէս.

Գիւղի հիւսիսակողմն երկայնած բարձը լերան գլխին կայ փոքրիկ մատուռ մի կիսաւեր, յանուն Եղիայ Մարգարէին։

Հին վանք.

Գիւղի արևմտեան հարաւակողմն, այ. գեստանեայց մէջ ընկած աւերակն կմնայ միայն եկեղեցւոյս, զոր ‘‘վանք,, կանուանեն սովորաբար բնակիչքն։

Ռէչէ գէ-ղէս.

Գիւղի բնակութեանց առաջոմն, գէպի արևելակողմն բարձրացած դժուարամատչելի լեռնակի գլխին քարաշէն ամուր պա-

ըիսպներով շրջապատուած ապաստանարանն է հին բնակչաց որք և երբեմն երբեմն ցոյց տուած են ինչպէս ծերունիքն կպատմեն, իբրեանց կորովաբազուկ անվեհեր քաջութիւններն Պարսից յարձակմանց և ապաստակութեանց դէմ, այժմ շրջապատ պարիսպն կիսաւեր է։ Բերդիս արևմտեան ծայրին փոքրիկ մատուռ մի կայ միանգամայն այժմ աւեր. իսկ հիւսիսակողմն, բերդէն քիչ մի անջատ, է դարձեալ միւս և մատուռ փոքրիկ զոր բնակիչքը կանուանեն "սուրբ Սարգիս", ուր կան քանի մի խաչքարինք առանց արձանագրոց։

Ջ-ՈՒ-Ը ՔԷ-ՂԷՈ.

Տեղւոյս այգիները ոռոգող և տնային զանազան պիտոյից համար գործածուած ջրերը աղբիւրներ են, հին ժամանակին բազմաթիւ ձեռնհաս խոջաների հոգացողութեամբ խողովակներով հեռու տեղե-

ըէն բերուած ինչպէս և մէկ երկուքի համար յիշեցի. այժմ երեք ջրամբարներ կան. մինն «Նահատակի» աղբիւրի ջրոյ առաջն, ուստի և այգիքն և պարտէզները կոռոգուին.*) մինն գիւղի մէջ տեղ, ուստի խմելու և այլ պիտոյից ջուրը գործ կածեն. և միւսն գիւղի արևելակողմն բաւական հեռի, որ յանուն շինողին կը-կոչուի «Ռաքելի գեօլ»

Այգեգործութիւնն կատարելապէս ծաղկած է նոցա մէջ ուստի և ամէն տարի այգիք առատ արգասաւորութեամբ կվարձատրեն ժիր երկրագործի քրտինքը։ Ռահատակ քաջ և զինաւարժ են գիւղիս բնակիչներն և մինչև այժմ ոչ մէկը փնատուած չէ գողի ձեռքէ, վասն զի ամէն

(*) Այս ջուրն հնումն աւելի մեծ և ընդարձակ ջրամբարի մէջ ժողոված ունենալով, գործ են դրած ջրաղաց մի բանեցնելու համար. այժմ կան միայն սրբատաշ քարերով շինուած ջրամբարի և ջրաղացի աւեր մնացորդներն։

ՀՐԱՇԱԿՈՒԱԾ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԷ Ի ՎԵՐ ՄԻՆՉԵՎ ԱՅՍՕՐ։

Ջ-ԱՐՂԱՅ (ՀԷՆ).

Հայկեան պատմութեան մէջ այնքա՛ն նշանաւոր և փառաւոր տեղ գրաւող հռչակաւոր, հինօրեայ և փարթամ քաղաքն Հայոց, Երասխ գետի եզերքին, Երընջակ և Գողթն գաւառաց սահմանակցութեան մէջ. որ և ամեն դարուց մէջ զլխովն անցած անց.քերովն, կամ մեծագործ և անուանի բնակչաց համբաւովն ամենի հետաքրքրութիւնն և ակնածութիւնն կշարժէ։

Այս տեղ ձեռնադրեց Բարդուղիմէոս առաքեալն իւր Կոմսի աշակերտն Յեպիսկոպոսութիւն Գողթան. այս տեղէն յառաջ եկին այնքան նշանաւոր մարդիկ, որոց ոմանք իւրեանց նիւթական կարողութեամբն մեծամեծ ձեռնարկիների մէջ

սխրացան. և ոմանք ազգային հանրական գործերի մէջ փայլեցան։ Այս տեղ այնքան ծաղկեցաւ և զարգացաւ վաճառականութիւնն, որ Հ՝ահաբբասայ հեռատեսութիւնը դրդելով յամի 1605 անխնայ տանջանօք և չարաչար տառապակրութեամբ գաղթել տուաւ բնակիչքը միւս գաղթականներէն զատ, Պարսկաստանի մէջ սոցա ձեռօք առուտուրն ծաղկեցնելու համար։ Ռուն Ջ՝ուղայեցւոց շառաւիղք էին և մեծանուն իշխանքն Լ՝ազարեանք ի Ռուսաստան։ Ս. Ն՝ջ Միածնի շինութեանց շատերը դեռ մինչև այսօր Ջ՝ուղայեցւոց յիշատակովը կփայլին, ևլն։

Այժմու նորաշէն Ջ՝ուղայն, որ հնէն վերատ մի հեռացած է, կբաղկանայ յինանաչափ ±այ գերդաստաններէ, և կանկանի դարձեալ Ներասխայ հիւսիսեզրը, լեռներով երկու կողմէն շրջապատուած դիւք տեղ մի. բնակիչքն ըստ մեծի մասին գաղթականք են. իսկ փոքր մասն ինչպէս իրանք կասեն, ճնացորդ են առաջնոցն, ո-

բոնք գաղթելու միջոցն եօթն տան չափ կարոզացած են հնար գտնել ազատուելու, և այժմ բաւական բազմացած են. սոցա լեզուն միանգամայն կատարելի եկաց և «Խախջևանի կամ Երևանայ բարբառէն զօ. «երթամամ, երթամաս, երթամայ, երթամանք, երթամաք, երթաման. ասումամ, ասումաս, ասումայ, ասումանք, ասումաք, ասուման,, ևն։ Սոցա ասելովն, իրանց մէջն դեռ կան շատ-ւիղք Խոջայ Խաչիկի, հոսանուցն Լ-ազարեան տոհմի։

Ս. Գ-Էորգ.

Նոր շինուած գիւղի հիւսիսային ծայրին է այս եկեղեցին յանուն Ս. Գ-Էորգայ, հին Ս. Գ-Էորգ եկեղեցւոյ պատուոյ համար, որոյ աւերակներն առաջին Ջ-ուղայի մէջն են. շինութիւնն հասարակ և անշուք, տանիքն փայտածածք. աւազանի առաջի պատին մէջ ազուցած մար-

մարեալ քար մի կայ հնէն վիսխատրուած այս տեղ, որոյ վերայ վերատրուած է «Սուրբ աւարգանս յիշատակ է Մխիթարի որդի Ավանէսին ի յարկս Սրբոյն Գէորգեայ զօրավարին ի թուին ՌՃԼՀ.»:

Կամար՝ չՀ. ամ՝ ալեայ.

Հարաւակողմն գիւղիս Երասխի վերայ շինուած է եղել չորս ամրապինա կամարի վերայ կամուրջ մեծ և ընդարձակ կոփածոյ քարամրջ. իսկ այժմ միայն չորս սիւներն կմնան կանգուն: Այս կամրջի շինութիւնն աւանդութիւնն կը ժուարանալ որոշ ժամանակի և անձին տալ. միայն նորա կարծանումն կասայ ընչաւէտ պատաւ կնոջ մի, որ ելօթն տարուան հին քացախ վերան լցնելով քանդել է:

Սուրբ Աստուածածին.

Այժմս գիւղս արևմտակողմն, և նորան կից՝ է աւերակն եկեղեցւոյն յանուն

Տիրամօրն. որոյ արևմտեան որմն մնայ կանգուն, կոփածոյ կարմիր քարամբք գեղեցկաշէն. եկեղեցւոյ չորս կողմն է գերեզմանատուն. գերեզմանաց շատը հին, որոնք զարդարուած են նուրբ փորագրած մեծամեծ կանգուն խաչքարերով. միայն մէկի այս թուականն՝ որ բոլորի մէջ հինն երևեցաւ, կառնումք այս տեղ. Խաչի քառաթեւի միջոցները գրուած էր "$\frac{\text{Թ}}{\text{Ի}}\Big|\frac{\text{Ո}}{\text{Ը}}$" և ստորև "Ասուրբ Խաչս յիշատակ Պ՝ արդաշին, Պ՝ աստֆին, Խաթունին հոգուն":

Ասուածածնի հիւսիսակողմն Երասխի եզերին բարձրացած բլրակի գագաթին կան կիսաւեր մնացորդք բազմաթիւ քարուկիր շինութեանց — սենեկաց և պարբսպաց, որոց մէջ է և մատուռ մի այլ՝ փոքրիկ, քարաշէն, թաղակապ և անփնաս, դարձեալ Տիրամօր անուամբ, որ ունի և սեղան փոքրիկ: Դրան հիւսիսակողմն արտաքուստ որմոյն մէջ հաստատած մեծ խաչքարի մի վերայ վերտողած է "Ասուած ողորմի Ազամալին", միւսներն

եղծեալ. սրա աշխարհին փոքրիկ խաչ-
քարի մի վերայ "Խաչս յիշատակ է
Ի՛կրաշին Ստուած . . . . թվ.
ՌՆԼ". սեղանոյ ձախ սեան վերայ դըր-
ուած խաչքարի վերայ "Խաչս յիշատակ
Սահակին". թուականն եղծեալ։ Տաս-
բան արևելակողմն գտնուող միապատակ
ընդարձակ ժայռը կըշջապատէ քարաշէն,
ամուր և բարձր պարիսպ, որոց համար
կասեն "Ստուածածնի բաղ". բայց հա-
ւանական չէ բնաւ ապառաժ բլուրի դըր-
խին այդչափ, որքան ժամանակին պատը-
պարանք լինելն։

Ստուածածնի արևմտակողմն միապա-
տակ բարձրացած լերան գլխին կան դեռ
ճանապարհք կիսաւեր պարսպաց, զոր կա-
նուանեն "Զուզայու բերդ", կամ
"Դարվազների գլխի բերդ", որ յիրաւի
անմատչելի պատապարան մի եղած է ժա-
մանակաւ. "Դարվազայ" կապուի բեր-
դի. և Նրասխի մէջ տեղն փակող բարձր
պարապատուր դարբան, որով փակուած

է եղել դէպ ի բուն Զուղայն տաճարը Ճանապարհն. այժմ սորա աւերի միացորդքն կնշմարուին։ Մեծ դարբասին կամ դրանց առաջուին Երասխի մէջ կայ այժմ մեծ բեկոր ժայռի, և նորա գլխին կոփածոյ քարամբք կանգնած շինութեան նշխարք, սա ինքն է, որ բնակչաց մէջ կասուի "Շահ-թախտը", և տեղական աւանդութիւնն կպատմէ որ սորա մէջ (շինուածոյն) Խոջայ Խաչիկն Շահաբբասը մեծարելով հացկերութիւն, հաներ է ի սպաս ոսկի խոզոր, ոսկի խնձոր և հաւկիթ, ու այլ տեսակ արուեստաշէն ոսկենութիւն մրգեղէններ. Շահաբբասն նախ բնականն կարծելով ձեռք է պարզեր դէպ ի խոզորն, բայց երբոր իւր վէզիրի ազգարարութեամբն կհասկանայ առած սխալն, զարմացած այսքան փարթամութեան և յառաջադիմութեան վերայ, միտքը կգնէ դաղթեցնել Զուղայեցիքը, ինչպէս և արար։ Շահ-թախտի գանուած տեղն Երասխայ Ջրոյ պատոյտ առնելու

պատճառաւ կկոչուի ,, Պատան ,, . Նոյն
աւանդութիւնն կասէ դարձեալ , թէ
Ջուղայեցւոց դաղթած ժամանակը Շահ
-աբբասի հրամանաւ , յիշատակեալ Ս-
տուածածնի բանալիքը ձգած են այս
Պատանի մէջ , նշան՝ որ Ջուղայեցիք
մաքնեալէն հանեն միւսանգամ նորա դու-
ռըն բանալու։ Շահ-Թախթէն քառորդ
վերստ հեռաւորութեամբ Երասխայ հիւ-
սիսային եզերքը տարածուած երկայնա-
ձիգ հովտին մէջ կանկանին բուն Ջու-
ղայի աւերակներն, այցելուի դառն զգաց-
մունքը շարժողներն, բոլորն քարուկիր,
և շատերն փառաւոր շինուածոց նշխարք,
ինչպէս շքեղ եկեղեցեաց , մեծամեծ
տանց, ընդարձակ կարաւանոցի, և էն։
Աւերակաց հանդէպն Երասխայ միւս
եզեր վերայ է ամայի՝ բայց ընդարձակ և
քարաշէն կարաւանոց (քարվանսարայ)՝
նախնի մեծափարթամ կարաւանի իջևա-
նը. նորա մօտն և եկեղեցի մի, զոր ,, Գը-
ռանկի ,, կանուանեն բնակիչքն։ Այսպի-

սէր մի եկեղեցի էս «Գրանկէ» աստուծոյ Զաւրոյն առերեսաց մէջն է։

Էջ գէրէղմանատան Զաւրոյն.

Բուն գիւղն արևմտեան կողմն, Երասխայ հիւսիսային եզերքին կանգնած գեղեցիկ դամբարան, Զաւրոյնս երբեմն բազմաթիւ մարդ, ծաղկեալ և հարուստ ազգ մը և վիճակին յաւերժական քարոզ, և աշխարհս աքսանչելի ուսումնարանն մինչև Երբոր առաջին անգամ մարդոց հայեացքը ընկնի այս տեղի վերայ, անշուշտ պիտի ասի տակաւ և կարծէ որ բազմաթիւ զօրք ապառազինուած կանգնած են Երասխայ փրփրադէզ ալեաց հետ պատերազմելու. վասն զի անթիւ են մեծամեծ ու կանգուն խաչքարերն, ամրաձգ ընդարձակ լեռնոտի երեսին. (զեռ շատերն հնութեան երեսն խախտուել կործանուել են). վա՜յ, սիրելի ընթերցող, չպիտի կարողանամ քեզ համոզել լաւապէս թէ՝ մարդ յիրա-

ձի կամիշի կշռուտքի միանգամայն, տեսնելով այսքան գերօրինակ կառուցելագործուած և աքանչելարուեստ նուրբ քանդակագրութիւնները *):

Խոցմամբ ոնծաւ և տխուր զգացմամբ պատելով մեջներն, հարկ համարեցի եօթնի չափ միայն տողանոգրեր տեսնելու. առաջինը քաղաքապետին տեղւոյն Խոջայ Խաչիկոյ, որոյ համար բնակիչք պատուելի էին նել հաւն Ղազարեան տհիմն։ Պատուելն որ կանգնած էր ամբեւնացած մարմնոյ վերայ, ունէր միջակէտին զեղաքանդակ բարձր խաչքար, որոյ բուն վերին ծայրի վերայ երկու անջատ տողերով գրուած "Սուրբ խաչս բարեխաւս առ Քրիստոս մեզ և անուանի քաղաքապետս Խաւջայ Խաչիկին որ ի ՌՈՂՈ թուա-

(*) 1871 թուականին այս Խաչքարերէն չորս հատ որոշուած՝ բերուեցան Նախիջևան քաղաք, անտի Տփխիս արքունի թանգարանը հասուցանելու համար։

կանխս Հանդիսաւ առ Պրիսատոս ,, . իսկ խաչի պատուանդանի վերայ ‘‘Խաչս յիշատակ Խաւարչայ Խաչիկին և կողակից Մարիամին ,, :

Է. ‘‘Խաչս յիշատակ է Մարիփարին հոգւոյն թ. ՈՒԽԳ ,, :

Գ. Խաչքարի վերին ճակատին ‘‘Սիրբական Գրիգոր թ. ՈՒԽԹ ,, . և պատուանդանին ‘‘Սուրբ խաչս բարեխաւս առ Պրիսատոս մանուկ Գրիգորին թ. ՈՒԽԹ ,, :

Դ. ‘‘Թ. ՈՒԽԼ խաչս յիշատակ է Գուհարի հոգւոյն ,, :

Է. ‘‘Սուրբ խաչս յիշատակ է Ստեփանոսաճատուլ ին թ. ՈՒԽ. ԼԷԼ = ԿՁՁ ,, :

Զ. ‘‘Սուրբ խաչս յիշատակ է Սեւախին. թվին ՈՒԽ.Օ ,, :

Է. ‘‘Ի թվին ՈՒԽԳ սբ խաչս բարեխաւս առ Տէր Սէրանին հոգւոյն ,, :

Այս վերոգրեալ սարքը հարուստակոզմն, Երրասխայ բուն ափին է մեծ և գեղեցկաշէն բաղանիք. իսկ արևելակոզմն, մնացորդք կոփածոյ քարամբք և կրով

կառուցեալ Ջրաղացի։ — Այսքան բազմութիւն գերեզմանները, յիրաւի կարդացողներն այն աւանդութիւնն, որ հին Ջուզայի բնակիչքը կդնէ տաճարիս հաստատելի, և Շահաբասի տարած դաղթականների թիւը ի համարէ քառասուն հազար։

Կուզիկ Տաճիր։

Գերեզմանատան արևմտակողմն լիրան զառիվայր ստորոտին դէպ ի վեր Վանատրիկի վանքը տանող ճանապարհի աջոյ թևի վերայ կայ փոքրիկ կարկառ մի քարանց "Կուզիկ Տաճիր քար", ասացեալ. աւանդութիւնն կպատմէ որ կուզիկ պատառ մի Վանատրիկի վանուց մարկարտներէն տոխ գողցած լինելով, այս տեղ հատած կ.քարտնայ. հեղինակն ևս՝ որ նորա քովէն կանցնի, կասուի "Կուզիկ Տաճիր չայ"։

Ամենափրկիչ.

Ոնթի զմեռեալսն արևելակողմն, բարձր լերան մի գագաթին է. քարուկիր և ամուր շինուածքն միջակատիր մատուռն մի՝ որ կոչի «Ամենափրկիչ», կամ «Ամենափրկչի վանք». շինուածն համակ կոփածոյ քարով է և կամարակապ. ունի փոքրիկ կամթուղիկէ, սեղան մի, և երկու խորան, և գրուն մի բարձր և լայն. մէջ տաճարին սպիտակաւազաղծ. գրան աջակողմն գանուած խաչքարի մի վերայ վերագրած է «Սուրբ Խաչս բարեխօս առ Քրիստոս փրկութեան Ի-էոդոսին թ. ՌԽԳ.», միւս կողմն ևս խաչքարի վերայ «Խաչս յիշատակ է Խոջայ Ի-էդլուսի, Խոջայ Ջան ագա բէկին (երկու տողն անորոշելի). Խոջայ Ասատուր բէկի թ. ՌԽԲ.»:

Ոնթի մեռեալսն արևմտակողմն և գաւիթ փոքրիկ, բայց վայելուչ, երկու սեղանց վերայ թաղ ունած, որոյ մէկ երկու սեղն այժմ քայքայեալ: Տաճարի

հրա կողմն քաշուած է պարիսպ բարձր և ամուր, քարուկիր շինուելեամբ, որ մէջ առած է արևմտակողմի կամարակապ քարաշէն խցերն կրօնաւորաց, և միւս կողմերի շէնքերը, փռատուն, հացատուն, ամբար, և այլ զանազան մեծ ու փոքր անհեւանները՝ բոլորն քարու կիր շինուելեան

Ասանդուելեանն կասէ որ Ջուզայեցոց գաղթած ժամանակը Շահաբասն նոցա սիրատն գրաւելու, մանաւանդ թէ խնդիրներն յարմարելու համար այս Սմենափրկիչ վանքի հոգէն և քարերէն (ինչպէս և Ջիւծնի) առնել տալով ուզելով Սպահան, այն ուզ մի և նոյն անուամբ վանք շինել տուած է. և այս այն Սմենափրկիչ կիշ վանքն է Նոր Ջուզայի, ուր կնատի ուզուն Սուաջնորդն. և այդ վանքին միայն Շահաբասն ի շնորհուկս Ջուզայեցոց իրաւունք տուած է զանդակ հարկանել :

Տաճարի և հարաւային պարսպի մէջ ուղղ կար մահարձան մի փառաւոր —

զերգաքանչակ խաչքար. բայց զրերն մաշուած էին զրեթէ խարտուռ. Նոյն պարապի արտաքին Ճակատի վերայ երեք տող կայ մին մի մի փոքրիկ խաչքարքնք և ունէին յիշատակարան, բայց բարձր լինելուն, և մեր հնար չունենալուն համար, բայց ի այս խօսքերս "խաչս յիշատ", պ ժուարացանք ուրիշ բան մի որոշել. ուստի և կրթողումք ուրիշ հնասիրի աշխատութեանդն։ Փոքր ինչ անջատ հարաւային պարարքանն, արտաքուստ կանգնած էր մեծ և հին խաչքար մի, որոյ Ճակատին գրուած "Կանգնեցաւ խաչս բարեխօս Իգնատիոս ար . . ինին Թ. ՀՂՀ". Նոյն հարաւային պարարքի տակին սփռուած են մնացորդք աւերակաց, բոլորն քարաշէն, և դոցանելքևը բազմաթիւ գերեզմանք. որոց շատերը դեռ կանգուն կպահեն չ.քնոց. և փառաւոր և մեծամեծ խաչքարերը։ Այս գերեզմանատան մէջ և սրբէ դ ի արևելեան հարաւակողմն կանգնած կան քանի մի հատ թաղակապ քարաշէն մատուռներ,

(մի քանին աւելի), կրելով իւրեանց ծոցին խաղաղացած մարմնոց շիրիմներ։ Այս գերեզմանատունն բոլորն վանուցս միաբանիցն է, և եպիսկոպոսաց ու վարդապետաց շիրմաց շատերի վերայ մահարձանների — աքանչելարուեստ փորագրած մեծամեծ խաչքարների վերայ նկարուած է պատկեր կրօնաւորական, փիլոն վերան և ինդուզն գլխին։ Դռցա մէկի վերայ արձանագրած էր "Խաչս յիշատակ Մաթէոսին և ծնողացն Թանդոսին . . . . Թ. ՋՂԹ,,. երկրորդի մի վերայ "Գանդնեցի Ս. Խաչս փրկութեան հոգւոյ տէր Հայրապետ եպիսկոպոսին և իւր ծնողաց Թ. ՋՂԳ,,. երրորդի մի վերայ "Խաչս յիշատակ էԽաչատուր աբեղին վարդապետին տէր Պետրոսին և ծնողաց Մերուբին Ամուսնին Թ. ՋՂԹ,,. չորրորդի մի վերայ "Խաչս յիշատակ Մանուէլ աբեղին Թ. ՋՂԹ,,. կային և շատերը, որոնք սոցանէ աւելի զարմացուցիչն էին իւրեանց հնութեամբն և ճարտարարուեստ փո-

բաղրուխեամբ, բայց ափսոս անվերծանելի մնացին մաշուած արձանագրութիւնք։ Երևմտակողմն գերեզմանատան կրկէս աղբիւր մի հանկարծուր՝ շրջապատուած կանոնաւոր քարերով. այս ծառերն բնակիչք Ջուղայի կկոչեն "Վանքի բաղչայ", և կասեն թէ որ ձեռն տայ այդ ծառերին՝ կպատժուի։ Այս աղբիւր ջուրն լերան մէջէն հատուած անցքումն, խորդուվարներով տարած է Երասխայ հարաւային եզերքին տարածուած, վանքի այգին ոռոգելու. այդուհետ ցանկի մնացորդքն միայն կտեսնուին այժմ. իսկ անուն այգուս բնակիչք կտան "Վանքի ծակուտայ բաղ", Ջրանցքի անունէն առած։

Ջուղայի հանդէպն և մօտն է "Պարուղաղ", կոչեցեալ բարձր և ընդարձականիստ լեռն, ուստի դուրս կգայ ընտիր Ջրաղացաքար, որոյ վերայ գլխաւոր աշխատողներն Ջուղայեցիք են։

Յամսդինն Դոր.

Յաւզայէն երկու ժամու ճանապարհ հեռի գէպ ի հիւսիսկանկանի այս գիւղն, զիւր տեղւոյ վերայ, բնակութիւն քառասնաչափ Մահմետական գերդաստանաց, որոնք կպարապին երկրագործութեամբ, բայց աղքատ են և սակաւաշխատ։ Այս գիւղիս մօտն է "Ալի-Մամատ", կոչուած նուիրական ձորակը, որոյ մէջ կան սուրբ համարուած ծառեր, ուր զոհիւք ուխտի և երկրպագութեան կգան Յամսդիններ։ և այդ ծառերի մէկ ճիւղին անգամ ձեռն տալ չհամարձակին։ Յին Յամսդինն Դորի արևելակողմն է հինգ վերստ հեռաւորութեամբ, ուր կան շատ աւերակներ, որոց մէջ և մնացորդք թաղակապ քարաշէն բաղանեաց։

Ղ. գլուխ.

Յին Յամսդինի արևելակողմն և սահմանակից, Երնջակ գեղի վերայ ձգուած

փոքրիկ գիւղ մի է, մօտ ժամանակի հաստատած բնակութիւն տարնութն տան, որոց երկուքն Հայ, մնացածն Պահմեան-կան. գիւղիս հարաւակողմն կտարածուին ընդարձակ լերինք և բլուրք, ուստի կելանէ ջրապացաքար: Ընուն "Գ՝զլձա" առնուած է հարաւակողման բլրակաց հողի կարմրութենէն: Գիւղիս արևմտակողմն՝ Ներնջակ գետի ափին է վէմ մի մեծ "Պ՝անաքար" ասացեալ, և ինչպէս կերևի՝ սահմանագլուխ եղած է Ս. Կարապետի կալուածոց:

Ընտանի.

Ապրակունիսի արևմտակողմն վեց վերստ հեռի կանկանի այս աղքատ գիւղ, բնակութիւն վաթսուն գերդաստանաց, որոց կէսն թուրք. Հայք գաղթականք են Պարսկաստանի և ունին փոքրիկ անշուք եկեղեցի մի: Շատ արդասաւոր է այս գիւղի հողը, և բնակիչք նշանաւոր են մրգասատան (բոստան) մշակելու մէջը:

Կոնոտ.

Երազինի հիւսիսային արևմտակողմն կէս ժամ հեռի կանկանի այս գիւղ՝ բնակութիւն երկհարիւրաչափ գաղթականաց գերդաստանաց. խիստ արգաւանդ է նոյնպէս և տեղւոյս հողը, բայց ջրոյ սակաւութեան պատճառաւ չի կարող աշխատասէր բնակչաց աւելի միջոց տալ վաստակելու, որք ընդհանրապէս ժրաջան են, ջերմեռանդ և հաւատաշատ, մինչեոյն ժամանակ և խիստ նախապաշարեալք և արբեցողք, և գլխաւոր ըմպելին սոցա Գողթան գաւառի թթի օղին է. մէջերնին կան բաւական հարուստ գերդաստանք, և շատերը կպարապեն նաև առևտրով. ունին եկեղեցի մի հասարակ փայտաշէն ծածք։ 1871 թուականի խօլերայով այս տեղ մեռան եօթանասուն անձինք։

Խաչափարախ.

Ապրակունիսէն ժամու կիսոյ ճանապարհ հեռի դէպ ի հիւսիս թերակղզւոյ պէս երկք կողմէն լեռներով և բլուրներով շրջապատուած ընդարձակ դաշտի մի մէջ շինուած է այս գիւղն, բնակարան քառասուն տան Մահմետականաց, որոնք կպարապին տուարածութեամբ և երկրագործութեամբ. հին Խաչափարախը նորի արևմտակողմն, երկք վերստ հեռու կանգնի, պահելով ցարդ բազմաթիւ շինուածոց աւերակներն. և երևի թէ ջրոյ նուազութեան պատճառաւ անմարդացած է. նոր գիւղն ունի աղբիւր մի, որոյ ջուրն ժողովելով լճակի մէջ գործ կը դրուի ըստ պիտոյից. գիւղին մէջաեղ կանգնած է հողաշէն բուրգ մի՝ որ շատ հին չերևի. այս տեղէն մոխիկ տուողին չ.քնաղ տեսարան կընծայեն Մասեաց ապիտակարիտառ գագաթը, և Նախիջևանի այգեստանեակք: Ընտնա "Խաչափա-

բախ,,՝ խաչ և փարախ բառերը արտասա-
նելով, զուցէ ունի իւր մէջ այ կնանքի
կամ անց.քի մի՝ այժմ անկատարացած յի-
շատակարան։ Լսած լինելով որ այս կոզ-
մերի Վահմեաթականաց աչքին ակնածելի
և նուիրական ուխտատեղ մի կայ ,,Ղաա-
բի—քեաբ,, անուանով, կամեցայ տեսանել.
ուղղելով ճիշդ ընթաց.քը դէպ ի արևելք,
և չափելով բլուրներն ու ձորակները,
հանդիպեցանք փոքրիկ բլրակի մի, որոյ
վերայ կար ահագին քարակոյտ, և նորա
մէջ բուսած գժնիկ ծառ մի կարճահասակ,
գոյնզգոյն հանդերձից կտորներով ծան-
բաբեռնած. հարցմունք արած ժամանակս
ասեցի տեղական ազանդութիւնն թէ սա
ճգնաւորաց շան գերեզման է. երբեք սուրբ
մարդիկ փախչելով Լանկթամուրի ապ-
պատակաւորաց երեսէն, ամրացած են
սուրբ այրին մէջ (որոյ համար պիտի խօ-
սինք). իսկ նոցա արդար շունն մնալով
այս տեղ, սպանուել է և թաղուել, որ
մինչև ցայժմ ցոյց տուած է և ցոյց կտայ

զօրութիւններ, մանաւանդ ջերմ և տենդ
փարատելովն. իսկ այն դժնիկ ծառն, որ
կայ այժմ, առժամայն բուսած է արեան
թափած տեղն: Այս տեղէն փոքր մի դէպ
ի վեր բարձրանալով երկայնաձիգ անձուկ
հովախ հանդիպեցանք, երկու կողմէն միա-
պարզաղ ահռելի ժայռերով շրջապա-
տուած, այս է դէպ ի յիշատակեալ ոսխ-
տատեղին տանող ճանապարհն, որոյ վերայ
շատ տեղ տեսանք կիսաւեր որմունք, և
ի տեղիս տեղիս շուք ընծայող կանաչա-
զարդ թթենիք և պօսիք. բաւական ուղի
հատանելով հովախս միջոցն տեսին յան-
կարծ սարսափելի այրեր և խառնչներ,
ուր տեղ և գաղար առին. ձախ թեւոյ
վերայ կար քարաշէն պատ մի, որ կշրջա-
պատէր բարձր ժայռին մէկ խառոչը, ու-
նելով դուռն մի, մտին հետաքրքրու-
թեամբ ի ներս և տեսին թաղակապ
փոքրիկ պատուհան մի երեք կանգուն
բարձրութեամբ և երկու լայնութեամբ,
միջը ադուցած հաւատարիչսի մարմար-

եայ քար գեղեցիկ վերատոպած Պարսկե-
րէն լեզուաւ, որ Պարսիկ ախուռնտի մի
ասելովն Պ. ուրանի մէջէն բերած Հաստած-
ներ է. զուցէ անձնասիրութիւնն սուխ-
պած լինի ոգէտ ախուռնտին ինձ այդ ասե-
լու, բայց ես չկարացի կարդալ, և ոչ օրի-
նակել, որովհետև օրն տարաժամ էր.
նորա մօտ գեռինը ընկած կային և երկու
կիսաբէկ քարինք, նոյնպէս Պարսկերէն
արձանագրութեամբ. այս տեղ ամրացած
և պատապարուած են յիշեալ երեք ճըգ-
նաստան անձինքն, որք ըստ աւանդու-
թեանն երեք հարիւր տարի շարունակ
քնած մնալէն յետոյ, զարթնել գնացել
են քաղաքը և հարցրել իրանց վաղան-
ցիկ ծանօթները: Պան և սորա հիւսիսա-
կողմն ուրիշ այրեր, որք ունինն համանապէս
և ուրիշ նոր իրական նշանակութիւններ.
սոցա մէկի մութ անկիւնին մէջ տանիքէն
ժողոված ջուր կկաթի այնքան նուազ և
ծանր, որ հազիւ ժամ մի ներքևը կանգ-
նողի վրէն ընկնի կաթ մի, այս պատճա-

ռաւ առել է այլ նշանակութիւն. “Ով որ սրտին խորհուրդ ունենայ, կասեն առեղացիք, կերթայ այս կաթանքի տակ կը կանգնի. եթէ ջուրը կաթեց վրան, ասել է որ խորհուրդը կիկատարուի,,։

ԿԱՐԵՒՈՐՔ.

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
Ե	8	որոնք . . .	որուն
Զ	3	բնիկ գաղթ. .	բնիկ և գաղթ.
,,		Սեղրակեանց	Սեղրակեան
3	8	տամոն . .	դամոն
,,	17	գրեթէ տես	դրեթէ շատ տես.
10	11	մածուվի . .	մածունի
12	13	վերջնոցն . .	վերջնոյն
13	14	դդզմամբ . .	դդշմամբ
46	5	ցիցն . . .	ցնցն
62	18	Հաւկաւրթ .	Հաւկրթ
64 - 65	22 - 18	գնացել . .	ջանացել
81	8–9	անանբաղդ .	անբաղդ

89 15 Հեռի . . Հեռի։ Ըստ պատմելոյ Ստեփաննոսի Օրպէլեան, այս ամրոցն, Սիւնեցի Սիսակազարմ իշխանաց մէկի կինն, Երնջիկ անուն՝ է շինած, որոյ անուամբ և կոչուել են բերդն և գաւառն։ ,, Իսկ մի ոմն ի կանանց նոյն նահապետացն Երնջիկ անուն, շինէ և զանհնարին ամուրն Երնջակ. և յիւր անուն բերդն և գաւառն կոչի Երնջակայ. և գնեն ի նմա տուն զանձու և հարկաց աշխարհին ,, ։ (Տես Պատմ. Նահանգ. Սիսական, արար Ստեփ. Արքեպ. Սիւնեաց, ի լոյս ընծայեաց Կ. Վ. Շահնազ. Փարիզ, 1859. Հատ Ա. գլ Գ. երես 52)։

91	6	վարոցնելով .	վարոցներէն
128	9	,, ուրելոյ	...ուրելոց